ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ    ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## (Ուսումնամեթոդական ձեռնարկ)

Ե Ր Ե Վ Ա Ն
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 159.922.4:316.77(07)
ԳՄԴ 88.542.5+88.501g7
Հ 177

Երաշխավորվել է տպագրության

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի
գիտական խորհրդի կողմից

Հեղինակներ՝
Նաիրա Հակոբյան (հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)
Աննա Խաչատրյան (հոգեբանական գիտությունների թեկնածու)
Խմբագիր՝ Օֆելյա Ավագյան

Հակոբյան Նաիրա, Խաչատրյան Աննա
Հ 177 Միջմշակութային հոգեբանություն: Ն. Հակոբյան, Ա. Խաչատրյան.- Եր.: Տիր հրատ. 2021.- 248 էջ:

*Ուսումնամեթոդական ձեռնարկի նպատակն է ներկայացնել միջմշակութային հոգեբանական հետազոտության մեթոդաբանությունը և բազմակողմանի վերլուծության ենթարկել էթնոկրոնական ինքնության էությունը և բաղադրապարրերը, որոնց միջոցով հնարավոր կլինի ներկայացնել խնդրի սոցիալ-հոգեբանական կողմը և դրսևորման առանձնահատկությունները: Ձեռնարկում տրվում են միջմշակութային հոգեբանության դասավանդման առանցքային դրույթները, ուսումնասիրման տեսամեթոդական հիմքերը, ինչպես նաև՝ փորձարարական կոնկրետ հետազոտության օրինակով ներկայացվում են մեթոդական գործիքակազմն ու վերլուծության արդյունքները: Ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է միջմշակութային հոգեբանության հիմնահարցերն ուսումնասիրող մասնագետների, ուսանողների, ինչպես նաև՝ հետաքրքրություն ունեցող լայն շրջանակների համար:*

ՀՏԴ 159.922.4:316.77(07)
ԳՄԴ 88.542.5+88.501g7

ISBN 978-9939-865-87-4

© Հակոբյան Նաիրա Ռաֆիկի, 2021
© Խաչատրյան Աննա Գևորգի, 2021
© «Տիր» հրատարակչություն, 2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ........................................................................................ 5

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ........................................................................................ 8**

Մշակութային հոգեբանության և միջմշակութային հոգեբանության հիմնական բնութագրերը ........................................................................ 8

Օտարի ընկալումը ........................................................................14

Մենք-Նրանք հակադրությունը ........................................................16

Վերլուծության անհատական մակարդակ .........................................19

Միջմշակութային հետազոտության պլանավորումը ........................ 24

Միջմշակութային հաղորդակցման հմտությունները........................ 26

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ34**

Միջմշակութային հետազոտության առանցքային եզրույթները .................. 34

Պրիմորդիալիստական մոտեցումը .................................................. 44

Ինստրումենտալ մոտեցումը .......................................................... 49

Կոնստրուկտիվ մոտեցումը............................................................. 50

Էթնոկրոնական ինքնության եզրույթը............................................ 52

Էթնոմշակութային սոցիալականացման եզրույթը ............................. 62

Հասկացությունների բառարան ........................................................ 78

**ԵՍ-ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ .......................... 85**

Էթնկական Ես-պատկերի բնութագրումը......................................... 85

Էթնիկ ինքնության բաղադրիչները ................................................. 89

Էթնիկ ինքնության տեսամեթոդական մոտեցումները........................ 96

Կրոնական Ես-պատկերի բնութագրումը.........................................103

Ես-պատկերները և տարէթնիկ մշակութային ինքնությունը....................... 118

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ......136**

Կիրառված մեթոդների նկարագիրը և հիմնավորումը...............................136

Փորձարարական հետազոտության արդյունքները .................................143

Ես-պատկերների համահարաբերակցական վերլուծության արդյունքները 179

Էթնոկրոնական ինքնության ձևավորմանն ուղղված մեթոդական հանձնարարականներ....................................................................................190

**ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ ............................194**

«Էթնիկական նույնականության տիպերը» մեթոդական մշակում .............194

«Էթնիկական աֆիլիացիա» մեթոդական մշակում ..................................196

«Էթնոմետ դիրքորոշումների ախտորոշումը բաց հարցերի միջոցով» ........197

Էթնոկրոնական ինքնության բաղադրիչների նկարագրություն................ 202

«Էթնիկական և կրոնական ինքնության ախտորոշում» մեթոդիկա ........... 204

«Կրոնական Ես-պատկեր» մեթոդիկա.................................................. 206

«Ո՞վ եմ ես» մեթոդական մշակում......................................................... 209

Էթնիկ պատկանելիությամբ պայմանավորված զգացմունքների էքսպրես-գնահատման սանդղակ.....................................................................211

Էթնիկ ինքնության արտահայտվածության............................................. 212

էքսպրես-գնահատման սանդղակ .......................................................... 212

Էթնիկ ինքնության դրականության և անորոշության գնահատման մեթոդիկա ........................................................................................... 213

Էթնիկ ինքնության արտահայտվածության չափման Ջ. Ֆիննի մեթոդիկա. 215

Երեխաների և դեռահասների էթնիկ ինքնության հետազոտման O.L. Ռոմանովայի սանդղակ-հարցաշար...................................................... 217

Տարէթնիկ միջավայրում անձնային առանձնահատկությունների գնահատման Պիբոդիի մեթոդիկա ....................................................... 220

**ՎԵՐՋԱԲԱՆ ....................................................................................222**

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ...................................................................223**

# ՆԱԽԱԲԱՆ

Մարդկության զարգացման ներկա փուլում, երբ առկա են սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական աննախադեպ իրողություններ, համաշխարհային հանրակցության ճգնաժամ, ներէթնիկական և միջէթնիկական տարաբնույթ կոնֆլիկտներ, խոշորամասշտաբ միգրացիոն գործընթացներ, անձի և էթնիկական, մշակութային խմբերի, էթնիկ ինքնության և արժեհամակարգի ձևավորման, պահպանման և ամրակայման հիմնախնդիրները դառնում են օրակարգային:

Անձի էթնոմետ արժեհամակարգի, ինքնագիտակցության, էթնոմշակութային նույնականացման և էթնոկրոնական ինքնության հիմնախնդիրները այսօր արդիական են աշխարհի շատ ու շատ ժողովուրդների համար և խիստ հրատապ նաև հայ էթնոկիրների համար թե՛ Հայաստանում, և թե՛ սփյուռքում: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ առկա հիմնախնդիրները շոշափում են նաև ազգային գոյապահպանության հիմքերը: Օրինակ՝ աշխարհով մեկ սփռված լինելով՝ հայ էթնոկիրներից ցանկացածի առջև այսօր ծառացած է ազգայինի պահմանպան, էթնիկական սոցիալականացման և էթնոկրոնական ինքնության պահպանման խնդիրը, ինչը ակնառու դարձավ նաև տարբեր օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով մեծ թափ ստացած արտագաղթի երևույթների հետևանքով: Միջմշակութային հոգեբանական հետազոտության շրջանակներում վճռորոշ գործոն է անձի էթնոկրոնական ինքնության և էթնիկ ու կրոնական Ես-պատկերների ձևավորման ինստիտուտը: Նման իրադրության մեջ հոգեբանական գիտակարգի, մասնավորապես, սոցիալ-հոգեբանության առաջնահերթ խնդիրներից է վերհանել, վերլուծել և իմաստավորել անձի էթնիկական Ես-ի և էթնիկական հոգեկերտվածքի ստվերման, էթնոկրոնական և մշակութային ինքնության աղճատման, աղավաղման պատճառահետևանքային կապերը և առանձնահատկությունները, լույս սփռելով կնճռոտ այն երևույթների վրա, որոնք պարարտ հող են ստեղծում էթնիկական օտարացման, էթնոկրոնական և մշակութային ինքնության նահանջի արդյունքում՝ արտագաղթի, օտարամոլության և ասիմիլյացիոն երևույթների համար:

Թեպետ հիմնախնդիրը ուսումնասիրվել է փիլիսոփայության, սոցիոլոգիայի, պատմագիտության, ազգագրության և մարդաբանական այլ գիտակարգերի շրջանակներում, այդուհանդերձ նրա բազմաբովանդակ ուսումնասիրությունը հոգեբանական գիտակարգում բավականաչափ աղոտ է, թերի, կարոտ մեկնաբանման և նորովի լուսաբանման: Մասնավորապես ուսումնասիրության կարիք ունեն անձի էթնիկական ինքնության ձևավորման և սոցիալականացման գործընթացում նրա առավելապես զարգացման, ազգային և կրոնական ես-երի համակցված ամբողջականության, էթնիկական արժեհամակարգի ձևավորման և միջմշակութային հաղորդակցման հիմնախնդիրները, որոնց մասնակիորեն իրենց հետազոտություններում անդրադարձել են Ջ. Վ. Սիկևիչը՝ էթնիկության բնութագրականի «մենք-նրանք» ենթատեքստում, Ա. Պ. Սադոխինը՝ էթնոսին բնորոշ յուրահատուկ, պարտադիր հատկանիշների, Ի. Ա. Նաբոքը՝ էթնիկության և քաղաքացիության պատկանելիության, Ֆ. Բարտը՝ էթնիկությունը որպես մշակութային տարբերությունների հիմնախնդրի և այլ տեսանկյուններից: Հատուկ հետաքրքրություն են ներկայացրել գիտնականներ Լ.Ն.Գումիլովը և Ս.Մ.Շիրոկոգորովը՝ էթնիկությունը դիտարկելով որպես սոցիալական բիոլոգիզմի կատեգորիա, Յու.Վ.Բրոմլեյը և Վ.Վ.Պիմենովը՝ որպես էթնիկության տեղեկատվական տեսության ջատագովներ, Ու.Կոննորը, Դ.Միլլերը և Ռ.Ստավենհագենը՝ որպես էթնիկության վրա հիմնված պետականության ձևավորման տեսության հիմնադիրներ, Դ.Հորովիցը և Ա.Դ.Սմիթը՝ իբրև ֆունկցիոնալիստական, Ջ. Կոմարոֆֆը և Ֆ. Բարտը՝ կոնստրուկտիվիստական մոտեցումների ներկայացուցիչներ և այլն: Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում Ն. Ա. Բուսսի սոցիալական միջավայրի սեմանտիկական վերլուծությունը, Ս. Կ. Նարտովա-Բոչավերի և Վ. Ի. Սլոբոդչիկովի անձի ինքնության հոգեբանական ուսումնասիրությունները, Է. Գուսերլի ֆենոմենոլոգիան, Գ. Գարֆինկելի էթնոմեթոդոլոգիան, ինչպես նաև Ջ. Միդի նշանային փոխգործողության տեսությունը, Ա. Ն. Լեոնտևի, Ա. Ա. Լեոնտևի, Լ.Ս.Վիգոտսկու, Ա. Ռ. Լուրիայի, Չ. Մորրիսի և Գ. Կլաուսի հետազոտությունները նշանի գործունեության և վարքի կառույցների վերաբերյալ, Տ. Գ. Ստեֆանենկոյի և Լ. Մ. Դրոբիժևայի սոցիալական կարծրատիպերի մեկնությունները:

Փաստենք, որ մինչ այժմ սոցիալ-հոգեբանական գիտակարգում չկա միասնական ըմբռնում և համապարփակ սահմանում անձի էթնո-կրոնական ինքնության և միջմշակութային փոխհարաբերություններում նրա դերակատարման վերաբերյալ, մշակված չեն միջմշակութային հոգեբանության բնութագրման համընդհանուր չափանիշները, պարզ չեն կրոնական և էթնիկական ինքնության տարբերակման սահմանները, առանձնացված չեն հոգեբանական այն մեխանիզմները, որոնք թույլ կտան հասկանալու անձի և սոցիալական կամ մշակութային խմբերի ինքնության խնդիրները, մշակված չեն էթնոկրոնական ինքնության բացակայությամբ դերադիրքային վարքի բացասական պոտենցիալի մարման ուղիներն ու մեխանիզմները, հստակեցված չեն էթնոկրոնական ստվերային ինքնության պայմաններում էթնիկական ես-ի ձևավորման ու զարգացման, ազգային ինքնության և մշակույթի պահմանման խնդիրները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է ներկայացնում նշված խնդիրների վերաբերյալ պարփակ ուսումնամեթոդական ձեռնարկի թողարկումը, որը, հուսով ենք, ճանապարհ է հարթելու նորանոր գիտական պրպտումների:

# ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## Մշակութային հոգեբանության և միջմշակութային հոգեբանության հիմնական բնութագրերը

Մշակույթը վերացական հասկացություն է, որն, անկասկած, ներառված է կյանքի հանդեպ մեր պատկերացումների ու ընկալումների հիմքում: Մշակույթի միջոցով կենսակերպի յուրաացված բոլոր ձևերն ու գիտելիքը փոխանցվում է սերնդեսերունդ ծեսերի, ավանդույթների, նյութական ու հոգևոր ժառանգության, վարքի նորմերի և այլնի միջոցով: Կարելի է փաստել, որ մշակույթը մի շարք ծրագրավորվող ռեակցիաների համալիր է, որը մենք և մեր նախնիները յուրացրել ենք՝ հարմարվելու համար առօրյա կյանքին և գործելու համար ժամանակակից միջավայրում: Այլ խոսքերով, մշակույթը մեր գիտակցության տեսակն է և, միաժամանակ, արտաքին միջավայրում մեր կենսագործունեության արդյունքը:

Թեև մշակույթը մշտական կարևորություն է ներկայացնում մեր բոլորիս կյանքում, հարկ է նշել, որ մարդն իր առօրյայում չի հիշում մշակույթի մասին: Մենք ամենուրեք տեսնում ենք յուրային և օտար կամ անծանոթ մշակույթների դրսևորումները, նմանություններն ու տարբերությունները, սակայն մեր ամենօրյա կենսագործունեությանը հընթացս հեշտ չէ իմաստավորել մշակույթը սոցիալ-հոգեբանական մակարդակում: Քանի որ մշակույթն իր դրսևորումներում շատ հաճախ անտեսանելի է, մենք սովորաբար դիմում ենք ավելի թափանցիկ և դիտելի հասկացություններին, որպեսզի կարողանանք բացատրել և հասկանալ տվյալ մշակույթի կրողների վարքագիծը, մտածելակերպն ու արժեհամակարգը:
.

Քրեբերն ու Կլաքհոլնը, իսկ ավելի ուշ՝ Ջ. Վ. Բերրին, Ա. Հ. Պուրտինգան, Մ. Հ. Սիգալը և Պ. Ռ. Դասենը առանձնացրել են 6 ընդհան-

րական չափանիշներ, որոնց շրջանակներում քննվում է մշակույթը: Դրանք են՝

- Հասկացությունների նկարագրական օգտագործումը «կենտրոնանում է» մշակութային հիմքով գործունեության կամ վարքագծի տարբեր տեսակների վրա:
- Պատմական սահմանումները վերաբերում են մի խումբ մարդկանց կողմից թողած ժառանգությանը և ավանդույթներին:
- Հասկացությունների նորմատիվային կիրառումը նկարագրում է փոխկապակցված կանոններն ու նորմերը:
- Մշակույթի հոգեբանական նկարագրությունները շեշտադրում են ուսուցման, խնդիրների լուծման և այլ վարքային ինստիտուտները:
- Կառուցվածքային բնույթ կրող սահմանումները շեշտադրում են մշակույթի հասարակական և կազմակերպչական տարրերը:
- Գենետիկական նկարագրությունները վերաբերում են մշակույթի ծագումնաբանությանը:

Այս չափանիշները մատնացույց են անում այն իրողությունը, որ մշակույթի եզրույթն ու հասկացությունը օգտագործվում է գործունեության, վարքագծային մոդելների, կենսական կարևորություն ունեցող երևույթների բավական լայն շրջանակի համար:

Մշակույթը պատկանում է կյանքի բազմաթիվ դրսևորումներին, սակայն, միևնույնն է, այն հնարավոր չէ տեսնել, զգալ կամ լսել: Այն, ինչը կարող ենք ուսումնասիրել և դիտարկել՝ անձի վարքագիծի տարբերություններն են կամ նմանությունները, սովորույթներն ու ծեսերը և այլն: Ամենուրեք մենք տեսնում ենք մշակույթի դրսևորումները,բայց ոչ ինք-

նին՝ մշակույթը: Ընդհանրացնելով, մենք մշակույթը հասկանում ենք հենց իր դրսևորումներով և արտահայտություններով: Այս իմաստով մշակույթը վերացական հասկացություն է, որը, որպես տեսական մի կոնցեպտ, կիրառվում է նկարագրելու և իմաստավորելու համար մեր կողմից արձանագրած մարդկային կյանքի այս կամ այն կողմը: Այստեղ է, որ առաջանում է մշակույթի հասկացման որոշակի երկատվություն. մշակութային գիտելիքը ձևավորում է որոշակի կարծրատիպային պատկերացումներ սեփական Ես-ի վարքագծի մոդելների վերաբերյալ, որոնք, սակայն, կարող են որոշակի փոփոխություններ կրել իրական կյանքում: Արդյունքում, բացի նորմայի մասին պատկերացումներից առաջանում են նաև տվյալ նորմայից շեղումների մասին պատկերացումները և ընկալումները:

Այս տրամաբանությանը համապատասխան, մշակույթի վերաբերյալ սահմանումները կրել են որոշակի փոփոխություններ՝ արտահայտելով ժամանակակիցների պահանջմունքները, լեզվամտածողությունը և արտաքին միջավայրի առանձնահատկությունները: Մշակույթի մասին ձևակերպումները դինամիկ զարգացում են ապրել՝ ըստ որոշակի շեշտադրումների, ինչպիսիք են՝

- ✓ Մշակույթը որպես հասարակության անդամների կողմից յուրացված ընդունակությունների և սովորությունների համալիր (Թեյլոր),
- ✓ Մշակույթը որպես սոցիալական ժառանգություն (Լինտոն),
- ✓ Մշակույթը որպես վարքագծի «պատերն»-ներ, որոնք, մի կողմից, յուրացվում են նշանների միջոցով, և, մյուս կողմից, ապահովում են անձի վարքագիծը և մարդկային խմբերի ձեռքբերումների արդյունքն են կազմում (Կրեբեր, Կլաքհոլն),

- ✓ Մշակույթը որպես փոխլրացնող և համարժեք նշանակությունների ամբողջություն, որը պահպանվում է մարդկանց խմբի կողմից կամ նույնականացվում է տվյալ խմբի հետ (Ռոներ),
- ✓ Մշակույթը որպես օբյեկտիվ (աշխատանքի գործիքներ, նյութական արժեքներ, այլ) և սուբյեկտիվ (խոսք, պատկերացումներ, դրքորոշումներ, դերեր, արժեքներ) գործոնների համալիր (Տրիանդիս),
- ✓ Մշակույթը որպես կանոնների դինամիկ համակարգ՝ մարդկանց խմբերի կողմից սահմանված, որը նպատակ է հետապնդում ապահովելու մարդկանց վերապրումը, սակայն որը իրագործվում է յուրաքանչյուր խմբի համար յուրահատուկ կերպով: Այդ յուրահատկությունները ամրագրվում են խմբի վարքագծի և արժեքհամակարգի մեջ և փոխանցվում են սերնդեսերունդ (Դ. Մացումոտո),
- ✓ Մշակույթը որպես մարդկանց խմբի ընդհանուր կենսակերպ:[1]

**Մշակութային հոգեբանությունը** միտված է անձի հասկացմանը որոշակի սոցիոմշակութային և պատմական իրավիճակում: Նպատակը՝ միայն որոշակի մշակութային ենթատեքստում հասկացվող անձի հոգեկանի և մշակույթի փոխգործողության հետազոտումն է:

**Միջմշակութային հոգեբանությունը** միտված է հոգեբանական գործառույթների նմանությունների և տարբերությունների ուսումնասիրմանը տարբեր մշակույթներում: Նպատակը՝ հոգեբանական ունիվերսալ օրինաչափությունների ստեղծումն է:

**Միջմշակութային հոգեբանության էվոլյուցիան**[2] կարելի է ներկայացնել հետևյալ ժամանակագրական փուլերի միջոցով՝

[1] Берри Дж. В., Пуртинга А. Х., Сигал М. Х., Дасен П. Р., Кросс-культурная психология, М., 2007

1. Մշակութային տարբերությունների վերաբերյալ նյութի հավաքագրում

2. Հոգեբանական տեսությունների և մեթոդիկաների փոփոխման փորձեր՝ մշակութային փոփոխականների ենթատեքստով պայմանավորված

3. Հոգեբանական գործընթացների ունիվերսալ տեսությունների ստեղծում, այդ տեսությունների համընդհանուր և առօրյա կիրառելիություն

## Միջմշակութային հոգեբանության սահմանումը[3]

***Միջմշակութային հոգեբանությունն ուսումնասիրում է անձի գործառույթների նմանությունները և փարբերությունները փարբեր մշակութային և էթնիկական խմբերում, հեփազոփում է մի կողմից՝ հոգեբանական, մյուս կողմից՝ սոցիոմշակութային, էկոլոգիական և կենսաբանական փոփոխականների հարաբերակցությունը:***

[2] Мацумото Д., Культура и психология, СПб, 2003; Вундт В., Психология народов, М., 2002.

[3] Берри Дж. В., Пуртинга А. Х., Сигал М. Х., Дасен П. Р., Кросс-культурная психология, М., 2007

**Հոգեբանական հետազոտության մեջ մշակույթի ուսումնասիրման մոտեցումներն են՝**

- ✓ Մշակույթի արժևորման աստիճանը (առաջնայնություն – երկրորդայնություն)
- ✓ Ազդեցության տեսակը (ուղղակի - անուղղակի)
- ✓ Մշակույթը մեկնաբանվում է որպես անկախ փոփոխական, որն անմիջական ազդեցություն ունի վարքագծի վրա
- ✓ Մշակույթը մեկնաբանվում է որպես ընդհանուր ենթատեքստ, որի սահմաններում իրականացվում է վարքագիծը
- ✓ Մշակույթը միջնորդավորված փոփոխական է, որը բնորոշում է այլ փոփոխականների կապերը
- ✓ Մշակույթը միջնորդավորված փոփոխական է, որը ներմուծում է որոշակի փոփոխություններ այլ փոփոխականներում:[4]

[4]Brislin R., Lonner W., Thorndike R., Cross-Cultural Research Methods, N. Y., 1973.

## Օտարի ընկալումը

*«Սկյութացիք բարբարոս են առ աթենացիս և*

*աթենացիս բարբարոս են առ սկյութացիս»*

**(Ք.ա. 6-րդ դար, Անաքարսիս)**

**Օտարը չի խոսում հասկանալի (նորմալ) լեզվով**

↓

**Հասկանալի (նորմալ) մարդ չէ**

↓

**Վայրենի է**

**Օտարի յուրացման գործընթացը ենթադրում է՝**

- օտարին ճանաչել
- շփման ընդհանուր եզրեր գտնել
- թարգմանել, այսինքն, դարձնել հասկանալի օտարի լեզուն
- համակերպվել և ընդունել, թեկուզ մասամբ, օտարի մշակույթը
- փոխանցել կամ պարտադրել օտարին սեփական մշակույթը

- հաղորդակցվել օտարի հետ գերազանցապես սեփական լեզվով
- սեփական միջավայրում կամ մշակույթում օտարի համար տեղ հատկացնել
- օտարին դարձնել մշակութային:

**Յուրայինի օտարման գործընթացը ենթադրում է՝**

- հակադրվել յուրայինին
- մարգինալացնել նրան
- հաղորդակցվել «միջնորդի կամ թարգմանչի» միջոցով
- սահմանել յուրայինի համար վարքագծի նորմեր, որոնք տարբերվում են տվյալ միջավայրում ընդունված նորմերից
- բարոյազրկել և արժեզրկել յուրայինին
- նմանեցնել նրա մշակույթը այլ օտար մշակույթներին
- յուրայինին դարձնել վայրենի:

**Մենք-Նրանք հակադրությունը**[5]

**Անհատական-կոլեկտիվ մշակույթների հատկանիշները**

Անհատական մշակույթի առանցքային հատկանիշներն են՝

- անկախ Ես-կերպարի խրախուսում
- լիդերության սկզբունքի գերակայություն
- «միջին»-ից բարձր ինքնագնահատական
- իրավունքի առաջնահերթություն
- անահատական նպատակների առաջնահերթություն
- անհատական պահանջմունքները որպես սոցիալական վարքի դետերմինանտ
- մրցակցության և գերազանցության կարևորությունը հասարակական հարաբերություններում

Կոլեկտիվ մշակույթի առանցքային հատկանիշներն են՝

- խմբից կախյալ Ես-կերպարի խրախուսում
- խմբի կողմից Ես-ի կլանում
- պարտականությունների առաջնահերթություն
- «միջին»-ից ցածր ինքնագնահատական
- ներքին խմբային նպատակների առաջնահերթություն
- խմբի անդամների միանման կարգավիճակ

[5] Триандис Г., Культура и социальное поведение, М., 2011.; Коул М., Культурно-историческая психология, М., 1997.

- հիերարխիկ կառուցվածք ենթախմբերի միջև կամ
- խմբի ներսում որոշակիացված սոցիալական կառուցվածքային կարգավիճակներ
- նորմերը որպես սոցիալական վարքի դետերմինանտ
- փոխանակման կամ համակերպման կարևորությունը հասարակական հարաբերություններում

**Զ. Հոֆստեդեի մոդել**[6]

Անհատական-կոլեկտիվ մշակույթների տարանջատումը Հոֆստեդեն կատարել է 4 չափանիշների սահմանմամբ՝

1. անհատականություն – կոլեկտիվիզմ
2. իշխանության նկատմամբ փոքր – մեծ դիստանցիա
3. Տղամարդկային – կանացի վարք
4. Անորոշ միջավայր – խուսափում անորոշությունից

Երկբևեռ չափանիշներից առաջինները Հոֆստեդեն սահմանել է՝ որպես անհատական մշակույթներին բնորոշ չափանիշներ, երկրորդները՝ կոլեկտիվ մշակույթներին բնութագրող:

Կոլեկտիվ մշակույթները (գերազանցապես արևելյան երկրներ, գերդաստանային մշակույթներ) բնութագրվում են սեփական խմբի անդամների և օտարների կամ անծանոթների նկատմամբ տարբերակված վերաբերմունքով: Օտարի յուրացման գործընթացը, որպես կանոն, կոլեկտիվ մշակույթներում ավելի երկար է տևում, օտարը բազմակի շփումների արդյունքում է աստիճանաբար յուրացվում սեփական մշակույթի կողմից: Ես-ը նույնանում է Մենք-ի հետ և յուրային խմբի ներսում գործում է հավասարության սկզբունքը, այնինչ, խմբերի միջև պահպանվում

6 Տես՝ Hofstede J., Cultures and Organizations: Software of the Mind, N. Y., 1991.

է արդարության սկզբունքի առաջնահերթությունը: Կոլեկտիվ մշակույթներում հատկանշական է դառնում ներողություն խնդրելու պահանջմունքը, որի անհրաժեշտությունն առաջանում է նույնիսկ անծանոթ կամ մեծաքանակ խմբի վարքագծի դեպքում:

Ի հակադրություն դրան, անհատական մշակույթները (ԱՄՆ, սկանդինավյան, եվրոպական երկրներ) բնութագրվում են սեփական խմբի և օտարների կամ անծանոթների նկատմամբ նմանատիպ վերաբերմունքով: Օտարի յուրացումն այս մշակույթներում անհատական շփումների մակարդակում է: Սակայն, միևնույն ժամանակ, որքան հեշտ է ընթանում օտարի յուրացումը սեփական մշակույթի կողմից, այդքան հեշտ է նաև ընթանում յուրայինի օտարման գործընթացը: Գերազանցության սկզբունքի առաջնահերթությունը հանգեցնում է նրան, որ յուրային անձն անհաջողությունից հետո (սնանկություն, շեղվող վարքագիծ, այլ) կտրուկ կերպով հայտնվում է սոցիալական սանդղակի ավելի ցածր աստիճանի վրա և դրա հետ մեկտեղ՝ կորցնում է նախկին սոցիալական կապերն ու հարաբերությունները և ձեռք բերում ներկա պահին իր կարգավիճակին համարժեք նոր սոցիալական կապեր: Թե՛ յուրային խմբի ներսում, և թե՛ դրանից դուրս պահպանվում է արդարության սկզբունքի առաջնահերթությունը: Ի տարբերություն կոլեկտիվ մշակույթների, անհատական մշակույթների ներկայացուցիչների մոտ ներողություն հայցելու անհրաժեշտությունն ավելի նեղ շրջանակներում է դրսևորվում:

## Վերլուծության անհատական մակարդակ

Անհատական և կոլեկտիվ մշակույթների հատկանիշները կարող են դրսևորվել ոչ միայն սոցիալական խմբերի, այլև անհատական՝ **եսակենտրոն – այլակենտրոն** մակարդակներում:

Ի տարբերություն այլակենտրոն անձի, եսակենտրոն անձն ավելի մեծ ուշադրություն է դարձնում ներքին հատկությունների վրա՝ սեփական համոզմունքների, զգացմունքների, այլ ոչ՝ այլ մարդկանցից ստացված տեղեկատվության կամ հասարակական կարծիքի:

Ինքնաներկայացման ժամանակ այլակենտրոն անձը առանց հապաղելու կնշի իր սոցիալական կամ ընտանեկան կարգավիճակը՝ *«Ես մայր եմ», «Ես ուսուցիչ եմ»* և այլն: Հակառակը, եսակենտրոն անձը ներկայանում է աշխարհին իրեն հատուկ հատկանիշներով՝ *«Ես հեփաքրքրասեր եմ», «Ես արագաշարժ եմ»* և այլն:

Գրավոր խոսքը նույնպես տարբեր է. կոնտենտ-անալիզի միջոցով երևում է, որ այլակենտրոն անձանց գրավոր խոսքում ավելի սոցիալական ակտիվություն են կրում այլոց գործողությունները նշանակող բայերը՝ *«նա առաջարկեց», «նա որոշեց», «նա խորհուրդ փվեց»*, իսկ սեփական գործողությունները կրում են կրավորական բնույթ:

Եվ հակառակը, եսակենտրոն անձանց գրավոր խոսքում գերակշռում է այլոց կրավորական դիրքը՝ սեփական դիրքորոշումների հանդեպ՝ *«նա համաձայնեց իմ հեփ», «նա սպասում է իմ որոշմանը»* և այլն: Ակնհայտ է նաև անձնական դերանունների օգտագործման հաճախականությունն ու բնույթը՝ այլակենտրոն անձանց խոսքը հիմնված է «Ես»-ի, իսկ այլակենտրոն անձանց խոսքը՝ «մենք»- վրա:[7]

---

[7] Triandis H., Berry J., Handbook of Cross-Cultural Psychology: Methodology, Boston, 1980.

Այսպիսով, եսակենտրոն անձինք բնութագրվում են հետևյալ կերպ՝

- Սեփական Ես-ի մասին (նաև՝ ոչ հիմնավորված) մեծ կարծիք,
- Շրջապատը Ես-ին հարմարեցնելու ձգտում,
- Միջինից բարձր ինքնագնահատական (նաև՝ ոչ ադեքվատ),
- Սոցիալական պասիվություն,
- Անհատական աշխատանքի տեսակներին նախապատվություն,
- Սեփական հաջողությունների և բարեկեցության կարևորություն,
- Օգնություն ցուցաբերելու և/կամ ներողություն խնդրելու ավելի սահմանափակ, նեղ շրջանակներ,
- Լիդերություն,
- Կոնֆլիկտայնությունը կամ սուբյեկտայնությունը որպես նշանակալի արժեք,
- Կարճատև սոցիալական հարաբերություններին հակվածություն:

Այլակենտրոն անձանց հիմնականում բնորոշ է՝

- Սեփական Ես-ի մասին անվստահության դրսևորում,
- Ես-ը շրջապատին հարմարեցնելու ձգտում,
- Միջինից ցածր ինքնագնահատական,
- Սոցիալական ակտիվություն,
- Արդյունավետ աշխատանք խմբում,

- Օգնություն ցուցաբերելու և/կամ ներողություն խնդրելու ավելի լայն շրջանակներ,
- Համաձայնությունը որպես նշանակալի արժեք,
- Երկարատև սոցիալական հարաբերություններին հակվածություն:[8]

[8] Brislin R., Lonner W., Thorndike R., Cross-Cultural Research Methods, N. Y., 1973.

## Մշակութային սինդրոմի ախտորոշում

Մշակութային սինդրոմը անձի համոզմունքների, դիրքորոշումների, Ես-սահմանումների, նորմերի և արժեքների ընդունված համակարգ է, որն արտահայտվում է տվյալ սոցիալ-հոգեբանական և էթնո-մշակութային միջավայրում:

Մշակութային սինդրոմն ախտորոշվում է՝

- Ինքնաներկայացման վերաբերյալ դատողության արագ ձևակերպմամբ,
- Մեծամասնության կողմից նմանատիպ գնահատականի և
- Դատողություններում անհատի կամ խմբի / կոլեկտիվի նշանակալիությամբ:[9]

## Անհատական/կոլեկտիվ մշակույթների տարածվածությունը

Անհատականությունը տարածված է գերազանցապես՝

- ✓ Հարուստ հասարակություններում
- ✓ Քաղաքային միջավայրում
- ✓ Բազմամշակութային միջավայրում
- ✓ Բարձր որակավորման մասնագիտական միջավայրում
- ✓ Լոկալ խմբերով ապրող միգրանտների միջավայրում
- ✓ Մարգինալների միջավայրում:

[9] Cook T., Campbell D., Quasi-Experimentation: Design and Analysis Issues for Field Settings, Houghton Mifflin, 1979.

Կոլեկտիվիզմը տարածված է գերազանցապես՝

- ✓ Ագրարային միջավայրում
- ✓ Ազգային փոքրամասնություններում
- ✓ Միատարր միջավայրում
- ✓ Գերդաստաններում
- ✓ Կրոնական միջավայրում:[10]

[10] Triandis H., Berry J., Handbook of Cross-Cultural Psychology: Methodology, Boston, 1980.

## Միջմշակութային հետազոտության պլանավորումը

Հետազոտության իրականացման հիմնական փուլերն են՝

1. ընտրություն քննվող երևույթի կամ հետազոտության նպատակադրվածություն
2. ընտրություն հոգեբանական տեսության, դպրոցի կամ մոդելի
3. ընտրություն մեթոդի տեսակի
4. հետազոտական գործընթաց՝ ուղղված տվյալ երևույթի դրսևորմանը որոշակի մշակույթում
5. հետազոտական գործընթաց՝ ուղղված տվյալ երևույթի դրսևորմանը այլ մշակույթներում
6. եզրահանգում հոգեբանական օինաչափությունների կամ առանձնահատկությունների վերաբերյալ:

### Հետազատական շեղումները և համարժեքության չափանիշը

Միջմշակութային հետազոտության կիրառելիությունը ստուգվում է այլ մշակույթներում ապրոբացիայի միջոցով:

Միջմշակութային հոգեբանական հետազոտության ընթացքում կարևոր է ուշադրություն դարձնել մեթոդական շեղումների վրա: Շեղումը հասկացվում է որպես խոչընդոտող գործոնների առկայություն, որի պարագայում կարող է կասկածի տակ դրվել հետազոտության արդյունքների համեմատելիությունը: Ստացված արդյունքների և գնահատականնե-

րի համեմատելիության պայմաններում կարելի է փաստել համարժեքության չափանիշի պահմանման մասին:[11]

Միջմշակութային հոգեբանական հետազոտության մեջ շեղումների հիմնական աղբյուրներն են՝

1. Կառուցվածքային շեղումներ
2. Ընտրանքային շեղումներ
3. Թեստային շեղումներ:[12]

Հետազոտության մեթոդական գործիքը համարվում է համարժեք, եթե դրա միջոցով գնահատվում է նույն երևույթը տարբեր մշակույթներում: Դա նշանակում է, որ կառուցվածքային շեղուներից խուսափելու համար անհրաժեշտ է ապահովել ֆունկցիոնալ կամ կառուցվածքային համարժեքներն համեմատվող երևույթներ: Եթե տարբեր մշակույթներում հնարավոր չէ հետազոտել նույնական երևույթներ, ապա դրանք պետք է գտնվեն համեմատելի տիրույթում և պատկանեն նմանատիպ երևույթների դասին կամ շարքին:

Կառուցվածքային համարժեքության հաստատումից հետո անհրաժեշտ է ապահովել ընտրանքային համարժեքությունն ու, որպես հետևանք, չափման միավորների համարժեքությունը: Խնդիրը բարդանում է նրանով, որ նույն մեթոդիկայի միջոցով հնարավոր չէ հետազոտել տարբեր էթնիկ, կրոնական և սոցիալական մշակույթներում նմանատիպ երևույթները: Կիրառելու համար տարբեր միջավայրերում չափման նույն սանդղակները կամ ձեռք բերելու համար սկալյար համարժեքության աստիճանը, նախապես կատարվում է ընտրված մեթոդիկայի տեղայնացում (թարգմանություն, սեմանտիկ և արժեքային ադապտացում) համեմատվող մշակույթների համար, որից հետո նոր հնարավոր է լինում իրակա-

[11] Lonner W., Berry J., Field Methods in Cross-Cultural Research, American Psychological Assosiation, Sage Publications, 1986

[12] Cook T., Campbell D., Quasi-Experimentation: Design and Analysis Issues for Field Settings, Houghton Mifflin, 1979.

նացնելու համարժեք հետազոտություն: Այդպիսով, գնահատման չափանիշներում ներառվում են emic-գործոններ և etic-գործոններ, որոնք հասկացվում են որպես ներմիջավայրային և արտամիջավայրային գործոններ:

## Միջմշակութային հաղորդակցման հմտությունները

Միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացումը մշտապես եղել է հոգեբանների, մշակութաբանների, սոցիոլոգների և ազգագրագետների ուշադրության կենտրոնում: Մշակութաբանության տեսանկյունից միջմշակութային հաղորդակցմանը վերաբերող գրականությունը գերազանցապես վերաբերում է էթիկետի ուսումնասիրություններին:[13]

Հոգեբանական դաշտում առանձնանում են մի շարք հեղինակների պրակտիկ խորհուրդներ:

Գ. Տրիանդիսը[14] միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման խնդիրը լուծում է հետևյալ խորհուրդների միջոցով.

- Կոլեկտիվ մշակույթների ներկայացուցիչների հետ եսակենտրոն անձանց հաղորդակցման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այլակենտրոն անձանց՝ խմբին անդամության փաստին և, հատկապես, տվյալ խմբի ներսում հեղինակավոր անձանց դիրքորոշումներին, քանի որ դրանք որոշիչ են դառնում այլակենտրոն անձանց հաղորդակցման ընթացքում: Վերջիններիս վարքագծում փոփոխությունները նկատելի են դառնում միայն այն դեպքում, երբ տրանսֆորմացվում կամ փոփոխվում է կոլեկտիվ մշակույթում նշանակալի խումբը:

---

13 Формановская Н., Культура общения и речевой этикет, М., 2005; Гаврилина-Фудзияма Е., Японский этикет: древние традиции и современные правила, М., 2020.

14 Triandis H., Berry J., Handbook of Cross-Cultural Psychology: Methodology, Boston, 1980.

- Եսակենտրոն անձին անհրաժեշտ է հրաժարվել սեփական՝ անհատական մշակույթում սովորական դարձած որոշ ստանդարտներից, ինչպիսին է, օրինակ, խմբում ընթացող ժամանակի նկատմամբ վերաբերմունքը, քանի որ այլակենտրոն անձինք համեմատաբար ավելի երկար ժամանակ են անցկացնում խմբի ներսում:

- Եսակենտրոն անձը պետք է գիտակցի, որ կոլեկտիվ մշակույթում վերադասի և ստորադասի միջև կոնֆլիկտի առկայության դեպքում կոնֆլիկտի լուծման հավանականությունն առաջինի օգտին ավելի մեծ է՝ անկախ նրանից, թե լուծումը արդարացի է, թե ոչ:

- Կոլեկտիվ մշակույթներում նորմալ է համարվում արհամարհել նույն սեռի և տարիքի ընկերոջ հետ հանդիպումը, եթե անհրաժեշտություն է առաջացել հանդիպելու վերադասի հետ՝ համարելով, որ ընկերը «կհասկանա»:

- Այլակենտրոն կամ կոլեկտիվ մշակույթին պատկանող անձին որևէ գործ հանձնարարելու համար լավագույն միջոցը՝ իր համար հեղինակություն ներկայացնող անձանց համոզելն է, որ այդ գործը խիստ անհրաժեշտ է և նպաստավոր է ամբողջ խմբի նպատակների համար:

- Անհրաժեշտ է հիշել, որ այլակենտրոն անձինք չափազանց բացասաբար են ընդունում խմբի ներսում մրցակցության իրողությունը, քանի որ խմբի ներսում առաջնահերթություն է փոխօգնությունն ու համագործակցությունը: Այստեղից էլ պարզ է դառնում նման մշակույթներում հասարակական քննադատության նկատմամբ անհանդուրժողականությունը:

- Այլակենտրոն անձինք ավելի պատրաստակամ են սոցիալական երկարաժամկետ հարաբերությունների հաստատմանն ու պահպանմանը, քան եսակենտրոն անձինք:

- Գործարար միջավայրում նույնպես այլակենտրոն անձինք ավելի երկար ժամանակ են պահանջում գործարքը կնքելու համար, քա-

նի որ աստիճանաբար խորացող շփման արդյունքում է ձևավորվում վստահությունը գործարար փոխգործողության մասնակցի հանդեպ: Այդ պատճառով եսակենտրոն և այլակենտրոն անձանց միջև գործարար հաղորդակցման փորձերը անհաջողությամբ են ավարտվում, որովհետև վերջիններս, մինչև գործարքի կնքումը, ձգտում են հաստատել բարիդրացիական միջանձնային հարաբերություններ (այսինքն՝ ներառել հաղորդակցման մասնակիցներին «Մենք»-ի կազմում,-նշումը՝ հեղինակների):

- Հաղորդակցման ընթացքում կոլեկտիվ մշակույթի ներկայացուցիչները հիմնականում չեն բարձրաձայնում սեփական ձեռքբերումները, ավելի համեստ են, քան անհատական մշակույթներում եսակենտրոն անձինք, ովքեր համոզված են, որ եթե իրենք իրենց չգովեն, ապա ուրիշները հետաքրքրված էլ չեն լինի իրենց գովելու հարցում:

- Ռեսուրսների և պարգևների բաշխման հարցում այլակենտրոն անձինք նախընտրում են կիրառել հավասարության սկզբունքը՝ յուրային խմբի անդամների նկատմամբ, իսկ օտարների հանդեպ՝ արդարության սկզբունքը: Եսակենտրոն անձինք երկու դեպքում էլ՝ թե՛ յուրային և թե՛ օտար խմբերի պարագայում էլ հաղորդակցվում են արդարության սկզբունքով առաջնորդվելով: Արդյունքում եսակենտրոն և այլակենտրոն անձանց հաղորդակցումը կարող է դժվարանալ, քանի որ այն դեպքում, երբ վերջինիս կողմից դրսևորվելու է դիմացինին որպես յուրային խմբի անդամ ընդունելու պատրաստակամությունը և, ընդսմին, հաղորդակցումը կառուցվելու է հավասարության սկզբունքին համաձայն, ապա նա ի պատասխան դրան, միևնույն է, ստանալու է եսակենտրոն անձի կողմից արդարության սկզբունքի վրա հիմնված արձագանք: Նման պատասխան ռեակցիան այլակենտրոն անձի կողմից կարող է դիտվել նույնիսկ որպես հաղորդակցումից հրաժարում կամ արհամարհանք:

- Այլակենտրոն անձինք նախընտրում են հաղորդակցվել այնպիսի միջավայրում, որտեղ մարդկանց սոցիալական կարգավիճակները տարբեր են: Նրանք հաճույքով և պատրաստակամ կերպով իրենց հարգալից վերաբերմունքն են ցուցաբերում հեղինակավոր անձանց, եթե գտնվում են ստորադաս վիճակում, և հակառակն, իրենցից ստորադասների հետ շփվելիս լիարժեք կատարում են իրենց ընձեռված վերադասի դերը: Ի հակադրություն դրան, եսակենտրոն անձինք ավելի հեշտ հաղորդակցվում են այնպիսի միջավայրում, որտեղ իրենց և այլոց սոցիալական կարգավիճակները նույնական են և նրանք շփվում են «հավասարը հավասարի հետ» սկզբունքով:

- Նվերներ շնորհելու և ծառայություններ մատուցելու ավանդույթն առավելապես կարևորվում է կոլեկտիվ մշակույթներում, ընդորում նման փոխգործողությունները հաճախ չեն հետապնդում շփումը խորացնելու կամ օգուտ քաղելու հեռավոր նպատակ: Այդ պատճառով էլ այլակենտրոն անձը կարող է նույնիսկ վիրավորվել, եթե իր կողմից որևէ ծառայության դիմաց եսակենտրոն համոզմունքներով օժտված անձը գումար առաջարկի կամ փորձի այլ կերպ վարձահատույց լինել: Նման պարագայում միակ ընդունելի ռեակցիան կարող է լինել պատասխան այլ ծառայություն մատուցելը:[15]

Վերը նշված խորհուրդները մատնանշում են միջմշակութային հաղորդակցման ուսումնասիրման յուրահատկությունը, որը հիմնվում է մշակութային կոնտակտների վերլուծության և մեկնաբանության վրա: Ուստի, այս հիմնախնդիրներն ուսումնասիրելու, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցման հմտությունները զարգացնելու առավել արդյունավետ միջոցը շատ հեղինակներ նշում են թրենինգը, որի ընթացքում պրակտիկ խորհուրդների միջոցով հնարավոր է դառնում հասնելու միջմշակութային առանձնահատկությունների և հաղորդակցման հասկացմանն ու adequate-

---

[15] Лопухова О. Г., Методология и методы кросскультурной психологии, ФГАОУ ВПО Казанский (Приволжский) федеральный университет, Казань, 2014.

դելավորել կոնկրետ իրավիճակներ, որոնցում ներգրավված են տարէթնիկ մշակույթների ներկայացուցիչներ: Այդ կողմնորոշումը հիմք ծառայեց մշակելու որոշակի կիրառական մեթոդներ, որոնց փորձարկումը թույլ է տալիս միջմշակութային հաղորդակցմանն առնչվող հիմնախնդիրները դարձնել նպատակաուղղված և արդյունավետ:

Մանրամասնենք այդ մեթոդներից որոշները:

**Կենսագրական ռեֆլեքսիայի մեթոդ**

Այս մեթոդը նախտեսում է սեփական կենսագրության գիտակցումը, ինչը նպատակ է հետապնդում Ես-ի նույնականացման սահմանումն ու առօրյա կյանքում դրա արտահայտման ձևերի բացահայտումը: Կենսագրության վերլուծության և կենսական փորձի վերարտադրման միջոցով արդիական են դառնում զգացմունքներն ու գիտակցվում են անձի ձևավորմանը նպաստող իրողությունները: Կենսագրության արդիականացումն, այսպիսով, թույլ է տալիս ռեֆլեքսիայի ենթարկել անձի կենսագործունեության տարբեր կողմերը, արժեքային կողմնորոշումները և այդ պատճառով կարող է կիրառվել զանազան մեթոդաբանական մոտեցումների համալիրում: Կենսագրական մեթոդի յուրահատկությունը կայանում է նրանում, որ անձի գիտելիքն ու փորձը, իր կյանքում տեղ գտած նշանակալի իրադարձություններն առանձնանում են մնացած բոլոր սոցիալական ենթատեքստերից և ենթարկվում մանրազնին ուսումնասիրության: Արդյունքում հնարավոր է դառնում վերաիմաստավորել և ներկայացնել յուրային մշակութային պատկանելիության  հիմքերը, նույնականացնել անձնային մակարդակում դրսևորվող մշակութային նորմերն ու ստանդարտները և բացահայտել մշակութային ինքնընկալման մեխանիզմները:

**Ինտերակտիվ մոդելավորման մեթոդ**

Այս մեթոդը նպատակաուղղված է միջմշակութային հաղորդակցման անհատական և խմբային պարբերաբար ի հայտ եկող իրավիճակ-

ների վերարտադրմանը: Շնորհիվ դրա, միջմշակութային հաղորդակցման հմտություններին ուսուցանվող մասնակիցների ուշադրությունը կենտրոնանում է նման իրավիճակների վերլուծության և գնահատման վրա: Այլ խոսքերով, ձևավորվում են ինտերակտիվ մոդելների պարզեցված մոդելներ, որոնք թույլ են տալիս ճանաչել և հետազոտել միջմշակութային կոնտակտների տեսակներն ու միջոցները: Ինտերակտիվ մոդելավորման մեթոդը կարևորվում է նաև նրանով, որ

1. Միջմշակութային հաղորդակցման գործընթացը դարձնում է բավական դյուրին՝ ստեղծելով բնական պայմաններ և իրականությանը համապատասխանող իրավիճակներ,

2. Միավորում է ուսուցման մասնակիցներին համատեղ գործունեություն ծավալելու համար,

3. Նպաստում է մասնակիցների միջև ավելի բաց և ընկերական հարաբերությունների ստեղծմանը,

4. Հնարավորություն է ստեղծում դիմելու մասնակիցների կենսափորձին և դրա միջոցով գնահատելու ներկայում տեղի ունեցող հաղորդակցման իրավիճակները:

**Դերային խաղերի մեթոդ**

Այս մեթոդը բնութագրվում է սոցիալական որոշակի դերերի կատարմամբ, որոնք վերականգնում են միջմշակութային հաղորդակցման հաճախ կրկնվող իրավիճակները: Մեթոդի հիմքում ընկած է իրավիճակի վերապրումն ու գնահատումը: Արդյունքում տեղի է ունենում հաղորդակցման ստանդարտների և նորմերի թաքնված իմաստների գիտակցումն ու յուրացումը և, որպես հետևանք, խորապես հասկացվում են միջմշակութային փոխգործողության մասնակիցների հետաքրքրություններն ու նպատակները, վարքի ձևերը, ինչպես նաև խորապես ընկալվում է օտար մշակույթը կրող անձանց ու խմբերի արժեհամակարգը:

**Ինքնագնահատականի մեթոդ**

Այս մեթոդի օգնությամբ հնարավոր է դառնում միջմշակութային հաղորդակցման ընթացքում առանձնացնել վարքի որոշակի տիպեր: Այդ նպատակը ձեռք է բերվում հասարակական հարցումների, դիտումների և թեստավորման արդյունքում: Ստացված արդյունքները անալիտիկ քննարկումների առարկա են դառնում միջմշակութային հաղորդակցման տեսակների և միջոցների վերաբերյալ հարցադրումներում: Քննարկվում են թե՛ միջմշակութային հաղորդակցման տարբեր հմտությունները, թե՛ ՛շդրանց պրակտիկ կիրառման հնարավորությունները և թե՛ սեփական տեսակետները անձի ինքնագնահատականի համատեքստում:

**Սիմուլյացիայի մեթոդ**

Այս մեթոդը կայանում է նրանում, որ արհեստականորեն վերարտադրված իրավիճակներում փորձ է արվում առավելագույնս իրականությանը մոտ միջոցներով և մեխանիզմներով խաղարկել միջմշակութային հաղորդակցման այս կամ այն իրավիճակը: Սիմուլյատիվ իրավիճակները, որպես կանոն, իրենցից ներկայացնում են միջմշակութային հաղորդակցման ամփոփ, ընդհանրական մոդելներ, որոնց տարբերակները հաճախ հանդիպում են իրական միջմշակութային փոխգործողության ընթացքում:

Հեղինակների կողմից կիրառվող մեթոդները, որպես կանոն, տարանջատվում են ըստ հետևյալ երեք չափանիշների՝

1. Ըստ ուսուցման մեթոդի՝ դիդակտիկ կամ էմպիրիկ,
2. Ըստ ուսուցման բովանդակության՝ համընդհանուր կամ առանձին մշակույթներում հանդիպող,
3. Ըստ ոլորտի՝ կոգնիտիվ, էմոցիոնալ կամ վարքային:

Միջմշակութային հաղորդակցման հմտությունների ուսուցանող ծրագրերի տարատեսակ դասակարգումները ներառում են ինչպես տարբեթնիկ միջավայրի մասին ճանաչողական բաղադրատարրը, այնպես էլ պրակտիկ դաշտում վարվեցողության կանոնների ուսուցումը և թրենինգը:

## ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Միջմշակութային հետազոտության առանցքային եզրույթները

Սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության հայեցակետից ինքնության հասկացությունը հանդես է գալիս անձի՝ որևէ ավարտուն սոցիալական համակարգին պատկանելության մեջ, անձի այն գիտակցման մեջ, որ նա ներկայանում է այդ համակարգի մի մաս և գրավում է այնտեղ որոշակի դիրք: Այդ հասկացությունը արտահայտվում է տարբեր առանցքային հարցադրումների միջոցով. ինչպե՞ս է անձը ճանաչում իր միջավայրը, ի՞նչ գլխավոր համեմատականներ է տանում հարազատ և օտար միջավայրերի միջև և ո՞ր չափանիշների շնորհիվ է նույնականացնում իրեն տվյալ միջավայրի հետ: Այսպիսով, սոցիալ-հոգեբանական դիտարկման շրջանակներում անձի ինքնության հասկացությունը «պատվում է» սոցիալական նշանակությամբ և դառնում առանձին ուսումնասիրության առարկա: Անձի սոցիալական ինքնության երևույթի մեջ խտացված կերպով կարող են արտահայտվել անձի գոյության և գործունեության այնպիսի յուրահատկությունները, որոնք էլ կվկայեն ազգային ինքնության և գիտակցության տարբեր կողմերի մասին:

«Ինքնություն» հասկացությունը լայն կիրառում է ստացել հոգեբանության, ազգաբանության, սոցիալական և մշակութային մարդաբանության մեջ: Ընդհանուր առմամբ այն նշանակում է որևէ օբյեկտի կամ սուբյեկտի՝ որևէ այլ օբյեկտին կամ սուբյեկտին պատկանելիության գիտակցումը որպես մասը՝ ամբողջին [106, էջ 154]: Կախված ուսումնասիրության նպատակներից, կարելի է առանձնացնել «ինքնության» եզրույթի անձնային կամ սոցիալական կառուցվածքային բնութագրումները: Հոգեբանության մեջ անձնային ինքնությունը արտահայտում է այն բնութագրականների համակցվածությունը, որի շնորհիվ նաարտահայտում է իր յուրահատկությունը: Սոցիալական ինքնությունը միտված է անձին նույնականացնելու սեփական սոցիալական միջավայրի նորմերի և արժեհամակարգի հետ: Ակնհայտ է, որ ինքնության այդ երկու մակարդակ-

ները միահյուսված են և ներկայանում են իրենց փոխկապակցվածության մեջ: Չէ որ անձի պատկերացումները իր մասին որոշակի սոցիալական նորմերի յուրացման արդյունք են: Ուստի, «ինքնության» եզրույթը փոխկապակցվում է սոցիալականացման գործընթացով, որի շնորհիվ ի հայտ է գալիս անձի ձևավորված «ես-կոնցեպցիան»: Այսպիսով, ինքնության անձնային և սոցիալական մակարդակները միտված են բացահայտելու անձի «ես-կոնցեպցիայի» յուրահատկությունները:[16]

Էթնիկ ինքնության ուսումնասիրումը ընդգրկում է բազմաբնույթ հարցադրումների և մոտեցումների միասնություն: Այն գտնվում է ինչպես հոգեբանության, սոցիոլոգիայի, այնպես էլ՝ պատմության և մշակութաբանության ուշադրության կենտրոնում:

Հոգեբանական գիտությունն էթնիկ ինքնությունը ներկայացնում է որպես անձին բնութագրող հոգեբանական բարդ արժեհամակարգ, որը միավորում է նրան տվյալ էթնոսի՝ որպես խմբի, այլ անդամների, այլ մշակույթների հետ և այս կամ այն կերպ տարբերում են նրան այլ էթնոսներից: Ամենևին, էթնոսը չի կարող նշանակել խմբի միակ տեսակը: Անձը իր գործունեության ընթացքում ընդգրկվում է բազմաթիվ խմբերի մեջ (կուսակցություններ, եկեղեցական կազմակերպություններ, և այլն), որոնք նույնպես հիմնված են որևէ արժեհամակարգի վրա: Սակայն, էթնոսը հասկացվում է որպես միջսերնդային հանրույթ, այն կայուն է ժամանակի մեջ և անձը իրեն բնութագրող մնայուն արժեքների համալիրը, անկասկած, կապում է էթնիկ ինքնության հասկացության հետ՝ որպես իրեն ներկայացնող և այլ էթնոսներից տարբերող բնութագրական:

«Էթնոս» և «էթնիկ ինքնություն» եզրույթները կարելի է մեկնաբանել տարբեր կերպ՝ կախված նրանից, թե ինչն է բերվում որպես մեկնաբանության հիմք:

---

[16]Նալչաջյան Ա.Ա., Էթնիկական հոգեբանություն, Ե., 2001, 544 էջ

Էթնիկ ինքնության վերաբերյալ ռուսական գիտական միտքը սկսեց ձևավորվել դեռ 19դ. 40-ական թթ.: Ն.Ի.Նադեժդինը[17] և Կ.Դ.Կավելինը[18] ձևակերպեցին էթնիկ ինքնության հիմնական սկզբունքները:

Էթնիկ ինքնության եզրույթի տեսա-մեթոդական մեկնությունները տրվում են ըստ հետևյալ հեղինակների:

| | |
|---|---|
| Ն.Ի.Նադեժդին | առանձնացրել է էթնիկ ինքնության երեք ենթախումբ՝ լեզու, ֆիզիկական ազգագրություն և հոգեկան ազգագրություն |
| Կ.Դ.Կավելին | առաջարկել է էթնոհոգեբանական ուսումնասիրության մեթոդ՝ հիմնված հավատալիքների, բանահյուսության և մշակույթի կոթողների քննության վրա |

Հաջորդ սերնդի ներկայացուցիչներն են Դ.Ն.Անուչինը[19], Ն.Ն.Միկլուխո-Մակլայը[20], Ն.Ն.Խարուզինը, Վ.Ն.Խարուզինան[21] և այլոք:

| | |
|---|---|
| Ս.Մ.Շիրոկոգորովը[22] | 20դ. 20-ական թթ. արդեն սահմանում էր էթնոսը որպես միևնույն ծագում, սովորություններ և կենսակերպ ունեցող անհատների խումբ |

17 Прийма Ф.Я., Н. И. Надеждин и славяне,- в кн.: Славянские литературные связи: Сборник науч. статей,/отв. ред. М.П.Алексеев/, Л.,1968, 288 с., с. 5-28.
18 Китаев В.А., Кавелин К. Д.,Между славянофильством и западничеством, М., 1996, 431 с.
19 Анучин Д. Н., О людях русской науки и культуры, М., 1952, 298 с.
20 Тумаркин Д. Д., Анучин и Миклухо-Маклай (из истории изучения и публикации научного наследия Н. Н. Миклухо-Маклая),в кн.: Очерки истории русской этнографии, фольклористики и антропологии, Вып. 10, М., 1988, 164с.
21 Токарев С.А., История русской этнографии, М., 1966, 364 с.
22 Широкогоров С. М., Исследование основных принципов изменения этнических и этнографических явлений, Шанхай, 1923, 135с.

Էթնիկ ինքնության խնդիրը լայն արձագանք գտավ 20 դ. 60-80-ական թթ., երբ սահմանվեցին Յու.Վ. Բրոմլեյի[23], Ա. Ս. Արուտյունովի[24], Ն. Ն. Չեբոքսարովի[25] և Լ. Ն. Գումիլովի[26] տեսություններն ազգային եսպատկերի և էթնոսի վերաբերյալ:

| | |
|---|---|
| Յու. Վ. Բրոմլեյ | էթնոսը դիտում է որպես սոցիալ-մշակութային երևույթ: Էթնոսները բնութագրվում են միևնույն մշակույթով, լեզվով, էթնիկ ինքնագիտակցությամբ, որն արտահայտվում է էթնիկ ինքնանվանման մեջ: Ըստ նրա, էթնոսների գոյությունը կախված չէ անհատների կամքից, այլ ունի օբյեկտիվ պատմական տրամաբանություն: |
| Ա. Ս. Արուտյունով և Ն. Ն. Չեբոքսարով | էթնոսը դիտում են կոմունիկացիայի տեսության համատեքստում: Էթնոսները նրանք տեղափոխում են տեղեկատվական դաշտ, որոնց ժառանգանությունն ու կայունությունը ապահովվում է միջսերնդային տեղեկատվությամբ |
| Լ.Ն.Գումիլովը | էթնոսը համարում է կենսասոցիալական իրողություն: Ըստ նրա, էթնոսները ծնվում են, զարգանում և մեռնում, և որոնց կյանքի ընթացքը կազմում է մոտ 1200-1500 տարի: Այդ հեղինակը շեշտում է էթնոսների հոգեբանական յուրահատկությունը, ինչն արտահայտվում է կոլեկտիվիզմի զգացողությամբ և դրանով տարբերում յուրայիններին օտարներից]: |

[23] Бромлей Ю. В., Очерки теории этноса, М., 1989, 342 с.; Бромлей Ю. В., Современные проблемы этнографии, М., 1981, 277 с.
[24] Арутюнов С. А., Народы и культуры. Развитие и взаимодействие, М., 1989, 306 с.
[25] Чебоксаров Н. Н., Чебоксарова И. А. Народы. Расы. Культуры, М., 1985, 272с.
[26] Гумилев Л. Н.,География этноса в исторический период, Л., 1990, 422 с.; Гумилев Л. Н, Этногенез и биосфера земли, Л., 1989, 367 с.; Гумилев Л.Н., От Руси к России: Очерки этической истории, М., 1992, 149 с.

| | |
|---|---|
| Ն. Գ. Սկվորցով[27] | էթնիկության մասին խոսելիս, բերում է Մ.Բենքսի կարծիքը նրա մասին, որ դեռ պարզ չէ «էթնոս» եզրույթի նշանակությունը, կիրառումն ու այլ հասկացությունների հետ նրա հարաբերակցումը: Նույն կարծիքին է Ա.Պ.Սադոխինը: |
| Ա. Պ. Սադոխին[28] Զ. Վ. Սիկևիչ[29] | Գտնում են, որ իրենց ժամանակակիցների կողմից դեռևս չի ստեղծվել էթնոսի էության և կառուցվածքի համընդհինուր մի սահմանում |
| Տ. Գ. Ստեֆանենկո[30] | էթնոսի եզրույթը բավական սակավ է կիրառվում արտասահմանյան գիտական ասպարեզում, իսկ հայրենական գրականության մեջ դեռ չի ստեղծվել համընդհանուր մի կարծիք էթնոսի սահմանման և կիրառելիության շրջանակների վերաբերյալ |
| Ա. Պ. Սախարով[31] | Էթնիկ ինքնությունը բնորոշվում է որպես էթնոսին բնորոշող յուրահատուկ պարտադիր հատկանիշ-ների համալիր |
| Ի. Ա. Նաբոք[32] | անդրադարձել է մի շարք կարևոր հարցերին, ինչպիսիք են անձի էթնիկ և քաղաքացիական պատկանելության համադրումը, ընդհանուր առմամբ, անձի էթնիկ ինքնության՝ որպես ազ- |

[27] Скворцов Н.Г., Проблемы этничности в социальной антропологии, СПб., 1996, 296 с.

[28] Садохин А.П, Грушевицкая Т.Г., Этнология, М., 2000, 304 с.

[29] Сикевич З.В., Социология и психология национальных отношений. Учеб. пособ., СПб., 1999, 203 с.

[30] Стефаненко Т. Г.,Этнопсихология: практикум: Учебное пособие для студентов вузов,М., 2006, 208 с.; Стефаненко Т.Г, Социальные стереотипы и межэтнические отношения,-в кн.: Общение и оптимизация совместной деятельности / под ред. Г.М.Андреевой, Я.Яноушека/, М., 1987, 302 с.; Стефаненко Т.Г. Этническая идентичность в ситуации социальной нестабильности, в.кн.: Этническая психология и общество. М., 1997. 468 с.; Стефаненко Т.Г.,Этнопсихология: практикум: Учебное пособие для студентов вузов, М.,1999, 320с.

[31] Տես՝ Токарев С.А., История русской этнографии, М., 1966, 364 с.

[32]Набок И.А., Педагогика межнационального общения: Уч.пос.для студ., М., 2010, 304 с.

| | |
|---|---|
| | գային Ես-պատկերի, դրսևորման խաչաձևվումը պետության նկատմամբ: |
| Ֆրեդերիկ Բարտ[33] | կարևորել է այն գաղափարը, որ էթնիկական խմբերը չեն հանգում էթնիկական տարածքի սահմաններում զետեղված մշակութային արժեքների հանրագումարին: Էթնոսները բնորոշվում են առաջին հերթին այն բնութագրականների շնորհիվ, որոնք կարևորվում են այդ էթնիկական խմբի անդամների կողմից: Այստեղից էլ նա հանգում է էթնիկությանը՝ որպես մշակութային տարբերությունների սոցիալական կազմակերպման ձևի, գաղափարին: Էթնիկությունը ձևավորվում է այն սոցիալական փորձի ենթատեքստում, որի հետ մարդիկ իրենց նույնականացնում են: Ներխմբային տեսակետից էթնիկությունը հիմնվում է այն մշակութային հատկանիշների վրա, որոնց շնորհիվ տվյալ էթնիկական խմբի անդամները տարբերվում են այլ էթնիկական խմբերից: Իսկ արտաքին պատկերացումները էթնիկական խմբի մասին հաճախ հիմնվում են կարրծրատիպային բնութագրականների վրա: |

Մի շարք այլ հեղինակներ հատուկ ուշադրության են արժանացրել անձի տարածական մտածողության կայացման գործում սոցիալական ինքնության հարցադրումները, որոնք նույնպես անուղղակի կերպով մատնանշում են անձի էթնիկության զանազան դրսևորումներին[34]:

[33] Barth F., Ethnic Groups and Boundaries, Boston, 1969, 327p.
[34] Винер Б.Е., Этничность: в поисках парадигмы изучения // Этнографическое обозрение, 1998, № 4,159с.; Ильин В.А. Социально-психологические особенности российской идентичности и тенденции ее трансформации в современных условиях реформирования общества, М., 2003, 177 с.; Губогло М.Н.,1998. Языки

«էթնոս» եզրույթի գոյություն ունեցող սահմանումների բազմության հետ մեկտեղ, հարկ է նշել նրա հասկացութային բավական լայն շրջանակի մասին: Դ.Ի.Ֆելդշտեյնը այսպես է գրում խնդրի ուսումնասիրության յուրահատկության մասին. «էթնոսի գոյություն ունեցող սահմանումները արտահայտում են հատկանիշների որոշակի հատկությունները, բայց չեն արտահայտում էթնոսի բովանդակային էությունը սոցիալ-պատմական հասկացմամբ»:[35]

«էթնոս» եզրույթը (ethnos) առաջացել է հին հունարեն լեզվում և ունեցել է մի շարք նշանակություններ, որոնց հիմնական կորիզը կազմել են «անհատների խումբ,ժողովուրդ, ցեղ, հեթանոսների կամ օտարերկրացիների խումբ» և այլն: Ք.ա.6-5դդ. տիրապետող է դառնում «ոչ հունական ծագում ունեցող ժողովուրդ»-ի նշանակությունը, որով և այն հայտնի դարձավ հռոմեական աշխարհին: Հետագայում աստվածաբանական գրականության մեջ հանդիպում ենք «էթնոսի» և նրանից ածանցյալ «էթնիկական» (ethnicos) եզրույթի «հեթանոսական, ոչ քրիստոնեական» հոմանիշների: Այս կարճ պատմական ակնարկը արդեն իսկ հուշում է «էթնոսի» հասկացման հիմքում որևէ խմբի հետ (ազգային կամ կրոնական) անձի նույնականացման գաղափարը: 19-րդ դ. գերմանացի ազգագրագետ Ա.Բաստիանի ջանքերով «էթնիկական» և «ազգային» եզրույթները սկսեցին ընկալվել որպես հոմանիշներ:[36]

Բավական մեծ ներդրում է կատարել ռուս ազգագրաագետ Ս. Մ. Շիրոկոգորովը, որը էթնոսը դիտել է որպես մարդկության գոյության և զարգացման միջոց: Նա էթնոսը սահմանել է որպես մարդկանց մի խումբ, որոնք խոսում են նույն լեզվով, ունեն ընդհանուր ծագում, որն ամրագրված է սովորույթների, ավանդույթների և կենսակերպի մեջ, ինչով էլ այդ խումբը տարբերվում է մյուսներից:

Էթնիկական հանրույթի յուրահատուկ ձևակերպում է տվել Մ. Վե-

этнической мобилизации,-в кн.: Языки русской культуры,М., 1998, 816 с.; Козлов В. И., Проблематика этничности,- Этнографическое обозрение,№4, М., 1995, 164 с.

[35] Фельдштейн Е.И., Психология взросления: структурно-содержательные характеристики процесса развития личности, М.,2004, 565 с.

[36] Токарев С.А., История зарубежной этнографии,М.,1978, 320с.

բերը՝ այն դիտելով որպես ընդհանուր ծագման նկատմամբ խմբի ունեցած սուբյեկտիվ հավատքի և արտաքին տեսքի ու սովորույթների նույնականացման արդյունք:[37]

Զուգահեռ «էթնոս» եզրույթի գործառնությանը, գիտական հարթակի վրա շրջանառվում է նաև «էթնիկ ինքնություն» եզրույթը, որը նույնպես ձեռք է բերել բազմիմաստ նշանակություն:

20-րդ դարի 60-ական թթ. անգլախոս գրականության մեջ տարածում գտավ «էթնիկ ինքնություն» եզրույթը, որը հաճախ սահմանվում է որպես էթնիկական խմբերի կամ ինքնությունների տարբերակիչ մի կատեգորիա: Դա իր ենթատեքստում հուշում է ժամանակակից հասարակությունների բազմաէթնիկ բնույթի մասին: Այս իմաստով էթնկ ինքնությունը կարող է հասկացվել որպես էթնիկական խմբին բնորոշ և այլ խմբերից տարբերվող մշակութային գծերի համալիր:

Ֆ.Բարտը էթնիկ ինքնությունը դիտում է հանրույթի սոցիալական և մշակութային սահմանների ներքո, իսկ էթնիկական խմբերը բնորոշում է տվյալ խմբի համար նշանակալի բնութագրականների միջոցով: Նրանց նշանակալիությունը դրվում է խմբի անդամների ինքնագիտակցության հիմքում և, այդ կտրվածքով, էթնիկ ինքնությունը հասկացվում է որպես սոցիալական կազմակերպության մշակութային տարբերությունների ձև՝ ազգային Ես-պատկերով արտահայտված:

Ներկայացնենք էթնիկ ինքնության մի քանի հայտնի սահմանումները.

---

37 Вебер М. Работы М. Вебера по социологии, религии и культуре / АН СССР, ИНИОН, Всесоюз. межвед. центр наук о человеке при президиуме. Вып. 2. — М.: ИНИОН, 1991

**«Էթնիկ ինքնությունը մարդկային հարաբերությունների նախնական ասկրիպտիվ տեսակ է, որը հանգում է արյունակցական և գենետիկական կապերին»[38]**

**«Էթնոսը մարդկանց կայուն հանրույթ է իրեն հատուկ հոգեբանա-մշակութային հատկանիշներով, լեզվով և գիտակցությամբ»[39]**

**«Էթնիկ ինքնոթյունը խմբային բնութագրական է, որն արտահայտվում է «մենք»-«նրանք» համեմատության մեջ: Ընդ որում էթնիկ ինքնության սահմաններն են անհատների ինքնանույնականացման անտրոպոլոգիական հատկանիշները, որոնք հանգում են բիոգենետիկական և բիոսոցիալական ընդհանրությանը: Դա նշանակում է, որ որոշակի գենոտիպերը պատմական հայրենիքի սահմաններում տարբերում են «մեզ» «այլոցից» և այդ ամենը տարբերում է խումբը էթնիկական իմաստով»[40]:**

Այսպես, «էթնոս» և «էթնիկ ինքնություն» եզրույթների սահմանման հիմնական ուղղվածությունը զարգացրել են էթնոհոգեբանությունը, սոցիոլոգիան, մշակութաբանությունը, մարդաբանությունը և շատ այլ գիտություններ: Բոլոր փորձերը իրականացվել են տարբեր մեթոդաբանական հիմքերի վրա, սակայն բոլորի համար ընդհանուր է այն գաղափարը, որ **էթնոսի և էթնիկ ինքնության հասկացութային կորիզը կազմում են ավանդական մշակույթի վրա հիմնված էթնիկական կապերն ու հարաբերությունները: Այսպիսով, էթնիկ ինքնությունը կարելի է բնորոշել որպես մի կատեգորիա, որը նշանակում է էթնիկական խմբերի տարբերակիչ գծերի գոյությունը:**

Մինչև 20դ. 70-ական թթ. «էթնիկ ինքնության» եզրույթը գրեթե չի օգտագործվել ազգաբանական գրականության մեջ: Սակայն միջէթնիկ

---

38 Емельянов Ю. Н., Скворцов Н. Г., Тавровский А. В., Символико-интерпретативный подход в современной культурантропологии,- Очерки социальной антропологии, -под ред. А. С. Мамзина, СПб., 1995, 143 с.

39 Ерасов Б.С., Этнос и цивилизация. Российская цивилизация: Этнокультурные и духовные аспекты: энц. Словарь,- / под ред. Мчедлов М.П./, М., 2001, 528с.

40 Сикевич З.В., Социология и психология национальных отношений. Учеб. пособ., СПб., 1999, 203 с.

կամ միջմշակութային հարաբերությունների սրացման և կոնֆլիկտային իրավիճակների ի հայտ գալուն պես աշխուժացավ նաև էթնիկ ինքնության նկատմամբ գիտական բանավեճը: Արդյունքում հայտնվեցին էթնոսի տարբեր տեսություններ, էթնիկ ինքնության և էթնիկ կոնֆլիկտների բազմապիսի ընկալումներ: Եվ, ընդհանրացնելով գոյություն ունեցող բոլոր տեսությունները, կարելի է խմբավորել և ներկայացնել դրանք երեք տեսական մոտեցումների միջոցով՝ պրիմորդիալ, ինստրումենտալ և կոնստրուկտիվ:

## Պրիմորդիալիստական մոտեցումը

**Պրիմորդիալիստական մոտեցումը** (անգլ., primordial – սկզբնական, նախնական) էթնիկ ինքնության ուսումնասիրության մեջ ձևավորվել և զարգացել է Կ. Գիրցի[41], Ռ. Գամբինոյի[42], Ու. Կոննորի[43], Յու. Վ. Բրոմլեյի[44], Պյեր վան դեն Բերգի[45] ուսումնասիրություններում: Այդ հեղինակները էթնիկ ինքնությունը դիտում են որպես ինքնության բնածին հատկություն, որն ունի օբյեկտիվ հիմք բնության մեջ կամ հասարակությունում: Այսպիսով, էթնիկ ինքնությունը հասկացվում է որպես անձի ինքնության ֆունդամենտալ հիմք, որը չի ենթարկվում որևէ փոփոխությունների:

Պրիմորդիալիստական մոտեցումը սկզբնավորվել է 19 դ. Գերմանիայում: «Պրիմորդիալիստական կապեր» եզրույթը գիտական ասպարեզ է բերել 20դ. ամերիկացի սոցիոլոգ Է.Շիլզը, որն այն կիրառել է ներընտանեկան հարաբերությունների բնութագրման համար: Սակայն այն ավելի լայն տարածում գտավ ամերիկացի մարդաբան Կ.Գիրցի մեկնաբանմամբ: Նա գրում էր. «Բոլոր ժամանակներում յուրաքանչյուր հասարակությունում որոշակի կապերը առաջանում են ավելի շատ բնական կամ հոգևոր մտերմության զգացումից, քան՝ սոցիալական փոխգործողությունից»:[46] Դա վերաբերում է առաջին հերթին էթնիկ կապերին ու հարաբերություններին, ինչը կարելի է որակել որպես պրիմորդիալիստական հարաբերություններ: Վ.Ա.Տիշկովի համոզմամբ, խմբային պատկանելության գիտակցումը գենետիկորեն փոխանցվելիք երևույթ է, քանի որ վաղ անցյալում մտերիմ խմբի անդամներին ճանաչելու ունակությու-

---

[41] Geertz C., The Interpretation of Cultures, N.Y., 1973, 550 p.

[42] Gambino R., Blood of My Blood: The Dilemma of the Italian-Americans,N. Y. 1974, 406 p.

[43] Connor W., Ethnonationalism. The Quest for Understanding. Princeton, 1994, 368p.

[44] Бромлей Ю.В., Этносоциальные процессы: теория, история, современность, М., 1987, 268 с.

[45] Van den Berghe P. L., The Ethnic Phenomenon, N.Y., 1981, 345 p.

[46] Geertz C., The Interpretation of Cultures, N.Y., 1973, 550 p.

նից էր կախված ամբողջ խմբի գոյատևումը:[47] Այս մոտեցման սահմաններում առանձնացան երկու տեսական ուղղություններ, որոնցից առաջինը շեշտը դնում էր էթնիկ ինքնության գենետիկական և աշխարհագրական գործոնների՝, իսկ երկրորդը՝ պատմա-էվոլուցիոն գործոնների վրա՝ կարևորելով հասարակության դերը: Առաջին ուղղության ջատագովներից էր Պյեր վան դեն Բերգը, որը առաջարկել է բնութագրել էթնիկ ինքնությունը որպես գենետիկորեն ամրագրված անձնականի զոհաբերության ձև խմբայինի նկատմամբ: Անձի զոհաբերությունը հանուն խմբի բարօրության թույլ չի տալիս նրան անձամբ փոխանցել իր գենոֆոնդը հաջորդ սերունդներին, բայց հնարավորություն է ընձեռում խմբին գոյատևելու և անուղղակի կերպով պահպանելու այն: Սոցիոբիոլոգիայի կոնցեպտը Պ. Բերգը տեղայնացնում էր հասարակությունների վրա: Նա գրում էր, որ մարդիկ, ինչպես սոցիալական կենդանիներ, նախընտրելով ազգակիցների խումբը սեփական բարօրությանը, մեծացնում են խմբի արդյունավետությունը և գոյատևելու ունակությունը: Այստեղից էլ զարգացել է էթնիկ ինքնության էվոլուցիոն ծագման մասին տեսակետը, որի համաձայն էթնիկ ինքնությունը ձևավորվել է ներխմբային ամուսնությունների արդյունքում և ներկայանում է որպես արյունակիցների մեծ խումբ:

Երկրորդ, էվոլուցիոն-պատմական ուղղությունը սկզբնավորվել է Ի.Գ.Գերդերի և Ս.Մ.Շիրոկոգորովի մեկնաբանությունների շնորհիվ: Այսպես առաջացել է Ս.Մ.Շիրոկոգորովի հայտնի սահմանումը, որի համաձայն «էթնոսը անձանց մի խումբ է, որը խոսում է նույն լեզվով, ունի նույն ծագումը և տիրապետում է սովորությունների ու կենսակերպի միևնույն համալիրին»: Այդ մոտեցումը հետագայում զարգացում է ստացել Յու.Վ.Բրոմլեյի մոտ, որը տվել է էթնոսի նման մի սահմանում. «էթնոսը պատմականորեն ձևավորված որոշակի տարածքի վրա մարդկանց միավորում է, որոնք տիրապետում են ընդհանուր, համեմատաբար ստաբիլ

---

[47] Тишков В. А., Очерки теории этноса и политики этичности в России, М., 1997,531с.

Тишков В. А., Этничность, национализм и государство в посткоммунистическом обществе // Вопросы социологии, 1993, № 1, 148 с.

մշակույթի և պսիխիկայի առանձնահատկություններով, ինչպես նաև իրենց ընդհանրության և այլ նմանատիպ միավորումներից տարբերության գիտակցմամբ»:

Փաստորեն, պրիմորդիալ մոտեցումը էթնիկ ինքնությունը դիտում է սոցիալական կենսաբանության կատեգորիաներով՝ որպես նախնական ինստինկտիվ իմպուլս: Նման կարծիք հանդիպում ենք Լ. Ն. Գումիլովի և Ս. Մ. Շիրոկոգորովի «էթնոսների կյանքի և մահվան» մասին դիտարկումներում, ուր նույնպես սոցիալական բիոլոգիզմը համեմվում է աշխարհագրական դետերմինիզմի հետ: Դրան հարում են Յու.Վ.Բրոմլեյի և Վ. Վ. Պիմենովի[48] «էթնոսների տեղեկատվական տեսությունները»:

Պրիմորդիալիզմի մշակութային մեկնաբանությունը դիտում է էթնոսը որպես որևէ հանրույթ, որի անդամներին բնորոշ են միևնույն բնութագրականները՝ տարածքը, լեզուն, կրոնը, ռասայական տեսակը և խառնվածքը: Որոշ հեղինակներ, ի դեմս Ն.Գլեյերի և Դ.Մոյնիհենի,[49] էթնիկական հանրույթը համարում են սոցիալական արխետիպ: Ժ.Դե Վոեն և Լ.Ռոմանուչչի-Ռոսը[50] էթնիկ ինքնությունը ձևակերպում են որպես խմբային գոյության սոցիալական ձև, որը սերվում է ժառանգական պատկանելություն ունենալու պահանջմունքից: Պրիմորդիալիզմի հայեցակետից կատարվել են այլ ուսումնասիրություններ: Նշենք հակիրճ նրանցից մի քանիսը: Այսպես, Ա.Սմիթը[51] հետազոտել է ժամանակակից ազգերի գենեալոգիան իրենց «էթնիկական արժատների» տեսանկյունից, Ջ.Գրինբերգը[52] կատարել է էթնիկության պատմա-մշակութային դասակարգում և այլն:

---

[48] Пименов В. В., Удмурты. Опыт компонентного анализа этноса, Л., 1977, 279 с.; Пименов В. В., Основы этнологии: Учебное пособие. М., 2007, 394 с.

[49] Glawr N., Moynihan D. P., (eds.) Ethnicity Theory and Experience. Cambr., 1975, 621p.

[50] Romanucci-Ross L., De Vos G., Ethnic Identity. Creation, Conflict and Accommodation, L., 1995, 406p.

[51] Smith A. D., The Ethnic Origins f Nations, Oxf., 1983, 467 p.

[52] Greenberg J., Language in the Americas. Stanford, 1987, 366 p.

Էթնիկ ինքնության ուսումնասիրության հաջորդ փուլը կապված է եղել երևույթի սուբյեկտիվ կողմի լուսաբանման և ազգային (էթնիկ) Ես-պատկերի դրսևորման հետ: Էթնիկ ինքնությունը սկսել է հետաքրքրել հեղինակներին որպես խմբային սոցիալական ինքնության ձև՝ արտահայտված լեզվա-մշակութային բնութագրականներով, և նրանում տեղ գտած անձի ազգային Ես-պատկերի դրսևորում: Այդ հայեցակետը թույլ է տալիս դիտարկել երևույթի թե′ անձնային, և թե′ սոցիալական նշանակությունը և ուղղված է անհատի՝ տվյալ մշակույթին համապատասխան գործելու հարցադրումներին: Էթնիկ ինքնության պրիմորդիալ խմբի ուսումնասիրություններին է պատկանում երևույթի լեզվա-մշակութային մեկնաբանությունը, որը նույնպես էթնիկ ինքնությունը դիտում է որպես «Ես»-ի անբաժան հոգեբանական մաս, իսկ նրա փոփոխությունը համարում է անբնական և պարտադրված: Նման կարծիքը կարող է հիմք դառնալ էթնիկական պատկանելության վրա պետականության ձևավորման տեսություններին: Այդ ուղղության ջատագովներն են Ու. Կոննորը[53], Դ. Միլլերը[54] և Ռ. Սֆավենհագենը[55]:

Այսպիսով, պրիմորդիալիստական մոտեցման համաձայն, էթնոսը հասկացվում է որպես պատմականորեն ձևավորված մարդկանց սոցիալական խումբ և որը առանձնանում է իր ձևավորման տարածքի ընդհանրությամբ: Ընդորում, էթնոսի բնութագրականն է դառնում ոչ թե նշված հատկանիշներից յուրաքանչյուրը առանձին վերցված, այլ՝ իրենց ամբողջությունը:

20դ. 70-ական թթ. արևմտյան ազգաբանության մեջ լայն տարածում գտավ էթնիկության մեկ այլ մեկնաբանում, որին համապատասխան էթնիկ ինքնությունը համարվում է գործիք քաղաքական լիդերների համար իշխանությանը կամ այլ նպատակներին հասնելու համար: Այդ կտրվածքով էթնիկ ինքնությունը դիտվում է որպես սոցիոքաղաքական

---

[53] Connor W., Ethnonationalism. The Quest for Understanding. Princeton, 1994, 368 p.
[54] Miller D., On Nationality, Oxf., 1995, 411p.
[55] Sfavenhagen R., The Ethnic Question: Conflicts, Development and Human Rights. Tokyo, 1990, 522 p.

դաշտում նյութական առավելությանը մարդկանց կոլեկտիվ ձգտում, իսկ տարբեր ձևեր ընդունող էթնիկական մոբիլիզացումը թելադրվում է այս կամ այն նյութական գործոններով, որոնք էլ որոշում են սոցիալական վարքը: Այսպիսով, էթնիկ ինքնությունը ստանձնում է սոցիալական դերի նշանակություն, այս կամ այն նյութական գործոնների ազդեցության ներքո գիտակցաբար ընտրված անձի կամ խմբի կողմից:

## Ինստրումենտալ մոտեցումը

**Ինստրումենտալ մոտեցման** կողմնակիցները ելնում են այն գաղափարից, որ հասարակությունում խմբերի միջև տարբերությունները կարող են հիմք հանդիսանալ յուրաքանչյուր խմբի էթնիկական ինքնությանը, ինչը, իր հերթին, որոշում է միջխմբային հարաբերությունների բնույթը և ուղորդում է էթնիկական խմբերը նպատակաուղղված քաղաքական գործունեության: Այդ պատճառով, ինստրումենտալ մոտեցման ջատագովները հաճախ հենվում են այն սոցիալ-հոգեբանական տեսությունների վրա, որոնցում էթնիկ ինքնությունը համարվում է միջոց էթնիկական հավասարությանը հասնելու համար՝ որպես սոցիալական թերապիա:

Որոշ հետազոտողներ շեշտը դնում են այն բանի վրա, թե ինչպես են ազդում սոցիալական պարագաները էթնիկական համախմբվածության վրա:[56] Այլոք որոշակի սոցիալական պարագաների գործառնությունը տեսնում են որպես ցանկալի քաղաքական, տնտեսական և այլ սոցիալական նպատակներին հասնելու միջոցներ:[57] Ինստրումենտալիզմը, այսպիսով, հենվում է է ֆունկցիոնալիզմի և պրագմատիզմի վրա: Ուստի, էթնիկ ինքնության արդյունք են համարվում էթնիկական առասպելները, որոնք ստեղծվում են հասարակության էլիտայի կողմից և օգտագործվում են որոշակի շահերին հասնելու նպատակով: Այս կտրվածքով մշակութային առանձնահատկությունները, արժեքներն ու էթնիկական խմբերի գործունեությունը համարվում են էլիտայի գործիքներ՝ տվյալ նպատակներին հասնելու համար: Էթնիկ ինքնության գոյությունը դիտվում է օգուտի կատեգորիաներով, ինչն էլ թույլ է տալիս նշանակել էթնիկության այս մեկնաբանումը որպես ուտիլիտար:

[56] Horowits D., Ethnic Groups in Conflict, Berkeley (CA), 1985, 522 p.
[57] Spiro M.E., Social Systems, Personality and Functional Analysis. In: Kaplan, B. Studying Personality Cross-Culturally. Evanston, Ill.: Row, Peterson, 1961, 460 p.

## Կոնստրուկտիվ մոտեցումը

20դ. 70-80-ական թթ. ի հայտ է գալիս էթնիկ ինքնության բացատրման **կոնստրուկտիվ մոտեցումը**: Առավել մեծ արձագանք այն գտավ ԱՄՆ, Կանադայի և Ավստրալիայի գիտական շրջանակներում, ինչը բացատրվում է նրանով, որ այդ երկրներում գրեթե բացակայում էին արմատավորված բնիկ էթնիկ խմբերը՝ բացառությամբ հնդկական ցեղերի ու աբորիգենների: Համաձայն կոնստրուկտիվ մոտեցման, էթնիկ ինքնության հասկացությունը և դրանից բխող էթնոսի մասին պատկերացումները արդյունք են գիտնականների, քաղաքագետների կամ գրողների, ընդհանուր առմամբ, հասարակության էլիտայի գիտակցբար մշակված արժեհամակարգի: Այն արտահայտում է սոցիալական աշխարհի մասին պատկերացումների մի ամբողջություն: Ուստի, այս մոտեցման գաղափարային կիզակետում է գիտակցության և լեզվի դերը, որոնց շուրջն էլ ձևավորվում է էթնիկ ինքնության մասին հասկացումը:

Կոնստրուկտիվ մոտեցումը իր հիմնավորումն է ստացել ամերիկացի մարդաբան Ջ.Կոմարոֆֆի[58] աշխատություններում և զարգացել է նորվեգացի ազգաբան Ֆ.Բարտի կողմից: Վերջինս էթնիկ ինքնությունը սահմանում է որպես սոցիալական ինքնության կատեգորիա: Նա առաջարկեց էթնիկ ինքնության գլխավոր չափանիշ համարել խմբի էթնիկական սահմանները: Ըստ հեղինակի, էթնիկական սահմաններն են ուղորդում սոցիալական կյանքն և այդ պատճառով էլ տարբեր էթնիկական սահմաններում մենք դիտարկում ենք տարբեր մշակութային երևույթներ: Ֆ. Բարտը  բոլոր ներէթնիկ հարաբերությունները կառուցում էր անձի «մշակութային գիտելիքի» վրա, շնորհիվ որի նա ներկայանում է համապատասխան էթնիկական դերով և համարվում էթնիկական խմբի անդամ:[59]

էթնոսի հատկանիշներ է ձեռք բերում միայն այն խումբը, որը գիտակցում է իր հանրույթի յուրահատկությունը և տարբերակում է իրեն այլ նմանատիպ հանրույթներից: Այդպիսի գիտակցումը ընդունված է համա-

---

[58] Comaroff J.L., Comaroff Jean, Ethnicity, Inc., Chicago, 2009, 236 p.

[59] Barth F.,  Ethnic Groups and Boundaries, Boston, 1969, 327p.

րել էթնիկ ինքնագիտակցություն, որի արտաքին արտահայտությունն է էթնոսի ինքնանվանումը: Էթնոսի ինքնագիտակցությունը հանդես է գալիս խմբի ինտեգրատիվ ցուցանիշ, որի մեջ են մտնում տարածքի ընդհանրության, ընդհանուր ծագման և պատմական նույն անցյալի ցուցանիշները: Դա նշանակում է, որ «էթնոս» եզրույթը վերաբերում է այն խմբերին, որոնց անդամները տիրապետում են նույնականացման միևնույն հատկանիշներով՝ ավանդապես սերնդե սերունդ փոխանցվող:

Ընդհանրացնելով էթնիկության դրսևորման սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների վերաբերյալ վերը ներկայացված ակնարկը, կարող ենք փաստել «էթնիկ ինքնություն» եզրույթի աստիճանական հղկվածության և «էթնոսից» նրա տարանջատման միտումների մասին: Այն արտացոլում է սոցիալ-հոգեբանության ուշադրության կենտրոնում գտնվող բազմաէթնիկ հասարակությունների գոյության ու զարգացման առանձնահատկությունները, ազգային (էթնիկ) Ես-պատկերի դրսևորումները և ընձեռում է լայն հնարավորություններ հետագա ուսումնասիրությունների համար:

## Էթնոկրոնական ինքնության եզրույթը

Անձը ապրում և գործում է հասարակության ներքո: Նրա գործունեությունը կրում է հասարակական բնույթ, պայմանավորվում է բազմաթիվ միջնորդավորված և անմիջական կապերով: Դրանք զարգանում են այն սոցիալական հանրույթներում և այն մշակութային միջավայրում, որոնցում ընդգրկված է տվյալ գործունեության սուբյեկտը: Գոյություն չունի մեկուսացված գործունեություն, ինչպես նաև՝ մեկուսացված անձ: Ուստի, անձի էթնոկրոնական ինքնության հատկանիշները ի հայտ են գալիս հաղորդակցման ընթացքում:

Ա.Ն.Լեոնտևը այսպես է գրում հաղորդակցման կարևորության մասին. «Անձի վերաբերմունքը իրեն շրջապատող առարկայական աշխարհի նկատմամբ միշտ միջնորդավորված է մարդկանց և հասարակության նկատմամբ իր վերաբերմունքով»:[60] Հնարավոր չէ ի նկատի չունենալ այս պարագան, քանի որ նպատակահարմար չէ ուսումնասիրել մարդուն հաղորդակցման իր միջավայրից, այն սոցիալական հարաբերություններից դուրս, որոնք հանդես են գալիս նրա ձևավորման հիմնական պայմանները: Ընդհանուր հոգեբանությունը պետք է հետազոտի ոչ թե մեկուսացված անհատի, այլ հասարակության այլ անդամների հետ իր կապի մեջ: Ընդհանուր հոգեբանական մոտեցումը պետք է լրացվի սոցիալ-հոգեբանական մոտեցումով: Կոլեկտիվի ուսումնասիրության կարևորությունը նշել է նաև Վ.Մ.Բեխտերևը, որի համոզմամբ կոլեկտիվը ոչ թե արգելակում, այլ հակառակն, նպաստում է անձի զարգացմանը:[61]

Ինչպես գիտենք, սոցիալական հոգեբանության գլխավոր խնդիրներից մեկը հաղորդակցության խնդիրն է: Հետաքրքրությունը դրա նկատմամբ որոշվում է այն իսկայական դերով, որն այն կատարում է անձի կայացման և զարգացման գործում: Անմիջական և միջնորդավորված

[60] Леонтьев А.Н., Проблемы развития психики, Москва, 1965, с.364.
[61] Бехтерев В.М., Данные эксперимента в области коллективной рефлексологии,-в кн.: Новое в рефлексологии и физиологии нервной системы, Л.-М., 1925, 336 с.

հաղորդակցման ընթացքում անձը ստանում է իրեն շրջապատող աշխարհի մասին գիտելիքներ, յուրացնում է մշակութային և սոցիալական այն արժեքներն ու նորմերը, որոնք ստեղծված են մարդկության զարգացման պատմական ընթացքում:[62] Այսպես կառուցված սոցիալական միջավայրը մարդկանց հասարակական-պրակտիկ գործունեության միջավայրն է: Նրանում գոյությունը արդեն իսկ ենթադրում է համատեղ գործունեության մասնակցություն:[63] Խոսելիս անձի էթնոկրոնական ինքնության մասին, մենք նույնպես առնչվում ենք սոցիալական միջավայրում կատարվող հաղորդակցման տարբեր ձևերի հետ: Դրա յուրահատկությունը կայանում է նրանում, որ անձը ունի հաղորդակցության երկակի բնույթ. նա հաղորդակցվում է ինչպես սեփական էթնիկ խմբի, այնպես էլ՝ օտար էթնիկ խմբերի հետ: Եվ ինքնության դրսևորման մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում անձի կրոնական ինքնությունը: Այս դիտակետը բաց է թողնվել նախկինում կատարված ուսումնասիրությունների մեթոդաբանությունից: Ուստի, տվյալ հետազոտության նպատակն է ուսումնասիրել անձի կրոնական ինքնությունը անձի էթնիկ ինքնության դրսևորման տեսանկյունից:[64]

Յուրաքանչյուր էթնոս բնութագրվում է պարտադիր, յուրահատուկ հատկանիշների համալիրով, որոնք իրենց միավորման մեջ կազմում են «էթնիկ ինքնություն» եզրույթը:

«Էթնիկ ինքնության» եզրույթը ենթադրում է սոցիալական մարկերների կամ նիշերի գոյությունը, որոնք որ խմբերի տարբերակման ընդունված միջոցներն են: Դրանք կարելի է նշանակել որպես էթնիկ ինքնության բաղադրիչներ, որոնց ամբողջությունը դառնում է, մի կողմից, ներկայացուցչական տվյալ էթնիկ խմբի համար և, մյուս կողմից, հիմք է

---

[62] Кон И.С., Социологическая психология, Москва, 1999, 532 с.

[63] Бусс Н.А., Семантическая основа взаимопонимания,-Семантика и социальная психология, Фрунзе, 1976, 154 с.

[64] Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Շնորհի հոգեբանական մեկնաբանությունը փոխհարաբերությունների համակարգում // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, Երևան, 2021 (2), էջ 68-78.; Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Ինքնություն և միջավայր, Երևան, 2021.

հանդիսանում այլ էթնիկ խմբերի ճանաչմանն ու տարբերակմանը: Դրանք են արտաքին տեսքը, աշխարհագրական ծագումը, տնտեսաձևը, կրոնը, լեզուն և այլն: Ուստի «էթնիկ ինքնության» եզրույթը՝ կախված ուսումնասիրության տեսական և մեթոդոլոգիական մոտեցման յուրահատկություններից, կարող է հասկացվել տարբեր բաղադրիչների միջոցով:[65]

Քննելով կրոնական ինքնության բնութագրման միտումները սոցիալ-հոգեբանության մեջ, առավելապես կարևորվում են խնդրի լուսաբանման հետևյալ գլխավոր հարցադրումները. սոցիալ-հոգեբանական, պատմա-մշակութային և կրոնական հարցադրումների համալիր կառուցվածքը: Կրոնական ինքնության սոցիալ-հոգեբանական հարցադրումը բնութագրում է անձի ներ- և միջ-էթնիկ հարաբերությունները և պայմանավորում մյուս երկուսի՝ պատմա-մշակութային և կրոնական հարցադրումների ներկայությունը անձի էթնիկ ինքնության համալիր կառուցվածքում: Այստեղ նկատվում է անձի էթնոկրոնական պատկանելիության գործոնը, որը հանդես է գալիս պատմականորեն ձևավորված և մշակութապես ամրագրված արժեքների ներքո:

Սոցիալ-հոգեբանական հայեցակետից անձի կրոնական ինքնության դիտարկումը անվերապահորեն ենթադրում է սոցիալական խմբերում անձի ներկայացուցչականությունը: Դրանցից առանձնացվում է էթնիկ խումբը իր կայունության և դրսևորման այլ հատկանիշների շնորհիվ: Անձի էթնոկրոնական հատկանիշները արտացոլվում և որակավորվում են շրջապատում իրենց համապատասխան ընկալման տեսակետից: Այլ խոսքերով, անձի կրոնական ինքնության սոցիալ-հոգեբանական քննությունը ուղղակիորեն վերաբերում է էթնիկության դրսևորման մանրամասներին: Ուստի, անձի կրոնական ինքնության առանձնահատկությունները՝ որպես առանձին ուսումնասիրության առարկա, կարիք ունեն

---

[65] Гарфинкель Г., Исследования по этнометодологии, СПб., 2007, 335 с.; Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Անձի ինքնության բնութագիրը սոցիալական միջավայրում // X Годичная научная конференция. Сборник научных статей, Российско-Армянский университет, Ереван, 2015, 410-416.

տեսական և մեթոդաբանական մոտեցումների ճշգրտմանն ու ներկայացմանը:

Ժամանակակից հետազոտողների կողմից սոցիալական ինքնությունը քննվում է կոգնիտիվ և արժեքային բնութագրականների բարդ համալիրի ենթատեքստում: Էթնոկրոնական ինքնության համալիրում առաջարկում ենք առանձնացնել երեք հիմնարար կառուցվածքային միավորները՝ կոգնիտիվ կամ իմացական, աֆեկտիվ կամ զգացմունքային և վարքային հարցադրումները: Առաջին միավորի բովանդակային միջուկը կազմում է կրոնական իրազեկությունը և սեփական էթնոսի կյանքում ունեցած նշանակության իմացությունը: Այստեղ ուրվագծվում են անձի պատկերացումները և արժեհամակարգը: Աֆեկտիվ և վարքային միավորները անխուսափելիորեն ի հայտ են գալիս իմացական միավորի հետ մեկտեղ, էմոցիոնալ երանգ են տալիս նրան և արտահայտվում վարքագծի մեջ:

Ամփոփելով վերը ներկայացված նյութը, հանգում ենք այն եզրակացության, որ էթնիկության դրսևորումները կարող են խմբավորվել երկու մոտեցումների միջոցով.

1. էթնիկ ինքնության կոնստրուկտիվ դրսևորումների, որոնք արտահայտվում են սեփական էթնիկ միջավայրի հետ դրական էթնիկ նույնականացման գիտակցման և այն պահպանելու ցանկության հետ;

2. էթնիկության դեստրուկտիվ դրսևորումների միջոցով, որոնք նշանակվում են այլ էթնիկ միջավայրի հետ անձի ինքնանույնականացման միտումով կամ, հակառակն, անձնային նույնականացման նախընտրության հետ՝ էթնիկի համեմատ: Սակայն, սոցիալական ինքնության կառուցվածքից նրա կարևոր բաղադրիչներից մեկի՝ էթնիկ ինքնության դուրս մղումը, կարող է հանգեցնել բացասական սոցիալ-հոգեբանական հետևանքների և «ես»-ի ամբողջականության կորստի:

Այժմ ներկայացնենք սոցիալական ինքնության էթնոկրոնական բնութագրականը: Այն բացահայտելու համար անձի «Ես-կոնցեպցիայի» համակարգում անհրաժեշտ է ներմուծել և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության առարկա դարձնել անձի կրոնական ես-պատկերը: Այն բնութագրենք որպես անձի պատկանելություն որոշակի կրոնական ուղղությանը և արժեհամակարգին: Անձի կրոնական ես-ը չի կարող արտահայտվել ազգային ես-ից անկախ: Տվյալ էթնոսին պատկանելու գիտակցումը սերտորեն կապված է տվյալ էթնիկ խմբի կրոնական պատկանելիության հետ: Ուստի անձի էթնիկական և կրոնական ես-պատկերները միահյուսված կերպով ներկայացնում են անձի էթնոկրոնական ինքնությունը: Այն կարող է ներառել էթնոտարբերակիչ տարբեր հատկանիշներ, որոնցից կարևորվում են լեզուն, էթնիկ կարծրատիպերը, կրոնական պատկանելիությունը և այլն: Հատկանիշների նշանակության փոփոխումը կապված է պատմական և սոցիալական զանազան գործընթացների հետ: Էթնոկրոնական ինքնության թերի զարգացման, աղճատման կամ աղավաղման դեպքում բախվում ենք ստվերային ինքնության դրսևորումների հետ, որոնք սոցիալ-հոգեբանական դիտակետից ձեռք են բերում ապասոցիալական և էթնոմերժ նշանակություն: Այդպիսի ստվերային դրսևորումներից են միգրացիոն միտումները, օտարամոլության կամ ասիմիլյացիոն երևույթները:[66]

Կրոնական ինքնության հասկացութային շրջանակը, ինչպես տեսանք, սերտ կապերով կապված է հարակից գիտությունների նվաճումների հետ, ուստի առնչվում է, անհրաժեշտաբար, առասպելաբանության, կրոնի սոցիոլոգիայի, հոգեբանության և մշակութաբանության ուսումնասիրությունների հետ՝ քաղելով նրանցից կրոնականության սոցիալական հայեցակետերը:

Այդ պատճառով, բացահայտելու համար անձի կրոնական ինքնության խորին շերտերը, անհրաժեշտ է զուգահեռներ տանել հասարա-

---

[66] Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Էթնոկրոնական ինքնության սոցիալ-հոգեբանական ակնարկ // Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, V Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, 148-150.

կության առասպելական մտածելակերպի առանձնահատկությունների հետ: Ուստի, այդ խնդրի լուսաբանմանը անուղղակի կերպով անդրադարձել են մի շարք մարդաբան-մշակութաբաններ: Հայտնի մարդաբան Բ.Մալինովսկին հետևյալ կերպ է անդրադառնում կրոնի սոցիալական կողմին: Նա կրոնի՝ որպես ամբողջություն, առանձնահատկություններից է համարում պաշտամունքների տոնական և հասարակական բնույթը: Պարզունակ հասարակություններում պաշտամունքի հասարակական բնույթը, կրոնական հավատալիքի և սոցիալական կազմակերպության փոխօգնությունը նույնքան են արտահայտված, որքան՝ զարգացած հասարակություններում:[67]

Այս խնդրին անդրադարձել է նաև Է.Դյուրգհեյմը, որը, իր հետևորդների հետ մեկտեղ պնդում էր, թե կրոնը իր էությամբ սոցիալական է, քանի որ «բոլոր իր Ճշմարտությունները, իր Աստվածը կամ Աստվածները, բուն Նյութը, որից կրոնը ստեղծվում է, այդ ամենը ոչ այլ ինչ է, քան աստվածացված հասարակություն»:

Անձի կրոնական ինքնության արտահայտում է ինչպես զուտ անհատական ծիսա-պաշտամունքային վարքագիծը, այլ կերպ ասած՝ անհատի վարքի «կրոնական» բաղադրիչը, այնպես էլ՝ այդ կրոնականի սոցիալական դրսևորումները՝ «կոլեկտիվը»: Սա կրոնական մտածելակերպի յուրահատկություններից մեկն է, երբ կոլեկտիվ վարքագիծը (ուխտագնացություն, եկեղեցական տոնակատարություններ և այլն) համատեղվում է անհատական վարքագծով (անձի կրոնական ապրումները, պատկերացումները և այլն): Համաձայն Բ.Մալինովսկու, չնայած ծիսակատարությունները կատարվում են հասարակայնորեն, կրոնական բացահայտումները հաճախ մարդը ապրում է միայնակ: Այսպիսով, «կոլեկտիվը» և «կրոնականը», չնայած սերտ կապված են միմյանց, ոչ մի դեպքում չեն համընկնում; հավատքի և կրոնական ոգեշնչման մեջ շատ բաներ հանգում են մարդու անհատական ապրումների մակարդակին, և, ընդհակառակն, գոյություն ունեն բազմաթիվ օրինակներ, երբ մարդկանց կոլեկտիվ կուտակումները չեն կրում կրոնականության ոչ մի իմաստ: Ուստի,

[67] Малиновский Б., Магия, наука и религия, Москва, 1998, 290 с.

անհրաժեշտ է հստակորեն տարանջատել հավատքը և ծեսերի էթնիկական իմաստը մի կողմից, և, մյուս կողմից, դրանք գործելու համար անհրաժեշտ մեխանիզմները և կոնկրետ միջոցները: Այստեղ էլ կարող ենք տեսնել հեղինակի աղոտ ակնարկները անձի էթնոկրոնական ինքնության վերաբերյալ:

Անձի կրոնական ինքնության և՛ սոցիալական, և՛ անհատական երկակի բնույթը բացահայտելու համար անհրաժեշտ է վեր հանել հասարակության առասպելաբանական աշխարհայացքը, որն ընկած է ցանկացած կրոնական մտածելակերպի հիմքում: Ըստ առասպելի սոցիոլոգիական սահմանման, առասպելը կրոնական հավատքի հիմնական դրույթների ամբողջություն է, որն արտահայտվում է որոշակի պատմությունների մեջ: Եվ այդ պատմությունները երբեք չեն ընկալվում որպես ուղղակի անցյալում կատարվածի նկարագրություն: Նույնիսկ մակերեսային հայացքը ցույց է տալիս, որ առասպելը որոշ առումով կրոնական դրույթների բացահայտումն է:[68] Դա հրաշքային իրադարձության «իրական» նկարագրություն է, որն որոշում է աշխարհի կառուցվածքը և բարոյական արարքի էությունը: Այստեղ հանգում ենք խնդրի ուսումնասիրման կարևոր մեթոդոլոգիական հայեցակետին՝ կարծրատիպերի գործառնությանը անձի էթնոկրոնական ինքնության բնութագրման գործում: Նրանց կիրառելիությունը պայմանավորված է իրենց կայունությամբ և էմոցիոնալ վառ բովանդակությամբ, ինչն էլ նպաստում է ձևակերպումների «սեմանտիկական դաշտերի» բացահայտմանը:

«Սեմանտիկական դաշտերը» սովորաբար լինում են խիստ կազմակերպված և բառերից որոշները, որոնք մտնում են տվյալ սեմանտիկական խմբի մեջ, տիրապետում են ավելի մեծ «հասանելիությամբ», քան մյուսները: Դրա շնորհիվ կարելի է ուսումնասիրել անձի կրոնական ինքնության բազմաթիվ արտահայտություններ և գտնել նրանց նույնացման եզրերը էթնիկ ինքնության մեջ:[69]

---

[68] Малиновский Б., Магия, наука и религия, Москва, 1998, 290 с.
[69] Лурия А.Р., Язык и сознание, Москва, 1979, 319 с.; Левин К., Теория поля в социальных науках, СПб, 2000, 368 с.

Անձը ձևավորում է սթերեոտիպեր ինչպես իր, այնպես էլ այլ էթնիկ հանրույթների վերաբերյալ: Որոշակի սթերեոտիպերը առաջանում են, երբ խոսք է գնում ազգային կերտվածքի մասին: Նրանք արտահայտում են սթերեոտիպերի հեղինակ հանդիսացող էթնիկ խմբի կարծիքը այս կամ այն ազգության ներկայացուցչի բնորոշ գծերի վերաբերյալ: Սթերեոտիպ հունարենից թարգմանաբար նշանակում է (stereos - կոշտ, պինդ; typos - հետք):Դա կաղապարացված պատկերացում է որևէ սոցիալական օբյեկտի կամ երևույթի մասին: Ուստի, խոսելիս էթնիկության կայուն հատկանիշների մասին, անհրաժեշտ է անդրադառնալ «յուրային» և «օտար» էթնիկ խմբերի սթերեոտիպերին, որոնք էլ կներկայացնեն անձի էթնիկության կայուն դրսևորումները: Սթերեոտիպային պատկերացումների հավաքագրման աղբյուր կարող են հանդիսանալ միջազգային անեկդոտները, որոնք ներկայացնում են տարբեր ազգությունների ներկայացուցիչների վարքը նմանատիպ իրավիճակում, բանահյուսական իսկայական նյութը, ժամանակակից տեղեկատվական համակարգերը, որոնք այս կամ այն կերպ կաղապարայնացնում են տարբեր ինքնությունների մասին պատկերացումները և այլն:[70]

Այսպիսով, էթնիկ կարծրատիպերը կարող են դիտվել որպես էթնիկ ինքնության ուսումնասիրության մեխանիզմներ, որոնց միջոցով անձը բնորոշում է սեփական և օտար էթնիկ խմբերը: Այդ կարծրատիպերի գործառնության արդյունքում ձևավորվում է անձի էթնոմետ ինքնությունը:

Ընդհանրացնելով, նշենք, որ վերջին տասնամյակներում միջազգային գիտական հարթակներում ի հայտ են եկել բազմաթիվ հոգեբանական, մարդաբանական, լեզվաբանական և մշակութաբանական ուսում-

---

[70] Стефаненко Т. Г., Социальные стереотипы и межэтнические отношения,-в кн.: Общение и оптимизация совместной деятельности (под ред. Г. М. Андреевой, Я. Яноушека), М., 1987, 302 с.; Солдатова Г.У., Психология межэтнической напряженности, М., 1998, 386 с.; Гамезо М.В., Ломов Б.Ф., Рубахин В.Ф., Психилогоческие аспекты методологии и общей теории знаков и знаковых систем,-в кн.: Психологические проблемы переработки знаковой информации, Москва, 1977, 254 с.

նասիրություններ՝ նվիրված սոցիալական ինքնության կազմակերպման օրինաչափություններին և գործառնությանը: Սակայն դրանցում առանձին չի լուսաբանվել էթնոկրոնական ինքնության խնդիրը, և մասնավորապես, նրա գործառնությունը էթնիկ ինքնության դրսևորման մեջ: Չնայած հետազոտության միջոցների և աշխարհայացքային դիրքորոշումների բազմազանության, բոլոր հեղինակները հանգում են այն եզրակացության, որ անձի էթնիկ բնութագրերը անուղղակի կերպով արտահայտում են այն զգացումը, որն ունի անձնային, էթնոկրոնական և սոցիոմշակութային առանձնահատկություններ:[71]

Էթնիկ ինքնության կատեգորիան բացի ռեալականության նշանակումից, որի հետ անձը փոխգործում է ամեն օր, գոյություն ունի անձնային գիտակցության մեջ, գիտական, գեղարվեստական և կրոնական կոնցեպտներում: Էթնիկ ինքնության դրսևորումը այն իմաստային կորիզն է, որը կառուցում և միավորում է անձի ներքին աշխարհը սեփական և օտար մշակույթների հետ, և արտահայտվում է ինչպես հոգու ներքին աշխարհի, այնպես էլ՝ մշակույթի ֆենոմենների և սոցիումի կյանքի մեջ: Ուստի, էթնիկ կերպարների յուրահատկությունը, անշուշտ, կապված է կրոնական աշխարհընկալման բնութագիրների հետ:

Անձի կրոնական ինքնությունն իր ուրույն տեղն է զբաղեցնում էթնիկ ինքնության դրսևորման մեջ: Քանի որ տարբեր էթնիկ հանրույթներում հանդիպում ենք էթնիկության դրևսրումների տարբեր ձևերի գործառնությանը, ուստի դրանցում չեն կարող միանշանակ արտահայտվել կրոնական կամ մեկ այլ ինքնությունները:

Դրանց համակարգման և պատշաճ ներկայացման համար անհրաժեշտ է ունենալ տեսական և մեթոդոլոգիական կայուն հիմքեր՝ համակց-

---

[71] Հակոբյան Ն., Պողոսյան Վ., Խաչատրյան Ա., Ավանդույթների և սիմվոլների գործառույթները անձի արժեհամակարգի ձևավորման համատեքստում. Էթնոհոգեբանական ակնարկ // Բանբեր, Եվրասիա միջազգային համալսարան, 2020, 1, 113-125.;Библер.В.С., Культура. Диалог культур (опыт определения). — Вопросы философии, 1989, № 6, 168 с.; Бурдье П.,Социология политики / Пер. с фр. под ред. Н. А. Шматко/,М., 1993, 206 с.; Дворникова Е.И., Культура. Идентичность. Толерантность, М., 2007,320 с.

ված փորձարարական հետազոտության արդյունքներով, որոնց վրա էլ կկառուցվի էթնիկ ինքնության սոցիալ-հոգեբանական հայեցակետը:

Այսպիսով, առանձնացնելով էթնիկ ինքնության ֆորմալ և բովանդակային բաղադրիչները, կարող ենք փաստել վերջինիս սոցիալ-հոգեբանական ազդեցությունը անձի էթնոմետ դիրքորոշումների վրա: Կրոնական աղավաղված ինքնությունը, հետևապես, ընդգրկվում է էթնոօտարման և էթնոմեկուսացման մեխանիզմների շարքում և նպաստավոր պայմաններ է ստեղծում կրոնական ոչ պաշտոնապես ընդունված ենթակառույցների մեջ մարդկանց ներգրավվմանը:

## Էթնոմշակութային սոցիալականացման եզրույթը

Սոցիալականացումը անձի կողմից տվյալ հասարակության մեջ ընդունված սոցիալական նորմերի, արժեքների և գիտելիքների յուրացման գործընթաց է: Այն թույլ է տալիս անձին համարվելու տվյալ սոցիալական խմբի անդամ և ներկայանալու որպես այդպիսին այլ սոցիալական խմբերին: Անձը ընդգրկվում է սոցիալականացման գործընթացի մեջ կյանքի ողջ ընթացքում, առանց որի նա չի կարող ստանձնել իր վրա որևէ հասարակայնորեն կարևորվող սոցիալական դեր: Անձի սոցիալական կայացումը պայմանավորված է լինում թե սոցիալական միջավայրի հետ նրա փոխգործողության բնույթից, և թե՝ անհատական հատկանիշներից: Նրա արտահայտությունը պայմանավորվում է անձի սոցիալական ձևավորման բնույթով՝ ի նկատի առնելով տարիքային առանձնահատկությունները: Այսպիսով, անձի սոցիալական կերպարը հանդես է գալիս որպես տվյալ հասարակությունում արժևորվող հիմնարար բնութագրական և արտահայտվում է տվյալ սոցիալական խմբի հետ անձի նույնականացման աստիճանով:

Ամբողջացնելու համար անձի սոցիալականացման հասկացութային շրջանակը, հակիրճ ներկայացնենք երևույթի տեսական ուղղությունների զարգացումները:

Մարդաբանական ուսումնասիրություններում սոցիալականացումը դիտվում էր նախ որպես **մշակույթի միջսերնդային տրանսմիսիա**: Նշանավորվում էր մշակութային տարբեր մոդելների ժառանգականությունը և պահպանումը: Այս կտրվածքով ներկայացվում էին այն հասարակությունները, որտեղ երեխաների սոցիալիզացիան դիտվում էր աբսորբացման ավտոմատացված մի գործընթաց՝ երեխան յուրացնում էր մշակույթը միայն նրա հետ փոխգործողության միջոցով: Դրան են վկայում Ֆ.Բոասի, Ռ.Բենեդիքտի և Մ.Միդի մարդաբանական կոնցեպտնե-

րը, երեխաների սոցիալականացումը ներկայացվում էր որպես մշակույթի դիտարկումների և նմանակումների մի համալիր:[72]

Սոցիալականացման մեկ այլ տեսական դիրքորոշում ենք տեսնում Պ.Գրենֆիլդի և Ս.Բրուների անձի կոգնիտիվ զարգացման հոգեբանական ուսումնասիրություններում:[73] Այդ տեսության համաձայն, **երեխան յուրացնում է մտածողության կատեգորիաները՝ փոխգործելով սեփական մշակույթի հետ**, որը համահունչ է համաշխարհային սոցիալական փորձի զարգացմանը: Դրանով էլ սոցիալիզացիայի գործընթացը հասկացվում է համամարդկային զարգացման կատեգորիաներով:

Հոգեվերլուծաբանների կողմից արված եզրակացությունները միտված են, իրենց հերթին, անհատական իմպուլսների սոցիակապես կարևորվող նշանակությունների ձեռքբերմանը: Վայրի պայմաններում մեծացած երեխաները սկսում են հակադրվել սոցիալականացված երեխաների հետ, որոնք համապատասխանում են սոցիալական կարգ ու կանոնին: Սոցիալականացման նման կոնցեպտ հանդիպում ենք Զ. Ֆրեյդի մոտ, որի համոզմամբ, սոցիալական կազմակերպությունների ներքո անձի սեռական իմպուլսները վերափոխվում են սոցիալապես ընդունելի ձևերով:[74] Այդ գաղափարի զարգացումը տեսնում ենք Հ.Հարթմանի մոտ, որը երեխայի սոցիալականացումը ներկայացրել է ադապտացիոն ընդունակությունների զարգացման տեսանկյունից: Ըստ հեղինակի, այդ պարագայում նման ընդունակությունները կարող են ծառայել թե անձին, և թե՝ սոցիալական կազմակերպությանը:[75]

Մեջբերենք նաև Ջ.Ուայթինգի և Լ.Չայլդի հոգեվերլուծաբանական բիհեվիորիզմի կոնցեպտը: Համաձայն նրան, երեխայի առաջնային իմ-

---

[72] Benedict R. Patterns of Culture. Boston and New York: Houghton Mifflin Company, 1934, 120 p.; Мид М., Культура и мир детства, М., 2008, 878с.; Боас Ф., Методы этнологии / Пер. Ю.С.Терентьева // Антология исследований культуры, СПб., 1997, т.1, 539 с.

[73] Greenfield P. and Bruner S., Culture and Cognitive Growth. In: Goslin (ed.) Handbook of Socialization Theory and research. Chicago: RandMcNally, 1969, 623 p.

[74] Браун Дж., Психология Фрейда и постфрейдисты / пер. с англ./, М.,1997, 304 с.

[75] Hartmann H.,Ego-Psychology and the Problem of Adaptation. N.Y., 1950, 740p.

պուլսները ձևավորում են երկրորդային իմպուլսներ այնպես, որ վերջիններս ընդգրկվում են սոցիալական փորձի յուրացման մեջ և արտահայտվում են սոցիալապես նշանավորվող վարքագծում:[76]

Անձի սոցիալականացման պարտադրված բնույթի մասին հետաքրքիր տեսակետ է հայտնել Մ.Սպիրոն: Նա գտնում էր, որ անձն այն դեպքում է ներկայանում որպես սոցիալականացված էակ, երբ նրա վարքը համապատասխանում է հասարակության պահանջմունքներին: Նա տարբերակում է սոցիալապես կոշտ և մեղմ լծակները, որոնք ազդում են անձի սոցիալականացման բնույթի վրա: Դրանց տարբերակումը, իրենց հերթին, պայմանավորված է սոցիալական կազմակերպության քաղաքական և սոցիալական էքսպրեսիվ բնույթով, այսինքն, այն հանգամանքով, թե որքան կոշտ է արտահայտվում սոցիալական կառույցի ինստիտուցիոնալ բնույթը անձի նկատմամբ: Հատկանշական է, որ հեղինակը նման էքսպրեսիվ կամ պրոյեկտիվ ինստիտուցիոնալ սոցիալականացման եղանակներից նշում է նաև կրոնական ինստիտուտները:[77]

Տ.Պարսոնսին հետաքրքրել են սոցիալական համակարգի մեջ անձի ինտեգրման պրոցեսները: Նա գտնում էր, որ անձը յուրացնում էր հասարակական արժեքները իրեն համար նշանակալի այլ անձանց հետ հաղորդակցության ընթացքում: Այլ կերպ ասած, սոցիալիզացիան նա բնութագրում էր որպես հոգեբանական իմացության և արժեքների յուրացման մի գործընթաց: Իմացական մեխանիզմը ներ էր առնում նմանակման և նույնականացման գործընթացները, իսկ արժեքների յուրացումը, ըստ հեղինակի, տեղի էր ունենում ես-ի ձևավորման ընթացքում: Ա.Նալչաջյանը՝ խոսելիս Տ.Պարսոնսի սոցիոլոգիական կոնցեպտի մասին, նրա տեսության մեջ առանձնացնում է սոցիալիզացիայի երեք հիմնական մեխանիզմներ. իմացական, պաշտպանական և ադապտացման

---

76 Whiting John W. M. and Child I. L., Child Training and Personality: A Cross-Cultural Study, New Haven: Yale University Press, 1953, 575p.

77 Spiro M. E., Religion: Problems of Definition and Explanation // Antrjpological Approaches in the Study of Religion. ACA Monograph 3.L., Tavistock, 1966, 565p.; Spiro M.E., Social Systems, Personality and Functional Analysis. In: Kaplan, B. Studying Personality Cross-Culturally. Evanston, Ill.: Row, Peterson, 1961, 460p.

մեխանիզմները: Այս մեխանիզմներից առաջինի շնորհիվ անձը գտնվում է փոփոխությունների վիճակում, սակայն պաշտպանության և ադապտացման մեխանիզմների շնորհիվ նա պահպանում է հավասարակշռությունը՝ վերջիններիս կողմից այդ փոփոխությունների կարգավորման արդյունքում:[78]

Սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների հանրագումարը տվել է Գ.Մ.Անդրեևան, որը հիշյալ երևույթը դիտում է սոցիալական հոգեբանության ողջ կառուցվածքում: Գ.Մ.Անդրեևան սոցիալիզացիան բնորոշում է որպես անձի սոցիալական զարգացման գործընթաց և արդյունք: Սոցիալիզացիան կարող է դիտվել անհատի կողմից կյանքի ընթացքում սոցիալական փորձի յուրացման և վերարտադրության գործընթաց:[79] Այդ փորձի յուրացման ընթացքը կարող է լինել թե սոցիալապես վերահսկվող, և թե՝ տարերային: Հեղինակը առաջինի տակ ենթադրում է կրթության և դաստիարակության դերը հասարակության գիտելիքների, նորմերի և արժեքների յուրացման գործում, իսկ երկրորդի տակ հասկացվում է, նախ և առաջ, տեղեկատվական համակարգերի, իրական կյանքի տարերային իրավիճակների դերը անձի կողմից հասարակական ազդեցությունների յուրացման և վերարտադրության գործում:

Այսպիսով, անձի հասարակայնորեն վերահսկվող գործունեությունը շատ հեղինակներ բնութագրում են որպես սոցիալականացման արտաքին գործոններ, որոնք ներկայանում են սոցիալականացման ինստիտուտների տեսքով: Նման ինստիտուտներից են ընտանիքը, կրթական հաստատությունները, մասնագիտական տարբեր խմբերը:

Ժամանակակից հասարակություններում անձի սոցիալականացման գործում մեծ դեր է խաղում կրթությունը: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում այն սոցիալիզացիայի անբաժան մասն է կազմում: Ժամանակակից կրթության հաջողությունը որոշվում է ոչ միայն նրանով, թե ինչ է անձը

---

[78] Налчаджян А. А., Социально-психическая адаптация личности (формы, механизмы и стратегии), Ереван, 1988, 263 с.
[79] Андреева Г.М., Социальная психология, М., 1999, 375 с.

սովորել, այլև՝ նոր գիտելիք ստանալու և նոր պայմաններում այն կիրառելու ունակությամբ:

Կրթության միջոցով կազմակերպված սոցիալականացումը սկզբունքորեն տարբերվում է անձի վրա տարերային ազդեցություն ունեցող սոցիալականացման լծակներից: Մ.Վեբերը կրթության հիմքն էր համարում սոցիալական գործողությունը, որի նպատակն է խնդիրների նպատակային լուծումը: Ի տարբերություն սոցիումի հետ անձի փոխգործողության միջոցով անընդհատ ընթացող սոցիալիզացիայի, կրթությունը հանդես է գալիս որպես որոշակի ժամանակահատվածի մեջ սահմանափակվող մի գործընթաց: Սոցիալականացման այդ ոլորտը զարգանում և իմաստավորվում է մանկավարժության սկզբունքներին համահունչ: Այն նպատակաուղղված է սոցիալապես ղեկավարվող և կարևորվող դաստիարակության տարածմանը: Բացի այդ, այն, մի կողմից, ձգտում է շեշտել հասարակության համար նշանակություն ունեցող դրական սկզբունքները, և, մյուս կողմից, ջանում է ուղղել անձին բացասական երևույթների հաղթահարման ճանապարհով:

Սոցիալականացման բովանդակությունն, այսպիսով, բնորոշվում է հասարակությունում նշանակալից սոցիալական նորմերի և արժեքների տիրապետմամբ: Չնայած հասարակությունում անձի ներգրավմանը միտված սոցիալականացման ուղղվածությանը, այն նպատակաուղղված է նաև անձի ինքնառեալիզացմանն ու կայացմանը, այլ խոսքերով, անձնային դրական հատկանիշների զարգացմանը:

Ա.Վ.Պետրովսկին առանձնացնում է սոցիալականացման ընթացքում անձի զարգացման երեք փուլ.

- ✓ ադապտացումը,
- ✓ անձնավորացումը,
- ✓ ինտեգրումը:[80]

[80] Введение в психологию, под ред. Петровского А. В., М., 1996, 496 с.; Петровский А. В., Личность. Деятельность. Коллектив, М., 1982, 255 с.

Առաջին՝ ադապտացիոն փուլը, համընկնում է մանկության հետ, երբ անձը յուրացնում է իրեն շրջապատող մարդկանց սոցիալական փորձը և հանդիսանում է դաստիարակության և կրթության օբյեկտ: Երկրորդ փուլում կարևորվում է նախկինում յուրացրած արժեքների և նորմերի անձի վերարտադրության կարողությունը: Դրանք անձը ջանում է վերարտադրել ոչ միայն իրենց սովորական ձևով, այլև՝ փորձում է ներկայացնել յուրովի և տալ երևույթների սեփական մեկնաբանությունները: Անձնավորացման այս փուլը առավել վառ է արտահայտվում դեռահասության շրջանում, երբ անձի գործունեությունը դառնում է ինքնաներկայացման և ինքնահաստատման միջոց: Ինտեգրման փուլը հանդես է գալիս հասարակության հետ անձի գոյատևման համաչափությամբ և ներդաշնակությամբ: Որքանով անձը իրեն գիտակցում է հասարակության լիիրավ անդամ, ընդունում և կիսում է հասարակական նորմերն ու արժեքները, այնքանով նա համարվում է սոցիալականացված և հասարակայնորեն կայացած անձնավորություն: Սոցիալականացման արդյունքում ձևավորվում են անձի այնպիսի հատկանիշներ, որոնք վկայում են տվյալ սոցիալական խմբին նրա պատկանելիության մասին: Անձը իր կյանքի ողջ ընթացքում շարունակում է հանդես գալ սոցիալական հարաբերությունների թե օբյեկտի, և թե՝ սուբյեկտի կարգավիճակում: Այսպիսով, սոցիալականացման օբյեկտ հանդիսացող անձը աստիճանաբար վեր է ածվում հասարակության այլ անդամների նկատմամբ սուբյեկտի և ինքն է ընդգրկվում հասարակական արժքների փոխանցման գործընթացի մեջ: Այդ գործընթացի ընթացքը պայմանավորվում է մի շարք գործոններով: Ա.Վ.Մուդրիկը առանձնացնում է սոցիալականացման չորս գործոնների խմբեր:[81] Հեղինակը մեգագործոնների շարքում է դասում համաշխարհային գործընթացները, որոնք այս կամ այն չափով ազդեցություն են գործում բոլոր մարդկանց սոցիալականացման վրա: Հաջորդ խումբը ներկայացնում են մակրոգործոնները՝ դրանք են պետությունը, էթնոսը, հասարակությունը, որոնք ներգործում են գերազանցապես տվյալ երկրում ապրող անձանց սոցիալիզացիայի վրա: Գործոնների մեկ

[81] Мудрик А. В., Социализация человека: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М., 2004, 304 с.

այլ մակարդակ՝ մեզոգործոնները, ներկայանում են տվյալ երկրում անձանց աշխարհագրորեն համատեղ ապրելու կամ միասին հաղորդակցվելու պարագայում: Դրանք են քաղաքը, գյուղը, համայնքը, հեռուստատեսությունը, տեղեկատվական այլ համակարգերը և այլն: Եվ վերջապես, միկրոգործոնները անձի վրա անմիջապես ներգործություն ունեցող գործոններն են, ինչպիսիք են ընտանիքի, հասակակիցների և շրջապատի հետ շփումը, դաստիարակչական և կրթական կազմակերպությունները, ինչպես նաև՝ հասարակական, կրոնական և այլ նմանատիպ կազմակերպությունները:

Ամփոփելով սոցիալականացման ձևակերպումները, Ա. Վ. Մուդրիկը առանձնացնում է այդ երևույթի սոցիոլոգիական հասկացումը: Ըստ դրա, սոցիալականացումը հանդես է գալիս երկու՝ առաջնային և երկրորդային սոցիալականացման մակարդակներով: Առաջինի տակ հասկացվում է փոքր խմբերում միջանձնային հաղորդակցումը, ինչպիսիք են ընտանիքը, հասակակիցների, այլ մտերիմների, ուսուցիչների և այլոց խմբերը: Երկրորդային սոցիալականացումը տեղի է ունենում սոցիալական մեծ խմբերի և ինստիտուտների մակարդակում: Դրանք են ֆորմալ կազմակերպությունները, կրթական, զինվորական ու պետական այլ հաստատությունները և այլն:

Ամբողջականացնելու համար անձի սոցիալականացման տեսամեթոդական հայեցակետերը, հարկ է կանգ առնել նաև երևույթի մեխանիզմների վրա: Ժամանակակից սոցիալ-հոգեբանական և սոցիոլոգիական գրականության մեջ առանձնացվում են սոցիալականացման մեխանիզմների երկու խոշոր խմբեր՝

- ✓ սոցիալ-հոգեբանական
- ✓ սոցիալ-մանկավարժական մեխանիզմներ:[82]

---

[82] Мертон Р. К., Социальная структура и аномия, в кн.: Социология преступности, М., 1966, 433 с.; Седов Л. А., Социализация,-в кн.: Давыдов Ю. А., Ковалев М. С., Филлипов А. Ф.,Современная западная социология, М.,1990, 455 с.; Кожанова М.

Առաջին խմբին է պատկանում իմփրիթինգը՝ տպավորումը, որը են- թագիտակցական մակարդակի վրա կենսականորեն կարևորվող օբ- յեկտների տպավորումն է: Մեկ այլ մեխանիզմներ են որևէ օրինակի կամ օբյեկտի, ընդհանուր առմամբ, սոցիալական փորձի նմանակումը և նույ- նականացումը:[83] Վերջինս հասկացվում է որպես այլ անձի կամ խմբի հետ տվյալ անձի նույնացումը: Վերը նշված մեխանիզմների գործառ- նության ընթացքում և արդյունքում անձը հայտնվում է ռեֆլեքսիայի՝ որ- պես սոցիալիզացիայի մեկ այլ մեխանիզմի, կացության մեջ: Նա գնահա- տում է սոցիալական տարբեր ինստիտուտներին, ընտանիքին և իր սո- ցիումին բնորոշ արժեքները, ընդունում կամ, հակառակն, մերժում է դրանցից մի քանիսը: Արդյունքում անձն ընտրում է իր համար կարևո- րություն ներկայացնող արժեքների մի համալիր, համապատասխան որի ներկայանում է հասարակությանը: Դրա շնորհիվ անձը այս կամ այն չա- փով ընդգրկվում է սոցիալիզացիայի գործընթացների մեջև ներկայանում տվյալ հասարակության մի մաս:

Սոցիալականացման սոցիալ-մանկավարժական մեխանիզմներից նշանակալի են ավանդական, ինստիտուցիոնալ և միջանձնային մեխա- նիզմները:[84]

Ավանդական մեխանիզմի գործառնությունը հանդես է գալիս ընտա- նիքի և անմիջական շրջապատ կողմից ընդունված վարքի նորմերի, սթե-

---

Б., Этнокультурная социализация ребенка в дошкольном образовательном учреждении Чувашской Республики: программа и методические рекомендации, Чебоксары, 2009, 82 с.; Гармаева Т. В., Особенности этнической идентичности младших школьников и подростков, проживающих в мегаполисе // Психологические исследования: электрон. науч. журн. 2010. N 2(10). URL: http://psyst udy.ru; Баишева М. И., Голикова Р. А., Проблемы этнокультурной социализации мальчиков дошкольного возраста,- http://sibac.info/index.php/2009-07-01-10-21-16/493-2012-01-13-04-45-03 (дата обращения: 09.07.2013); Ушинский К.Д.,О народности в общественном воспитании,в кн.: Педагогические сочинения: В 6 т.,- т. 1, сост. С. Ф. Егоров, М., 1990, 416 с.

[83] Вайнингер О., Пол и характер, М., Форум XIX–XX–XXI, 1991, 168 с.

[84] Крысько В. Г., Психология и педагогика. Вопросы - ответы. Структурные схемы, Мн., 1999, 384 с.

ռեոտիպերի յուրացման արդյունքում: Դա ձևավորում է անձի սովորութային գիտելիքի համակարգը, որին անձը՝կախված այն բանից, թե ինչքանով է համարում այդ շրջապատը հարազատ և ընդունելի, այդքանով ձգտում է նրան հետևել:

Սոցիալականացման ինստիտուցիոնալ մեխանիզմը գործում է հասարակական ինստիտուտների և տարբեր կազմակերպությունների հետ անձի փոխգործողության արդյունքում: Այդ ինստիտուտների միջոցով նա կուտակում է սոցիալապես կարևորվող սոցիալական նորմերի ու հասարակության արժեքների մասին գիտելիքը: Սոցիալականացման ևս կարևոր մեխանիզմ են միջանձնային փոխգործողության ձևերը, որոնք առավել ցայտուն են արտահայտվում դեռահասության տարիքում, սոցիալապես և անձնապես նշանակություն ներկայացնող շփումներում:

Դեռահաս տարիքը (10-15 տարեկան) համարվում է բեկումնային տարիք: Այն կապված է դպրոցականի հոգեկան պրոցեսների, գործունեության լուրջ վերակառուցման հետ: Այս տարիքում սոցիալականացման ընթացքը ձեռք է բերում հատուկ նշանակություն ինքնագիտակցության ձևավորման, էթնիկական և կրոնական ես-պատկերների հստակեցման տեսանկյունից: Լ.Ս.Վիգոտսկին դեռահասության ճգնաժամը կապում է հետաքրքրությունների շրջանակի հետ՝ վերջինս համարելով «դեռահասի զարգացման հոգեբանական խնդիրների բանալին»:[85] Նա նշում է առավել վառ հետաքրքրությունների մի քանի խումբ՝ դրանց անվանելով դոմինանտներ, ինչպես, օրինակ՝ «էգոցենտրիկ դոմինանտ» (հետաքրքրություններ իր անձի նկատմամբ), «հեռավորության դոմինանտ» (դիրքորոշումը դեպի հեռու ապագան), «ջանքերի դոմինանտ» (դժվարություններ հաղթահարելու ձգտում):

Ժ.Պիաժեն սկիզբ է դրել մի շարք ուսումնասիրությունների, որոնք անդրադառնում են էթնիկ ինքնության խնդիրների գիտակցմանը երեխաների մոտ:[86] Նա առանձնացրել է երեք տարիքային փուլ, որոնց ար-

---

[85] Выготский Л.С., Избранные психологические исследования, Москва, 1956, 379с.
[86] Пиаже Ж., Моральное суждение у ребенка, М. 2006, 480 с.

դյունքում երեխայի մոտ ձևավորվում է էթնիկ նույնականացման գիտակցումը.

1. 6-7 տարեկանում երեխան ձեռք է բերում առաջին, անկանոն պատկերացումները սեփական էթնիկ պատկանելության մասին,

2. 8-9 տարեկան հասակում նա շեշտում է ծնողների ազգությունը, իր բնակության վայրն ու մայրենի լեզուն,

3. առավել լիարժեք պատկերացում է ստեղծվում վաղ դեռահասության շրջանում՝ 10-11 տարեկան երեխաները կարողանում են մատնանշել ազգային պատմության մանրամասներն ու կարևորությունը, նշում են նաև մշակութային տարբերությունները:

Վերջին տարիներին մի շարք հեղինակներ անդրադարձել են ոչ միայն էթնիկ ինքնության զարգացման խնդիրներին, այլև առաջ են քաշել էթնիկ ինքնության դրսևորման նոր միավոր՝ էթնիկ հատկանիշների կայունության կամ կոնստանտի բաղադրիչը: Կ. Օկամպոն, Մ. Բերնալը և Պ. Նայթը, որոնք շարունակեցին Ժ.Պիաժեի կոգնիտիվ զարգացման տեսությունը, կարծիք են հայտնել, որ դեռահասության շրջանում էթնիկ կոնստանտների ի հայտ գալը հուշում է, թե էթնիկ ինքնության ձևավորման, և թե հիմնական սոցիալ-հոգեբանական բնութագրականների գիտակցման մասին:[87] Այդ հեղինակների հետազոտությունները, այսպիսով, լուսաբանեցին երեք հիմնական կոնստանտների ժամանակագրական ձևավորման փուլերը՝ սեռական կայուն բնութագրականների գիտակցումից (2-2,5 տարեկան հասակում) մինչև ռասայական (8-9 տարեկան) և էթնիկ կոնստանտների (12-13 տարեկանից ոչ շուտ) գիտակցումը:

Տարբեր գիտությունների հայեցակետից սոցիալականացումը կարող է հասկացվել տարբեր կերպ՝ կախված տվյալ գիտության առջև դրված նպատակներից: Օրինակ, Ի.Վ.Կոժանովը ներկայացնում է մի շարք հարակից գիտությունների դիրքորոշումները երևույթի նկատ-

---

[87] Bernal M. E., Knight G.P., Ocampo K. A., Garza C. A., and Cota M. K.. Ethnic Identity: Formation and Transmission among Hispanics and Other Minorities, Albany: State University of New York Press, 1993,

մամբ:[88] Սոցիոլոգիան այն դիտում է տվյալ միջավայրի դիտակետից՝ այն պայմանների և գործոնների, որոնք պայմանավորում են սոցիալապես կոմպետենտ անձի ձևավորումը: Մարդաբանական հետազոտություններում կարևորվում է մշակույթի ազդեցությունը անձի սոցիալականացման վրա, որի արդյունքն է ադապտացման շնորհիվ անձի կողմից սոցիոմշակութային տարրերի փոխանցումը միջավայրին: Սոցիալական հոգեբանության հայեցակետից սոցիալականացումը ներկայանում է անձի՝ իրեն շրջապատող մարդկանց հետ փոխգործողության գործընթաց է, որի շնորհիվ անձը սոցիալապես զարգանում և ձեռք է բերում նոր գիտելիքներ:

Ուստի, սոցիալականացման սահմանումները նույնպես կարող են տարբերվել՝ բնորոշելով տվյալ գիտության խնդիրներն ու նպատակները: Այդ իսկ պատճառով բերենք երևույթի համեմատաբար ընդհանուր, հանրագիտարանային որոշ ձևակերպումներ: Սոցիալականացումը գործընթաց է, որի շնորհիվ անձը յուրացնում է գիտելիքների, նորմերի և արժեքների որոշակի համակարգը, ինչը թույլ է տալի իրեն հանդես գալ հասարակության լիիրավ անդամ:[89]

Մեկ այլ ձևակերպման համաձայն, **սոցիալականացումն այն հասարակության պատմա-մշակութային փորձի յուրացման և վերարտադրության գործընթաց է, որին տվյալ անձը պատկանում է**:[90]

Կարելի է շարունակել սոցիալականացման զանազան ձևակերպումների շարադրանքը, սակայն բոլոր սահմանումներում կտեսնենք հասարակության հետ փոխգործողության և այդ հասարակությունում ներկայացման անձի բնութագիրը: Սոցիալականացման ընդհանուր պրոցեսների մեջ անհրաժեշտ է նշել էթնոմշակութային սոցիալականացման

---

[88] Кожанов И. В.,Сущность и структура этнокультурной социализации личности. Фундаментальные исследования, № 8 (часть5),- http// www.rae.ru/fs/?section= content&op=show_article&article_id=10001319 (дата обращения: 21.08.2013).

[89] Степанов С. С., Популярная психологическая энциклопедия, М., 2005, 672с.; Рейковский Я., Просоциальная деятельность и понятие собственного „Я“,- Вестник Мос. ун–та,сер. 14, Психология. 1981, N 1, 149 с.

[90] Солдатова Г. У., Психология межэтнической напряженности, М., 1998, 386 с.

կարևորությունը, որը տեղի է ունենում էթնիկ խմբի հետ անձի փոխգործողության ընթացքում: Ամփոփելով երևույթի սահմանման և ուսումնասիրման տարբեր գիտությունների ձեռքբերումները, հստակ կարելի է տարանջատել **էթնիկ, մշակութային և էթնոմշակութային սոցիալականացման եզրույթները**: Առաջինի տակ հասկացվում է **անձի ներգրավումը սեփական էթնիկ խմբի մշակույթին, երբ տեղի է ունենում ինկուլտուրացիայի գործընթացը, այսինքն, տվյալ էթնոսի մշակոյթի յուրացումը**: Էթնիկ սոցիալականացման ընթացքում անձը յուրացնում է ազգային ավանդույթները, վարքագիծն ու աշխարհայացքը: Արդյունքում տեղի է ունենում տվյալ էթնոսի հետ անձի նոյնացումն ու այլ էթնոսներից նրա տարբերակումը:

Մշակութային սոցիալականացումը մի շարք հեղինակներ բնորոշում են որպես **անձի հետ հասարակության մշակութային արժեքների փոխանցման գործընթաց, ինչի արդյունքում անձը ունակ է լինում պատշաճ ներակայանալու տվյալ մշակութային միջավայրում: Իսկ էթնոմշակութային սոցիալականացումը իր մեջ է ներառում վերը նշված երկու բնորոշումների հատկանշական կողմերը**: Այն փոխկապակցված է անձի էթնիկության դրսևորումների հետ և պահանջում է խորը ուսումնասիրություն: Երևույթի այս հայեցակետը անհրաժեշտ է քննել որոշակի էթնոմշակութային միջավայրի սահմաններում՝ բացահայտելու համար այդ միջավայրում անձի սոցիալապես կայացման և գործունեության մանրամասները: Այն անհրաժեշտաբար փոխկապակցված է լինում անձի կրթական ձեռքբերումների հետ, որոնք ներ են առնում ազգային արժեքների և սովորույթների ողջ համալիրը:[91]

Անձի դաստիարակության գործում ազգայինի կարևորության մասին արտահայտվել է դեռ Կ.Դ.Ուշինսկին, որը շեշտել է անձի ազգային ինքնատիպության միջոցով համաշխարհային հանրությանը ներկայացման փաստը և ազգայինի խորը արմատների իրողությունը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ուշադրությունը հրավիրել էթնոմշակութային սո-

[91] Седов Л. А., Социализация,-в кн.: Давыдов Ю. А., Ковалев М. С., Филлипов А. Ф.,Современная западная социология, М.,1990, 455 с.

ցիալականացման կարևոր մի սկզբունքի վրա, այն է, որ էթնիկական սոցիալականացումը, այսինքն սեփական էթնիկ խմբի ազգային մշակույթի և արժեքների յուրացումը, անվերապահորեն ուղեկցվում է համաշխարհային մշակութային արժեքների յուրացման հետ և ընդգրկվում է համաշխարհային մշակութային սոցիալականացման գործընթացի մեջ: Մ. Ի. Բաիշևան և Ռ. Ա. Գոլիկովան կարծիք են ներկայացրել, որ սոցիալականացման ազգային և համաշխարհային միավորները ոչ թե հաջորդում են միմյանց, այլ՝ առաջինը ներ է առնվում երկրորդի մեջ՝ որպես մասը ամբողջի: Ելնելով վերը ներկայացված տեսական վերլուծություններից, կարելի է փաստել էթնոմշակութային սոցիալականացման բարդ, երկարատև մի գործընթաց լինելու մասին, որն արտահայտվելով յուրային էթնիկ խմբում անձի ընդգրկվելու միջոցով, անշուշտ, ներ է առնվում համամարդկային արժեքների յուրացման գործընթացի մեջ: Այդ պրոցեսը կարող է նշանավորվել ներէթնիկ և միջէթնիկ սոցիալականացման համալիրի տեսքով: Այս առումով առանձնահատուկ տեղ են զբաղեցնում անձի սոցիալականացման ընթացքում ձևավորվող էթնիկ ինքնության կայուն հատկանիշները: Նրանց պահպանման գործում մեծ դեր են խաղում սոցիալականացման իմստիտուցիոնալ մեխանիզմները, որոնք ուղորդում և պետականորեն կարգավորում են այդպիսի կայուն հատկանիշների յուրացումը հասարակության կողմից: Ուստի, քննենք այդպիսի մեխանիզմների գործառնության որոշ օրինակներ, ինչպիսիք են պետության և կրթության արժեքային հայեցակետերը:

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ մշակութային օրենսդրության խնդիրներն են ՀՀ քաղաքացիների մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի ապահովումը:

Նույն օրենքի հոդված 8-ը ներկայացնում է ազգային փոքրամասնությունների մշակութային իքնության պահպանման և զարգացման պետական աջակցությունը: Իսկ մշակութային ինքնության տակ հասկացվում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի և մշակութային ժառանգության ողջ համալիրը:

ՀՀ օրենքը կարգավորում է ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները:[92] Նրա հոդված 2.1-ում ասվում է, որ ՀՀ ճանաչում է  Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպես ազգային եկեղեցի ու վերջինիս դերը ազգային ինքնության պահպանման գործում: Սա հետաքրքիր վկայություն է այն բանի, որ պետությունը որպես սոցիալիզացիայի կարևոր ինստիտուտ, իր վրա է վերցնում ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանման գործառույթը, իսկ հայերի ազգային ինքնության գործում առանձնահատուկ կարևորում է եկեղեցու դերակատարությունը: Բացի այդ, եկեղեցու էթնոպահպան մեկ այլ բնութագիր ենք տեսնում ՀՀ կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպես ազգային եկեղեցի ճանաչելու փաստի մեջ: Սա պարզ մատնանշում է այն բանի, որ պետական մակարդակով, այսինքն պետականորեն կառուցվող սոցիալիզացիայի շնորհիվ, եկեղեցին կոչվում է «ազգային», ինչը խոսում է կրոնական և էթնիկ ինքությունների նույնացման մասին: Ավելին, պետության և եկեղեցու միջև հարաբերությունները հոդված 4-ում ճանաչվում են ազգային: Նմանապես սույն օրենքի հոդված 5-ը ընդունում է ազգային եկեղեցու թողած ժառանգությունը որպես ազգային ինքնության հենքի կարևոր և անբաժանելի մաս: Անդրադառնանք նաև սույն օրենքի հոդված 8-ին. այն վերաբերում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարությանը կրթական ոլորտում: Այն համահունչ է պետական գաղափարախոսությանը և դրսևորվում է կրթական ոլորտում էթնոկենտրոն դաստիարակության  սկզբունքների տարածմամբ:

Կրթության ոլորտին է հատկացվում բազմամշակույթ երկրի մշակութային միասնության պահպանման գլխավոր դերը նաև ՌԴ-ում: ՌԴ կրթության մասին օրենքը վկայում է այն մասին, որ պետկան քաղաքականության հիմնական սկզբունքներից է կրթության ոլորտում ՌԴ ազգությունների էթնոմշակութային յուրահատկությունների պահպանումը:[93]

---

[92] ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին օրենք /Համար՝ ՀՕ-80-Ն, Ընդունման ամսաթիվը 22.02.2007/

[93] Федеральный закон Российской Федерации «Об образовании в Российской Федерации» [Электронный ресурс]. – Режим доступа: http://минобрнауки.рф/докум

Այսպիսով, քննելով անձի սոցիալականացման ինստիտուցիոնալ ձևերից վերը ներկայացված պետական կառավարման օրենսդրական լծակները, կարող ենք փաստել, որ նրանք միտված են էթնոմետ սոցիալականացմանը: Կարևորվում են թե մեծամասնություն ներկայացնող էթնիկ խմբի, և թե՝ էթնիկ փոքրամասնությունների ազգային ինքնության և էթնոմշակութային յուրահատկությունների պահպանման գաղափարները: Դրանք պետական գաղափարախոսության հիմքերն են: Եվ հատկանշական է, որ այս հայեցակետից, էթնոկենտրոն սոցիալիզացիայի կառուցվածքի մեջ իր ուրույն տեղն է գտնում պետականորեն ճանաչված կրոնական ինքնությունը՝ ներկայացված պետության և եկեղեցու միջև որոշակի հարաբերություններով: Այստեղ է, որ եկեղեցին՝ համարվելով «ազգային», դառնում է էթնիկ ինքնության դրսևորման կայուն հատկանիշներից մեկը, որի ժառանգությունը, նույնպես պետականորեն, համարվում է «ազգային ինքնության անբաժանելի մաս»: Հարկ է նշել նաև, որ կրթական ոլորտում եկեղեցու էթնոպաշտպան գործառնությունը ձևակերպվում է օրենսդրական դաշտի ներքո, այսինքն, կրում է էթնոկենտրոն սոցիալիզացիայի կոնստրուկտիվ բնույթ՝ նպատակ ունենալով տարածելու համերաշխության և տոլերանտության հիմնարար ժողովրդավարական սկզբունքները:

Ինչպես տեսանք, անձի էթնոմետ սոցիալականացման կարևորագույն ինստիտուցիոնալ մեխանիզմները ձևավորվում են կրթական ոլորտում: Նրանում խաչաձևվում և յուրովի արտահայտվում են անձի ավանդական և միջանձնային սոցիալիզացիայի դրսևորումները, քանի որ կրում են նպատակաուղղված դաստիարակչական բնույթ, ինչպես նաև՝ նպաստում են դեռահասի արժեքային ու մասնագիտական հասունության ու կողմնորոշմանը:

Էթնոմետ սոցիալականացման ընթացքում՝ մասնավորապես կրթական ոլորտում իրականացվող, անձը ոչ միայն յուրացնում է սոցիալական փորձի համաշխարհային տարրերը, այլև արժևորում է սեփական էթնիկ

енты/2974/файл/1543/12.12.29-ФЗ_Об_образовании_ в_Российской_Федерации.pdf (дата обращения: 18.06.2013).

խմբին իր պատկանելությունը: Այդ գործընթացում արտացոլվում են նաև դեռահասների դիրքորոշումները հետագա մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ՝ արտահայտվելով կարիերայի մասին ձևավորված կարծիքների տեսքով, հղկվում են միջանձնային փոխգործողությունների և ավանդաբար սերնդե սերունդ փոխանցվող սոցիալական փորձի շնորհիվ կուտակված գիտելիքները: Այսպիսով, էթնիկապես պայմանավորված սոցիալական արժեքներն ու նորմերը, որոնք սոցիալիզացիայի համապատասխան մեխանիզմների շնորհիվ փոխանցվում են անձին, աստիճանաբար դառնում են անձի սոցիալ-հոգեբանական բնութագրականների մի մասը: Եվ այդ գործընթացում կարևոր դեր է խաղում անձի էթնոկրոնական ինքնության գործառնությունը, որը էթնոկենտրոն սոցիալիզացիայի վճռորոշ գործոններից է:

Անձի էթնոմետ սոցիալականացման կոնստրուկտիվ դրսևորումների ձևավորումը նրա կառուցվածքային և գործառութային տարրերի ամբողջականության արդյունք է: Այսինքն, սոցիալիզացիայի մեխանիզմներից որևէ մեկը առանձին վերցրած չի կարող պայմանավորել անձի էթնիկության ամբողջական արժեհամակարգը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ անձի էթնիկ ինքնության էթնոմետ սոցիալականացման գործում առավելապես կարևորվում է էթնոմշակութային սոցիալականացման կրթական ինստիտուտը, որի նպատակաուղղված գործունեությունը խթանում է դեռահասների մոտ կարիերայի մասին դիրքորոշումների և, ընդհանուր առմամբ, էթնոմետ արժեհամակարգի ձևավորումը:

## Հասկացությունների բառարան

**Միջմշակութային հետազոտություն**

Մարդկային վարքագծի հետազոտման ցանկացած տեսակ, որը համեմատում է երկու և ավելի մշակույթներում քննվող երևույթը: Այս մոտեցումը վերաբերում է, գլխավորապես, մեկ մշակույթի շրջանակներում ստացված գիտելիքի որոշակի բացերի կամ թերությունների ստուգմանն ու համալրմանը, ինչը հուշում է, որ այդ գիտելիքն անհրաժեշտ է ստուգել նաև այլ մշակութային միջավայրերում:

**Միջմշակութային համեմատություններ**

Հետազոտության մեթոդ, որը ենթադրում է ընտրանքի ձևավորում՝ առնվազն երկու մշակույթների ներկայացուցիչների խմբերից, որոնք հետազոտվելու են որոշակի երևույթի կամ վարքագծի դրսևորման մշակութային առանձնահատկությունների կամ նմանությունների բացահայտման նպատակով:

**Միջմշակութային մոտեցում**

Հետազոտական տեսակետ՝ տարբեր մշակույթներում մարդու վարքագծի առանձնահատկությունները հասկանալու համար:

**Մշակույթ**

Դիրքորոշումների, արժեքների, պատկերացումների և վարքի մոդելների համալիր, որը որ ընդունելի է մարդկանց որոշակի խմբի համար, սակայն կարող է տարբեր լինել անհատների համար, և որը փոխանցվում է սերնդե սերունդ:

**Վերընթաց մոտեցում**

Հետազոտական մեթոդ, որի կիրառման ժամանակ հետազոտողները սկսում են աշխատանքը հոգեբանական հետաքրքրություն ներկայացնող օբյեկտի ընտրությունից, որն առկա է որոշակի մշակույթի դիտարկման ընթացքում: Այնուհետև տվյալ օբյեկտը հետազոտվում է այլ մշակույթներում ևս՝ նպատակ հետապնդելով լրամշակելու և կատարելագործելու այդ երևույթը վերլուծող տեսությունը:

**Վարընթաց մոտեցում**

Հետազոտական մեթոդ, որի կիրառման ժամանակ հետազոտողները սկսում են աշխատանքը վարքի տեսությունից և մշակույթի ասպեկտները ներառում են տեսության թերությունների ստուգման և տեսամեթոդական հիմքի ընդլայնման նպատակով:

**Մշակութային յուրահատկություն**

Հետազոտության արդյունք, որը համարվում է ճշմարտացի մեկ կամ մի քանի մշակույթների համար, իսկ մյուսների համար՝ ոչ:

**Մշակույթի օբյեկտիվ տարրեր**

Մշակույթի ֆիզիկական արտահայտությունները. այն օբյեկտները, որոնք մենք փաստացի տեսնում, լսում, համ առնում և շոշափում ենք, ինչպիսիք են հագուստը, սնունդը, երաժշտական գործիքները, մարդկանց տվյալ խումբը ներկայացնող առարկաները, ճարտարապետությունը, այլ:

**Մշակույթի սուբյեկտիվ տարրեր**

Մշակույթի սուբյեկտիվ արտահայտությունները. այն տարրերը, որոնք մենք փաստացի չենք տեսնում, լսում, համ առնում և շոշափում, բայց որոնք մենք ճանաչում ենք, ինչպիսիք են սոցիալական նորմերը, սովորույթները, դիրքորոշումները, արժեքները, այլ:

**Ունիվերսալ**

Հետազոտության արդյունք, որը ճշմարիտ է բոլոր մշակույթների բոլոր ներկայացուցիչների համար:

**Էմիկական երևույթներ**

Կյանքի այն ասպեկտներն են, որոնք զանազանվում են տարբեր մշակույթներում, կամ այն սկզբունքներն ու տեսակետներն են, որոնք մշակութապես յուրահատուկ են:

**Էթիկական երևույթներ**

Կյանքի այն ասպեկտներն են, որոնք նույնական են տարբեր մշակույթներում, կամ ունիվերսալ, համա- կամ վեր-մշակութային սկզբունքներն ու տեսակետներն են

**Էթնոկենտրոնական մոտեցում**

Այլ մարդկանց վարքագծի քննությունն ու մեկնաբանությունն է, որը կատարվում է յուրային մշակութային տեսանկյան տակ:

**Ոչ ճկուն էթնոկենտրոնականություն**

Էթնոկենտրոնական մոտեցում, որը բնորոշվում է սեփական տեսակետը փոխելու և այլոց տեսանկյունից նույն խնդիրը քննելու անկարողությամբ:

**Սոցիալականացման ագենտներ**

Մարդիկ, հաստատություններ և սոցիալական ինստիտուտներ, որոնց մասնակցությամբ իրականացվում է անհատի սոցիալականացումը:

**Ալլոկենտրոն / այլակենտրոն տենդենցներ**

Անհատական մակարդակում կոլեկտիվ տենդենցների արտահայտում:

**Ասիմիլացիա**

Նոր գաղափարների հարմարման գործընթաց՝ աշխարհի և որոշակի մշակույթի արդեն գոյություն ունեցող հասկացման հանդեպ:

**Ատրիբուցիա**

Գործընթաց, որի միջոցով կատարվում են ինչպես յուրային, այնպես էլ օտար անձանց վարքի պատճառների մասին եզրակացություններ:

**Դիսկրիմինացիա**

Այլոց հետ անարդար վարվելաձև՝ հիմնված այլ խմբին իրենց պատկանելիության գաղափարի վրա:

**Ինստիտուցիոնալ դիսկրիմինացիա**

Դիսկրիմինացիա, որը տեղի է ունենում մեծ խմբերի, ինստիտուտների, կազմակերպությունների կամ հասարակության կողմից:

**Իշխանության դիստանցիա**

Մշակութային ցուցանիշ է, որը բնորոշում է բնակչության և իշխանության անհավասարության և խտրականության աստիճանը:

**Կարգավիճակի դիֆերենցիացիա**

Մշակութային ցուցանիշ է, որը բնորոշում է մշակույթների ներսում յուրային ներկայացուցիչների կարգավիճակի տարբերությունը այլ մշակույթներից:

**Դոմեն**

Մշակույթի սոցիալ-հոգեբանական սուբյեկտիվ բնութագրական, որը ներառում է մշակույթի այնպիսի նշանակալի բաղադրատարրեր, ինչպիսիք են դիրքորոշումները, արժեքները, պատկերացումները, կարծիքները, նորմերը, սովորույթները և ծեսերը:

**Իդիոկենտրոն / եսակենտրոն տենդենցներ**

Անհատական մակարդակում անհատականացման տենդենցների արտահայտում:

**Խուսափում անորոշությունից**

Մշակութային ցուցանիշ է, որը բնորոշում է մշակույթի ներսում որոշակի ինստիտուտների զարգացման և ծեսերի պահպանման աստիճանը՝ անորոշության կամ երկիմաստության պայմաններում տագնապայնությանը դիամգրավելու նպատակով:

**Անհատականություն – կոլեկտիվիզմ**

Ցուցանիշ է, որի միջոցով զանազանվում են տարբեր մշակույթներ: Անհատականությունը բնորոշվում է այն աստիճանով, որքանով մշակույթը սնում և բավարարում է անձի Ես-պատկերի ինքնուրույնությունը խմբի համեմատ:: Անհատական մշակույթներում անձի անհատական պահանջմունքներն ու նպատակները գերակա են այլոց պահանջմունքների և նպատակների հանդեպ: Կոլեկտիվ մշակույթներում անձի պահանջմունքները «զոհաբերվում են» խմբի պահանջմունքներին ու հետաքրքրություններին:

**Կատեգորիզացիա**

Գործընթաց, որի միջոցով խմբավորվում և դասակարգվում են հոգեբանական երևույթները:

**Կոնտեքստուալիզացիա**

Մշակութային ցուցանիշ է, որը բնորոշում է մշակույթի ներգործությունը ընդունված նորմայից տարբերվող վարքագծի խրախուսման համար՝ համապատասխան որոշակի կոնտեքստի, որի շրջանակներում տեղի է ունենում վարքագծի դրսևորումը:

**Լարվածություն**

Մշակութային ցուցանիշ է, որը բնորոշում է մշակույթի ներքին հոմոգենության աստիճանը:

**Մշակույթի յուրացում**

Գործընթաց, որի ընթացքում մարդիկ սերում և յուրացնում են հարազատ կամ տվյալ մշակույթում ընդունված վարքի նորմերը և հաղորդակցման առանձնահատկությունները:

**Զարգացման խորշ**

Հարացույց, որի շրջանակներում երեխաները սկսում են ճանաչել մշակույթը: Ներառում է ֆիզիկական և սոցիալական շրջապատը, դաստիարակության գործընթացի հետ առնչվող սովորույթները և դաստիարակների հոգեբանության խնդիրները:

**Գնահատական**

Գործընթաց, որի միջոցով գնահատվում է տարբեր ազդակների նշանակալիության աստիճանը:

**Ցուցանիշ**

Մշակույթի սուբյեկտիվ տարրերի բնութագրական, որը վերաբերելի է ընդհանուր զարգացման կամ փոփոխման միտումներին, որոնք ազդում են անձի վարքագծի վրա և արտացոլում են մշակութային երևույթների նշանակալի կողմերը:

**Ներմշակութային հաղորդակցում**

Հաղորդակցում, որն իրականացվում է նույն մշակութային միջավայրի ներկայացուցիչների միջև:

**Կոդավորում**

Գործընթաց, որի միջոցով մարդը մեթոդի կամ որոշակի մոդալականության գիտակցված կամ ոչ գիտակցված ընտրության շնորհիվ ստեղծում կամ ուղարկում է նշանային հաղորդագրություններ:

**Ապակոդավորում**

Գործընթաց, որի միջոցով մարդն ընդունում է կոդավորված (անհասկանալի) անծանոթ նշանները և փոխակերպում է դրանք իմաստային հաղորդագրությունների:

**Միջմշակութային հաղորդակցում**

Էթնոկենտրոնականության և էթնոռելյատիվիզմի զարգացման համալիր ամբողջություն՝ մշակույթների միջև երկուստեք հաղորդագրությունների ապակոդավորման հնարավորությամբ:

**Միջմշակութային հաղորդակցական կոմպետենտություն**

Միջմշակութային միջավայրերում կամ պայմաններում արդյունավետ հաղորդակցվելու կարողություն:

**Հաղորդագրություններ**

Այն նշանակալի տեղեկատվությունը կամ իմաստը, որը կոդավորման արդյունքում փոխանցվում է հաղորդակցվող կողմին, իսկ ապակոդավորման համակարգերի միջոցով մեկնաբանվում է:[94]

---

[94] Лопухова О. Г., Методология и методы кросскультурной психологии, ФГАОУ ВПО «Казанский (Приволжский) федеральный университет», Казань, 2014.

# ԵՍ-ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ

## Էթնկական Ես-պատկերի բնութագրումը

Յուրաքանչյուր էթնոսի հիմքում փախհարաբերությունների մեջ ընդգրկված և իրենց ազգային հատկանիշները գիտակցող անհատներն են: Այդ հատկանիշների ուսումնասիրության գործում մեծ նշանակություն է ձեռք բերել էթնիկական Ես-պատկերի եզրույթը:

Այդ հասկացությունը հանդիպում է տարբեր բնագավառներում: Այն իր մեջ է ներառում անձի ինքնության և ինքնաարտահայտման բազմապիսի դրսևորումներ, որոնք հանդես են գալիս այլ էթնոսներից՝ որպես սոցիալական մեծ խմբերի, տարբերակիչ բաղադրիչներ:

Ազգային Ես-պատկերը ներկայանում է էթնիկ ինքնության հիմնական հասկացություններից մեկը և ունի տարբեր արտահայտություններ, ուստի, հանդիսանում է հարակից գիտությունների ուսումնասիրությունների առարկա և բնութագրվում է էթնիկ ինքնության եզրույթի համատեքստում: Խոսելիս էթնիկ ինքնության սոցիալ-հոգեբանական բնութագրումների մասին, հարկ է կանգ առնել անձի ինքնագիտակցության կամ «ես»-կոնցեպցիայի սոցիալ-հոգեբանական առումների մասին:

Արտահայտվելով ինքնագիտակցության մեջ, յուրաքանչյուր մակարդակը շեշտում է ինքնության որևէ հարցադրում և ձևավորում համապատասխան «Ես»-կոնցեպցիան: Ամբողջացնելու համար ինքնության բազմաթիվ հարցադրումների համալիրը, ստորև հակիրճ ներկայացնենք «հոգեբանական Ես-ի», ինչպես նաև՝ էթնիկական և կրոնական Ես-պատկերների կառուցվածքը:[95]

Հայտնի է, որ «հոգեբանական ես» եզրույթը հավաքական հասկացություն է՝ բազկացած մի քանի միավորներից: Սոցիալ-հոգեբանության մեջ առանձնացվում են

---

[95] Նալչաջյան Ա.Ա., Էթնիկական հոգեբանություն, Ե., 2001, 544 էջ

- ✓ իրական ես-ը՝ որպես տվյալ պահին սեփական անձի վերաբերյալ իրական պատկերացում;
- ✓ դինամիկ ես-ը՝ որպես մոտ ապագայում ակնկալվող պատկերացում սեփական անձի մասին;
- ✓ ֆանտաստիկ ես-ը՝ բոլոր հնարավոր պայմանների ներքո ցանկալի ես-ի մասին պատկերացում;
- ✓ իդեալական ես-ը՝ այն է, ես-ի կազմավորումը ըստ որոշակի բարոյական ասկզբունքների;
- ✓ ապագա կամ հնարավոր ես-ը՝ անձի ինքնագիտակցությունն է այն բանի մասին, թե ինչպիսին նա կարող է դառնալ ապագայում;
- ✓ իրադրական կամ ներկայացվող ես-երը՝ դրանք դիմակներն են որոշակի իրավիճակներում իրական ես-ը թաքցնելու նպատակով;
- ✓ կեղծ ես-ը՝ բնորոշվում է անձի աղճատված գիտակցությամբ, որի հոգեբանական մեխանիզմներից են ինքնապաշտպանությունն ու ինքնախաբեությունը;
- ✓ էթնիկական ես-ը՝ որը ներկայացնում է ես-կոնցեպցիայում էթնիկ ինքնության բաղադրիչը:

Տեսնում ենք, որ «հոգեբանական ես-ի» համալիր կառուցվածքում իր ուրույն տեղն ունի էթնիկական կամ ազգային ես-ը: Այն բնորոշվում է տվյալ էթնիկ խմբին անձի ինքնության գիտակցմամբ և կարող է իր մեջ ներառել նախորդ ես-պատկերների բնութագրականները: Այսպես, կարելի է առանձնացնել.

- ✓ իրական ազգային ես-պատկերը՝ որպես տվյալ պահին սեփական էթնիկ խմբի մասին անձի պատկերացում;
- ✓ դինամիկ էթնիկական ես-ը՝ որը կնշանակի մոտ ապագայում ակնկալվող պատկերացում սեփական էթնիկ խմբի գոյության և զարգացման մասին;
- ✓ ֆանտաստիկ էթնիկական ես-ը՝ այն է, բոլոր հնարավոր պայմանների ներքո սեփական էթնիկ խմբի աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգեբանական գոյության մասին պատկերացում;
- ✓ իդեալական էթնիկական ես-ը, որը անձնային իդեալական ես-ի նման կմատնանշի տվյալ էթնոի բարոյական սկզբունքների և արժեհամակարգի մասին; ապագա էթնիկական ես-ը կհուշի էթնոսի զարգացման այն սոցիալ-հոգեբանական միտումները, որոնք անձը ակնկալում է ապագայում;
- ✓ իրադրական էթնիկական ես-ը ի հայտ է գալիս կարծրատիպերի տեսքով այլ էթնոսներին ներկայանալու դեպքում իրական ես-ը թաքցնելու նպատակով;
- ✓ կեղծ էթնիկական ես-ը՝ որպես աղճատված ինքնություն հանդիսանում է նախորդ՝ իրադրական ես-ի մի արտահայտություն, երբ էթնոսի մասին գիտելիքներն ու պատկերացումները կեղծվում են:

Էթնիկական ես-պատկերների համակցվածությունը արտահայտվում է անձի էթնիկ ինքնության հասկացության միջոցով՝ այնպիսի հասկացության, որը հանդես է գալիս անձի սոցիալական ինքնության բաղկացուցիչ մաս և ներկայացվում է տվյալ էթնիկ հանրությանը պատկանելության գիտակցման մեջ:

Սոցիալ-հոգեբանության մեջ էթնիկ ինքնությունը դիտվում է որպես անձի սոցիալապես կարևորվող հատկանիշներից մեկը և իր արտահայտությունն է գտնում հաղորդակցման ընթացքում:[96]

---

[96] Hakobyan N., Khachatryan A., Socio-Psychological Mechanisms of the Formation of the Person's Infodemic I-Image // Katchar Scientific Yearbook, ISEC, NAS RA, Yerevan, 2020, 1, 110-116.; Hakobyan N., Khachatryan A., Methodological Approaches to the Study of Person's Identity // Katchar Scientific Yearbook, ISEC, NAS RA, Yerevan, 2020, 2, 50-67.

## Էթնիկ ինքնության բաղադրիչները

Քննելով էթնիկ ինքնության սոցիալ-հոգեբանական դրսևորումները, անհրաժեշտ է ներկայացնել անձի էթնիկ ինքնության ուսումնասիրման շրջանակները:

Տվյալ խնդրին անդրադարձել է Տ.Գ.Ստեֆանենկոն, որը անձի էթնիկ ինքնության կառուցվածքում առանձնացրել է երկու գլխավոր բաղադրիչ՝ կոգնիտիվ (կամ իմացական) և աֆեկտիվ (կամ զգայական):[97] Առաջին բաղադրիչը ներառում է անձի գիտելիքները և պատկերացումները սեփական խմբի յուրահատկությունների մասին, որոնց էթնոտարբերակիչ հատկանիշները ձևավորում են էթնիկության ընդհանոր պատկերը: Երկրորդը ներառում է տվյալ էթնիկ խմբին պատկանելության զգացմունքային շերտը, որի մեջ է մտնում վերաբերմունքը տվյալ խմբի նկատմամբ և նրա հատկանիշների գնահատականը:

Տ.Գ.Ստեֆանենկոն կոգնիտիվ բաղադրիչի բաղկացուցիչ մասերից առանձնացնում է էթնիկ իրազեկությունը և էթնիկ ինքնանվանումը: Ինչպես նշվել է, էթնիկ ինքնության հիմքում ընկած է անձի կարողությունը «յուրայիններին» «օտարներից» տարբերելու մեջ: Այդ տարբերակումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե անձը տիրապետում է սեփական և օտար էթնիկ խմբերի հատկանիշների մասին գիտելիքի պատշաճ ծավալով: Էթնիկ իրազեկության մակարդակով էլ պայմանավորված են լինում տարբերակումների ձևերը, իսկ ավելի լայն իմաստով, էթնիկ ինքնության դրսևորումները:

Էթնիկ ինքնության աֆեկտիվ բաղադրիչը, ինպես ասվեց, արտահայտվում է սեփական էթնիկ հանրության նկատմամբ վերաբերմունքի մեջ: Այն կարող է լինել թե դրական, և թե բացասական: Առաջին դեպ-

---

[97] Стефаненко Т.Г. Этническая идентичность в ситуации социальной нестабильности, в.кн.: Этническая психология и общество. М., 1997. 468 с.

քում անձը բավարարվածություն է զգում տվյալ էթնոսին պատկանելիության գիտակցումից, իսկ երկրորդի դեպքում նա ձգտում է բացառել սեփական էթնիկ ինքնությունը և նախընտրում է ընդգրկվել այլ էթնիկ խմբերի մեջ:

Այսպիսով, խոսելիս էթնիկ ինքնության սոցիալ-հոգեբանական դրսևորումների մասին, անհրաժեշտ է ընդգծել անձի էթնիկ ինքնանույնականացման թե պատկերացումային, և թե զգացմունքային հատկանիշները:

Նույն խնդրին է անդրադարձել նաև Լ.Մ.Դրոբիժևան, որը, ի լրումն վերը նշված բաղադրիչների, էթնիկ ինքնության համալիրում առանձնացնում է նաև վարքային բաղադրիչը:[98] Տվյալ դեպքում այն հասկացվում է որպես անձի ինքնաարտահայտման մեխանիզմ, որի շնորհիվ անձը անդամակցում է տվյալ էթնիկ խմբին: Դա դրսևորվում է տարբեր էթնոկոնտակտային իրավիճակներում համակարգված գործողությունների կառուցման մեջ:

Ինչպես տեսնում ենք, հոգեբանության մեջ ընդունված է առանձնացնել էթնիկ ինքնության  երկու բաղադրիչ; Նրանցից մեկը՝ կոգնիտիվ բաղադրիչը, ունի ռացիոնալ հիմք, իսկ երկրորդը՝ աֆեկիվը, էմոցիոնալ: Ընդորում, աֆեկտիվ  բաղադրիչը շատ դեպքերում հիմնված է լինում կոգնիտիվ միավորի վրա:

Տ.Գ.Ստեֆանենկոն, իր հերթին, հստակ տարբերակում է էթնիկության և էթնիկ ինքնության եզրույթները: Այսպես, էթնիկությունը վերագրելով զուտ սոցիոլոգիական կատեգորիայի, այն սահմանում է էթնիկ պատկանելության օբյեկտիվ կամ ասկրիպտիվ հատկանիշների ներքո: Դրանք են՝ ծնողների էթնիկ պատկանելությունը, ծննդավայրը, լեզուն և մշակույթը: Իսկ էթնիկ ինքնությունը հեղինակը տեսնում է սուբյեկտիվ

---

98 Дробижева Л. М., Российская и этническая идентичность: противостояние или совместимость / Россия реформирующаяся, М., 2002, 381 с.; Дробижева Л.М., Аклаев А.Р., Коротеева В.В., Солдатова Г.У., Демократизация и образы национализма в Российской Федерации 90-х годов, М., 1996, 382 с.

ինքնության համատեքստում, որը չի հանգում էթնիկ ինքնության որպես այդպիսին: Թեև, նկատենք, որ շեշտելով լեզվի և մշակույթի բաղադրիչները էթնիկ ինքնության կազմի մեջ, չի կարելի ներկայացնել դրանք միայն ասկրիպտիվ հասկացմամբ: Չէ որ որոշակի մշակույթին և լեզվին տիրապետման և այլ մշակույթներից տարբերակման արդյունքում անձը կառուցում է իր ամբողջական «Ես»-ը և դրանով արտահայտում իր էթնիկ, իսկ ավելի լայն իմաստով, սոցիալական ինքնությունը:

Լ.Ի.Բլեհերը և Գ.Յու.Լուբարսկին ասկրիպցիան հասկանում են որպես անձի պասիվ կեցվածքի արտահայտություն, այնպիսի արտահայտություն, երբ անձը չի ձգտում ինքնուրույն ձեռքբերումների, այլ ընդունում է իրեն «առաջարկվող» պայմանները և բավարարվում դրանցով: Բացառելով ակտիվ, գործունյա «Ես»-ի գոյությունը, հեղինակները ասկրիպցիայի եզրույթը տեղափոխում են սոցիալական դաշտ, վերածելով այն սոցիալապես նախանշված վարքի կանոններին: Այս կտրվածքով, անձը այնքանով է դրսևորում իր ասկրիպտիվ էությունը, որքանով անվերապահորեն ընդունում է հասարակության կողմից աջառարկվող և պարտադրվող վարքի կանոնները:[99]

Ուստի, էթնիկ ինքնության ասկրիպտիվ հատկանիշները իրավացիորեն ընդգրկելով էթնիկ պատկանելության օբյեկտիվ հատկանիշների ցանկում, կարծում ենք, անհրաժեշտ է ամբողջացնել դրանց հասկացութային շրջանակը և դիտել նաև սոցիալ- հոգեբանական հայեցակետից:

Այսպիսով, ժամանակակից սոցիալ-հոգեբանական գրականության մեջ տեսնում ենք այն միտումը, որի համաձայն անձի ասկրիպտիվ հատկանիշները թեև հասկացվում են էթնիկ ինքնության համատեքստում, բայց, այնուամենայնիվ, դիտարկվում են առանձին: Դա հանգեցնում է անձի ինքնության ուսումնասիրության սոցիալ-հոգեբանական հայեցակետից էթնիկ ինքնության ասկրիպտիվ բաղադրիչի դուրս մղմանը: Այ-

[99] Блехер Л. И., Г. Ю. Любарский, Главный русский спор: от западников и славянофилов до глобализмаи Нового Средневековья,-http://propagandahistory.ru/books/Blekher-L-I---Lybarskiy-G-YU-Glavnyy-russkiy-spor-ot-zapadnikov-i-slavyanofilov-do-globalizma-i-Novogo-Srednevekovya/

նինչ, ասկրիպտիվ ու բովանդակային հատկանիշները փոխկապակցված են միմյանց, արտահայտում են անձի ազգային Ես-պատկերի ամբողջականությունը և, ներառվելով անձի էթնիկ ինքնության հասկացության համատեքստում, լիարժեք չեն կարող դիտվել առանձին վերցված: Ուստի, մենք առաջարկում ենք երևույթի համալիր քննություն՝ չառանձնացնելով անձի ասկրիպտիվ Ես-ը զուտ որպես սոցիոլոգիական, իսկ էթնիկ ինքնությունը՝ որպես հոգեբանական երևույթների: Այդ դիտակետով անձի ասկրիպտիվ հատկանիշը կարելի է ընդգրկել էթնիկ ինքնության հասկացության մեջ՝ համարելով այն ազգային Ես-պատկերի կարևոր բաղկացուցիչներից մեկը:

Մանրամասնենք այս տեսակետը: Մասնակիորեն համաձայնելով Տ.Գ.Ստեֆանենկոյի հետ, էթնիկ ինքնությունը իրավացիորեն կարող ենք դիտել որպես սոցիալական ասկրիպցիա: Անձը նախ և առաջ գիտակցում է իր էթնիկական պատկանելիությունը ըստ իր ծագման աշխարհաագրորեն և սոցիալապես ամրագրված փաստի, որն էլ արտահայտվում է ասկրիպտիվ Ես-պատկերի միջոցով: Դա կարող ենք նշանակել որպես անձի էթնիկ ինքնության ֆորմալ կամ ասկրիպտիվ բաղադրիչ, որն անձին օբյեկտիվորեն տրված սոցիալական իրողություն է: Սակայն, կախված այն բանից, թե ինչքանով է անձը ընդունում այդ իրողությունը, այլ խոսքերով, կախված անձի էթնիկ ինքնության յուրահատկությունից, անձը կարող է ընդունել կամ մերժել ասկրիպտիվ իրողությունը: Ուստի, էթնիկ ինքնության հասկացությունը դառնում է էթնիկության բովանդակային բաղադրիչը, որը կարող է համընկնել կամ տարբերվել ֆորմալ բաղադրիչից: Առաջին դեպքում մենք կունենանք մոնոէթնիկ ինքնության պատկեր, երբ անձը գիտակցում և ընդունում է իր ասկրիպտիվ ստատուսը և անդամակցում է  այդ էթնիկ խմբին: Այդ պարագայում էթնիկ ինքնության բովանդակային բաղադրիչը կհամընկնի ֆորմալ բաղադրիչին: Երկրորդ դեպքում մենք կստանանք երկէթնիկ ինքնության պատկերը, երբ անձը՝ ելնելով  որոշակի մոտիվացիայից, չի ընդունում իր ասկրիպտիվ ստատուսը և  այս կամ այն չափով անդամակցում է այլ էթնիկ խմբին: Սա կնշանակի, որ անձի էթնիկ ինքնության բաղադրիչը չի համընկնում ֆորմալ բաղադրիչին: Այս պարագայում էթնիկ ինքնության

կամ էթնիկության բովանդակային բաղադրիչի ուսումնասիրությունը կզբաղեցնի առանձնահատուկ տեղ: Նրա ուսումնասիրության մեխանիզմները կարող են դիտվել էթնիկ ստերեոտիպերը, որոնց միջոցով անձը բնորոշում է սեփական և օտար էթնիկ խմբերը:[100]

Անձի էթնիկ ինքնության ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք պայմանավորված են սոցիալական շրջապատի և, մասնավորապես, միջխմբային հարաբերությունների յուրահատկություններով: Այդ կտրվածքով, նշանակալից դեր են խաղում միջէթնիկ հարաբերությունների զարգացումները և ընկալումները, որոնք կարող են նպաստավոր լինել անձի էթնիկ ինքնության գիտակցմանը:

Այսպիսով, էթնիկ ինքնությունը բնորոշում է այլ հանրույթների նկատմամբ սոցիալական ինքնության վրա հիմնված այնպիսի մի հանրույթ, որը նրանց հետ գտնվում է բազմաբնույթ կապերի մեջ: Էթնիկությունը ձևավորվում և գոյություն է ունենում անհատների սոցիալական փորձի ենթատեքստում: Ներխմբային տեսանկյունից էթնիկությունը հիմնավորվում է խմբի մշակութային գծերի համալիրի վրա, որոնցով այդ խմբի անդամները տարբերում են իրենց այլ՝ նույնիսկ մշակութային առումով մոտիկ, խմբերից: Նշենք օտար խմբերի էթնիկության վերաբերյալ պատկերացումների ընդհանուր միտման մասին, երբ խմբի մասին արտաքին պատկերացումները ամբողջացվում են և բնութագրում են խումբը կարծրատիպերի միջոցով: Այլ խոսքերով, էթնիկական խմբի ներքին և արտաքին սահմանումներում ներկա են թե օբյեկտիվ, և թե սուբյեկտիվ չափանիշներ:

---

[100] Հակոբյան Ն., Վարդանյան Ն., Բագրատյան Շ., Խաչատրյան Ա., Միգրանտների ինքնության ճգնաժամը էթնոմշակութային մարգինալության համատեքստում // Կաճառ գիտական տարեգիրք, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան, 2018, 1, 249-260.; Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Սոցիալականացումը որպես անձի արժեհամակարգի ձևավորման գործընթաց // IX Годичная научная конференция. Сборник научных статей, Российско-Армянский университет, Ереван, 2015, 378-385; Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Սոցիալական միջավայրի բնութագրման ինտեգրատիվ մոտեցում // Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Գիտական հանդես, Երևան, 2018, 1, 92-112.

Էթնիկ ինքնության գոյության առաջնահերթ պայման է «մենք-նրանք» դուալ հակադրությունը: Այն թույլ է տալիս խոսել տարբեր էթնիկական հատկանիշներ ունեցող անհատների խմբերի էթնիկ ինքնության մասին, որի սահմանները սկզբնավորվում են անհատների անտրոպոլոգիական հատկանիշների ինքնանույնականացմամբ: Գենետիկական և սոցիալական միասնության բնութագրականները, այսպիսով, տարբերում են «մեզ» «այլոցից»: Էթնիկ ինքնությունը գոյություն չունի համեմատությունից և կոմունիկացիայից դուրս: Միայն այլ էթնիկական խմբի հետ փոխգործողության ընթացքում կարող է արտահայտվել սեփական էթնիկական յուրահատկությունը: Այլ խոսքերով, էթնիկ խմբի «մենք-այլոք» համեմատությունը ներկայանում է որպես կայուն հատկանիշ և տարբեր էթնիկական խմբերի փոխգործողությունների ժամանակ ստանում տարբեր բնութագրականներ՝ կրոնական, լեզվական և այլն: Այդ պատճառով էլ էթնիկ ինքնությունը կարող է պահպանվել նույնիսկ առանց ընդհանուր լեզվի և տարածքի, ինչպես դա տեսնում ենք գնչուների մոտ, որոնք պահպանում են իրենց էթնիկ ինքնությունը՝ շնորհիվ այլ ժողովուրդների հետ համեմատության և իրենց յուրահատկության գիտակցության: Էթնիկ ինքնությունը իր մեջ ներ է առնում նաև անձնային մակարդակի վրա գիտակցվող ինքնության հատկանիշը: Ազգային (էթնիկական) «Ես»-ի արտահայտությունը կախված է լինում նրանից, թե ինչպես է անձը բնորոշում ինքն իրեն: Ուստի, էթնիկ ինքնությունը կարևոր տեղ է զբաղեցնում անձնային բնութագրականների կառուցվածքում: Ընդ որում, կրիտիկական, ոչ ստաբիլ իրավիճակում ազգային «Ես»-ի նշանակությունը էականորեն մեծանում է, իսկ սոցիալական կայունության պայմաններում՝ հակառակն, թուլանում է՝ տեղիք տալով զուտ սոցիալական բնութագրականներին:

Էթնիկ ինքնությունը ներ է առնում նաև մշակութային և նշանային կողմերը: Ժամանակակից հասարակությունը բաղկացած է մշակույթի տարբեր բնագավառներից, որոնց սահմանները որոշվում են ոչ թե տարածքով կամ պետության առկայությամբ, այլ կոմունիկացիոն համակարգերի հնարավորություններով:

Իր զարգացման աստիճանով հասարակությունը դառնում է ավելի կառուցողական, իր մեջ սկսում է խորանալ սոցիալական դիֆերենցիացիան, իսկ տարբերությունները առաջնահերթ են դառնում նմանությունների համեմատ և այդ պայմաններում մշակույթը սկիզբ է ծառայում համատեղ նշանային միջավայրի համար: Էթնիկական խմբի բոլոր անդամների համար հասկանալի և համընդհանուր նշանային համակարգի ներդրումը նպաստում է մշակութային համախմբվածությանը տվյալ էթնիկական խմբի սահմաններում և խմբի անդամների կողմից իրենց անդամակցության գիտակցմանը:

Այսպիսով, սոցիալ-հոգեբանական հայեցակետից առանձնացվում է էթնիկ ինքնության ֆորմալ և բովանդակային բաղադրիչները: Առաջին բացադրիչը հասկացվում է որպես անձի ասկրիպտիվ իրողություն, իսկ երկրորդը՝ որպես անձի ինքնության ազգային Ես-պատկեր, որը առաջինի հետ համընկնելու դեպքում կազմում է մոնոէթնիկ ինքնության պատկեր դրական էթնիկական նույնականացման դրսևորումներով:

Ելնելով վերը նշվածից, էթնիկ ինքնությունը կարող է սահմանվել որպես անձի բնութագրական, որը կայանում է տվյալ էթնիկական խմբին կամ հանրությանը անձի պատկանելիության զգացումի մեջ և ձևավորվում է այդ խմբի սոցիալական ընդհանրության գենետիկական սոցիալական հիմքով: Այն արտահայտվում է «մենք»-ի «այլոց»-ի հետ համեմատության մեջ այլ էթնոսների հետ փոխգործողության և փոխհարաբերությունների ընթացքում:

## Էթնիկ ինքնության տեսամեթոդական մոտեցումները

Էթնոկրոնական ինքնության կառուցվածքային ես-կոնցեպցիայի համալիրում առանձնացվում է էթնիկական և կրոնական ես-պատկերնե-րի ամբողջությունը, որն արտահայտվում է անձի էթնոկրոնական ինք-նության միջոցով: Ուստի, կրոնական ես-ը իբրև էթնիկական ես-ի կոգնի-տիվ բաղադրիչի համալրում, պայմանավորում է հուզական և վարքային էթնոմետ դրսևորումները:

Ներկայացնենք ստորև էթնիկ ինքնության բաղադրիչները վերը նշված տեսամեթոդական երեք մոտեցումների սահմաններում:

**Պրիմորդիալիստական մոտեցում**

Առաջին՝ **պրիմորդիալիստական**, մոտեցումը ենթադրում է, որ ան-ձի էթնիկ ինքնությունը հիմնված է որոշակի խմբի կամ մշակույթի հետ հիմնարար կապերի վրա, որոնք կարող են դիտվել որպես գերազանցա-պես կենսաբանական կամ պատմա-մշակութային գործոններ: Այստեղ զգացվում է էվոլյուցիոնիզմի ազդեցությունը՝ պայմանավորված կենսա-բանական, գենետիկական և աշխարհագրական գործոններով:

Էթնոսները, լինելով պրիմորդիալ խմբեր, կրում են սոցիալական, այլ ոչ թե կենսաբանական հանրույթների բնույթ, քանի որ էթնիկական կապերը դիտվում են պատմական փոփոխությունների ներքո:

Էթնոսների ձևավորումը իրենից ներակայացնում է երկարատև պատմական գործընթաց: Էթնոսը պրրիմորդիալիզմի հասկացմամբ ընդ-հանուր հասկացություն է, գիտական եզրույթ, որը նպատակաուղղված է բնութագրելու մարդկանց այնպիսի հանրույթները, որոնք արտահայտ-վում են որոշակի պատմական կտրվածքով: Էթնոսի ձևավորման կար-ևոր նախադրյալներ են համարվում լեզվի և տարածքի ընդհանրությունը: Փաստորեն այդ հատկանիշները կարող են դիտվել որպես կայուն էթնի-կական բաղադրիչներ, որոնցից բխում են մնացած հատկանիշները: Այս-պես, տարածքի ընդհանրությունը պայմաներ է ստեղծում էթնոսի գոյու-

թյան և վերարտադրության համար, ինչպես նաև արտահայտվում է տնտեսական և մշակութային գործունեության մեջ: Ավելին, պրիմորդիալիստական մոտեցման կողմնակիցները էթնիկական տարածքը դնում են էթնիկ ինքնագիտակցության ձևավորման հիմքում, չնայած որ պատմությանը հայտնի են տարածականորեն տարանջատված էթնիկ խմբեր, որոնք շարունակում են պահպանել իրենց մշակութային յուրահատկությունները և ինքնանվանումը:

Մեկ այլ կայուն հատկանիշ է առանձնացվում, ինչպես ասվեց, լեզուն, որը էթնոսի ձևավորման կարևոր պայմաններից է: Լեզվի հետ մեկտեղ կարևորվում են նյութական և հոգևոր մշակույթի տարրերը: Դրանք այնպիսի տարրեր են, որոնց բնորոշ է ավանդականությունն ու կայունությունը՝ սովորույթները, ծեսերը, կրոնը, վարքի նորմերը և այլն:

Եզրակացնելով, կարելի ասել, որ բոլոր պրիմորդիալիստական ուղղությունները մեկնաբանում են էթնիկական հանրույթները որպես ռեալ գոյություն ունեցող խմբեր, որոնք բնութագրվում են կենսաբանական վերարտադրությամբ, ունեն նմանատիպ մշակութային արժեքներ, որոնք արտահայտվում են մշակութային ձևերի արտաքին ընդհանրությամբ և կազմում են փոխգործողությունների ընդհանուր դաշտեր՝ դրանով իսկ ապահովելով խմբի անդամների համար նույնականացումը և այլ խմբերի կողմից նրանց ճանաչումը որպես մեկ հանրության:

**Ինստրումենտալ մոտեցում**

Ի տարբերություն պրիմորդիալ մոտեցմանը, էթնիկ ինքնության **ինստրումենտալ** դիրքորոշման կենտրոնում շեշտը դրվում է ռացիոնալ-ինստրումենտալ հարցադրումների վրա: Այդ ուղղության համաձայն, էթնիկ ինքնությունը կարող է օգտագործվել տվյալ էթնիկական խմբի սոցիալական ակտիվության բարձրացման նպատակով, ինչպես նաև՝ մրցակցության և այլ խմբերի վերահսկողության հաղթահարման, ներխմբային փոխօգնության մեծացման նպատակով: Ինստրումենտալ մոտեցումը, փաստորեն, դիտում է էթնիկ ինքնությունը որպես քաղաքական առասպելների արդյունք՝ ուղղված իշխանությանը հասնելուն: Նման հե-

տազոտություններ է կատարել Պ. Բրասսը: Դ. Հորովիցը էթնիկ ինքնության գործառնությունը տեսնում է զուտ հոգեբանական տեսանկյունից՝որպես կորսված կոլեկտիվ հպարտության և այլ սոցիալական դժվարությունների հաղթահարման միջոց:[101]

Ի տարբերություն պրիմորդիալիստական մոտեցման, ինստրումենտալիզմը չի քննում էթնիկ ինքնության առաջացման օբյեկտիվ հիմքերը, այլ՝ ընդունելով այն որպես փաստ, նպատակաուղղված է այն գործառնությունների հայտնաբերմանը, որոնք իրականացվում են հանրության և էթնոսների կողմից: Ուստի, բացահայտելով, թե ինչպես է էթնիկ ինքնությունը բավարարում անհատների կամ խմբերի պահանջմունքները, ինստրումենտալիզմը չի քննում էթնոսի գոյության օբյեկտիվ հիմքերը (որոնք են՝ աշխարհագրական տարածքով պայմանավորված ընդհանուր ծագումն ու ընդհանուր լեզուն):

Ընդհանրացնելով, կարող ենք փաստել, ինստրումենտալիզի հայեցակետից էթնիկ ինքնության հիմնական բաղադրիչները խմբի գոյության պրագմատիկ նպատակներն են և այն միջոցները, որոնք հանգեցնում են անձի որոշակի հետաքրքրություններին՝այդպիսով կառուցելով նրա կյանքը հասարակության մեջ:

**Կոնստրուկտիվ մոտեցում**

Այս մոտեցման համաձայն էթնիկ ինքնության գլխավոր բաղադրիչ է համարվում գիտակցությունը. խմբին անդամակցությունը կախված է լինում նրանից, թե ինչպես է անձը պատկերացնում իրեն այդ խմբի մեջ: Էթնոսը կոնստրուկտիվիզմի հասկացմամբ՝ դա մարդկանց մի հանրույթ է, որը ձևավորվում է մյուս հանրույթների նկատմամբ սոցիալ-հոգեբանական և մշակութային ինքնանույնականացման հիման վրա՝ արտահայտված ազգային Ես-պատկերի միջովոց: Էթնիկական հանրույթի բաղադրիչ է դառնում ոչ թե հանրույթին հատուկ հատկանիշների թվարկումը (ինչպիսիք են պատմական ընդհանուր անցյալը, լեզուն և ծագումը),

---

[101] Brass P., Ethnic Groups and the State, L., 1985, 420p.; Horowits D., Ethnic Groups in Conflict, Berkeley (CA), 1985, 522p

այլ պատկերացումը այդ հատկանիշների մասին: Ֆ.Բարտը բերում է էթնիկական հանրույթի այնպիսի հատկանիշի օրինակ, ինչպիսին է ընդհանուր ծագումը: Նա շեշտում է, որ ոչ թե ծագումն ինքնին հանդես է գալիս էթնիկ ինքնության հատկանիշ, այլ՝ պատկերացումը կամ առասպելը տվյալ հանրույթի ընդհանուր պատմական անցյալ ունենալու վերաբերյալ: Այսպիսի հասկացմամբ, էթնիկ ինքնության կարևորագույն կատեգորիա կարող է համարվել «սահմանի» մասին պատկերացումը, որն, իր հերթին, արդյունք է անձի էթնիկ ինքնանույնականացման, ուստի, յուրաքանչյուրի համար ունենում է տարբեր մոտիվացիա: Այլ խոսքերով, տարբեր անհատներ՝ ունենալով ընդհանուր աշխարհագրական ծագում, կարող են իրենց նույնականացնել տարբեր էթնոսների հետ՝ կախված նրանից, թե որ էթնիկ հանրույթի սոցիալ-հոգեբանական և մշակութային «սահմաններն» են նրանք համարում հարազատ և որի «սահմանների» մեջ են գիտակցում իրենց ներկայությունը:

Ժամանակակից գրականության մեջ լայն կիրառում է ստացել էթնոսի և էթնիկ ինքնության այն սահմանումը, ըստ որի նրա անդամները ունեն միևնույն էթնոնիմը և նման հատկանիշների կոմպլեքս, որի մեջ ներ են առնվում մշակույթի ընդհանրությունները, ընդհանուր ծագման մասին առասպելը, կոլեկտիվ ընդհանուր պատմական հիշողությունը՝ կապված որոշակի տարածքի հետ, և տիրապետում են համերաշխության ընդհանուր զգացումով: Ընդգծվում է նաև հարցի սուբյեկտիվ հոգեբանական կողմը, որն արտահայտվում է թե ազգային Ես-պատկերի դրսևորմամբ, թե՝ կոլեկտիվ գիտակցությամբ, առասպելաբանությամբ՝ ի տարբերություն նախորդ տեսական մոտեցումներում տեղ գտած օբյեկտիվորեն տրված տարածքի և պատմական ընդհանուր պրոցեսների բաղադրիչների:

Հարկ է նշել, որ էթնիկ ինքնության ուսումնասիրության վերը ներկայացված տեսական մոտեցումները կարող են համադրվել և դիտարկվել միասին՝ լրացնելով մեկը մյուսին: Այդ պարագան թույլ կտա առավելագույնս օգտագործել բոլոր մոտեցումների ձեռքբերումները և միաժամանակ զերծ կպահի նրանց ծայրահեղ ձևակերպումներից:

Նշենք նաև, որ էթնիկ ինքնության կոնստրուկտիվ մոտեցումը կարող է դառնալ մնացած տեսությունների ինտեգրման հիմք:[102]

Այդ եզրակացության նախադրյալներն են հետևյալները. նախ՝ կոնստրուկտիվ մոտեցման գլխավոր տարրերից է խնդրի ուսումնասիրության պատմական հայեցակետը, ինչը հնարավորություն է տալիս տարբեր ժամանակահատվածներով և, հետևապես, տարբեր հարցադրումներով քննարկել էթնիկության երևույթը: Երկրորդ, կոնստրուկտիվ մոտեցման հատկանշական առանձնահատկություններից է արյունակցական կապի առկայությունը էթնիկական ինքնության ձևավորման հարցում: Այդ հանգամանքը այս կամ այն չափով կարևորվում է նաև մյուս երկու տեսական մոտեցումներում: Եվ, երրորդ, էթնիկության կոնստրուկտիվ մեկնաբանությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու փոփոխվող էթնիկ ինքնության դրսևորումները՝ կախված նրանից, թե ինչպես է անձը գիտակցում իրեն տվյալ խմբի մեջ, ինչպես է ձևավորվում ու փոփոխվում ազգային Ես-պատկերը, ինչը առավել կարևորվում է ժամանակակից հասարակությունների ինտեգրման միտումների հետազոտություններում:

Ուստի, էթնիկ ինքնության տարբեր մոտեցումները կարող են չհամարվել իրարամերժ: Նրանց մեկտեղ դիտարկելու և տարբեր ուղղությունների նվաճումները միասին քննելու միտումը ներկայացնում է կոնստրուկտիվ ուղղությունը: Էթնիկ ինքնությունը այս դեպքում դիտվում է սոցիալական դիսպոզիցիաների համակարգում՝ կախված տվյալ ուսումնասիրության ենթատեքստից: Այսպես, Ի.Ուոլերսթայնը էթնիկ ինքնությունը քննում է միջազգային մակարդակում, Մ.Հեչթերը դիտարկում է այն «ներքին կոլոնիալիզմի» տեսանկյունից, իսկ Ֆ.Բարտը՝ միջխմբա-

102 Кольцова В. А., Опыт экспериментального изучения познавательной деятельности в условиях общения,-в кн.: ред.Шорохова Е.В., Методология и методы социальной психологии, Москва, 1977, 247 с.

յին մակարդակի վրա մշակութային սահմանների տեսության ենթատեքստում:[103]

Շեշտելով ազգային Ես-պատկերի հարցադրումը էթնոսի համալիր կառուցվածքում՝ կոնստրուկտիվիստական մոտեցումը գիտական միտքը ուղորդում է դեպի էթնիկ ինքնության ուսումնասիրումը:

Ժամանակակից հոգեբանական գիտության մեջ առանձնացվում են էթնիկ ինքնության մի քանի խոշոր տեսակներ: Ստորև հակիրճ ներկայացնենք նրանց առանձնահատկությունները:

Անհատների մեծամասնությանը բնորոշ է մոնոէթնիկ ինքնությունը, որը համընկնում է անձի ազգային պատկանելիության հետ: Օտար էթնիկ խմբի հետ մոնոէթնիկ ինքնության փաստը հանգեցնում է ասիմիլյացիայի, այսինքն, այս կամ այն չափով օտար էթնիկ խմբի ավանդույթների, արժեքների և լեզվի ընդունմանը: Առանձնացվում է նաև երկէթնիկ ինքնության խումբը, երբ անձը գիտակցում է իր նույնականացումը երկու փոխգործող էթնիկ հանրույթների հետ: Այդ դեպքում էթնիկության դրսևորումները կապակցված են լինում երկու էթնիկ խմբերի հետ:

Էթնիկ ինքնության դրսևորման այսպիսի բարդ, մշակութապես խաչաձևված տարբերակները կարող են ունենալ անձի համար թե բարենպաստ, և թե հակառակ արտահայտություններ: Առաջին դեպքում ենթադրվում է, որ անձը խմբերից մեկի փորձը ունակ է լինելու կիրառել մեկ այլ էթնիկ խմբի հետ փոխգործողության ժամանակ, ինչը նպաստելու է անձի ադապտացիոն գործընթացներին: Երկրորդ դեպքում և սեփական, և օտար էթնիկ խմբերի հետ փոխգործողությունների ժամանակ կարող է նկատվել էթնիկ ինքնության թույլ արտահայտված պատկերը:

103 Валлерстайн И., Миросистемный анализ // Время мира. Альманах современных исследований по теоретической истории, макросоциологии, геополитике, анализу мировых систем и цивилизаций (Под ред. Н. С. Розова), Новосибирск, 1998, Выпуск 1, 312 с.; Hechter M., Internal Colonialism. The Celtic Fringe in British National Development, 1536—1966, L., 1975, 298p.; Barth F.,  Ethnic Groups and Boundaries, Boston, 1969, 327p.

Այդպիսի սահմանային նույնականացումը՝ որպես էթնիկ ինքնության մարգինալ դրսևորում, կարող է նկարագրվել երկու էթնիկ խմբերի արժեքների և լեզվի վատ տիրապետման և ադապտացիոն գործընթացների ոչ լիարժեք պատկերով: Այդ դեպքում անձի էթնիկության հոգեբանական արտահայտությունները կբացառեն էթնիկական գործոնի կարևորությունը ի դեմս անձնային գործոնի:[104]

[104] Հակոբյան Ն., Խաչատրյան Ա., Անձի մարգինալացման գործընթացը և սոցիալական փոխգործողության տեսակները // Проблемы развития личности в условиях глобализации: психолого-педагогические аспекты, II Международная научно-птактическая конференция, Российско-Армянский университет, Ереван, 2020, 2, 25-37; Hakobyan N., Khachatryan A., Structure of Person's Psychological Resources in Emergency Situations // The 9th International RAIS CONFERENCE ON SOCIAL SCIENCES AND HUMANITIES, USA, 2018, 1, 167-182; Hakobyan N., Khachatryan A., Socio-Cultural Interpretation of Person's Psychological Resources in Emergency Situations // Main Issues of Pedagogy and Psychology. Scientific Periodical, Yerevan, 2020, 1, 65-82.;Hakobyan N., Khachatryan A., Marginality and Ethno-Cultural Environment // Paradigms of knowledge, 2018, 3, 44-52.

## Կրոնական Ես-պատկերի բնութագրումը

Անձի սոցիալական ինքնության համալիր հարցադրումների ներքո կարևոր տեղ է գրավում անձի կրոնական ինքնության ուսումնասիրության խնդիրը, որը որոշակի չափով առնչվում է անձի՝ շրջակա աշխարհի հետ հաղորդակցվելու և նույնականացվելու հարցին: Ուստի, ունի և՛ գիտական, և՛ կիրառական հսկայական նշանակություն: Այն հանդես է գալիս որպես անձի սոցիալ-հոգեբանական զարգացման, հասարակության մեջ ինտեգրվելու և ինքնառեալիզացիայի հզոր լծակ:[105] Անդրադառնալով անձի կրոնական ինքնության սոցիալ-հոգեբանական մանրամասներին, ուղղակիորեն վեր են հանվում հաղորդակցման ուսումնասիրման բազմաբնույթ հարցադրումները:

Անձի կրոնական ինքնության երևույթը, որպես անձի կրոնական պատկանելիության արտահայտում, նախկինում գրեթե չի ընդգրկվել սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության շրջանակներում: Պատճառները կարող ենք փնտրել ինչպես խնդրի ուսումնասիրման բարդության, այնպես էլ՝ թեմայի միջդիսցիպլինար բնույթի մեջ: Այժմ հոգեբանության մեջ նկատելիորեն աճում է հետաքրքրությունը խնդրի շուրջ: Օրինակ, ի հայտ են գալիս կրոնական ինքնության մասին տեսակետներ, որոնք կապվում են գիտակցության փոփոխված վիճակների հետ: Քննելով այն սոցիալ-հոգեբանության դաշտում, ուրվագծվում է հասարակական կարծիքի կարևորությունը կրոնական ինքնության վերաբերյալ և պատկերվում որպես հասարակության հետ անձի նույնականացման և հաղորդակցման եղանակներից մեկը:

Ուստի, անձի կրոնական ինքնության սոցիալ-հոգեբանական արտահայտությունների պատշաճ ուսումնասիրումը կարելի է իրականացնել հարակից մի քանի գիտությունների շրջանակներում, որոնք այս կամ այն

[105] Леонтьев Д. А., Современная психология мотивации, М., 2002, 343 с.; Лотман Ю. М., К построению теории взаимодействия культур, в кн.: Лотман Ю. М., Семиосфера, СПб., 2001, 341 с.

կերպով առնչվում են վերը նշված թեմային՝ հոգեբանության, սոցիոլոգիայի, ազգագրության, լեզվաբանության և այլն:

«Ինքնության» հասկացությունը ինքնին կրում է միջդիսցիպլինար բնույթ: Նրա ուսումնասիրության շրջանակը ձևավորվել է ընդհանուր հոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետազոտություններում:

Գիտական ասպարեզում «ինքնություն» եզրույթի կիրառումը տարածում է գտել Է.Էրիքսոնի շնորհիվ:[106] Այդ եզրույթին է հարում Զ. Ֆրեյդի կողմից շրջանառվող «նույնացման» հասկացությունը, որը նա բնորոշել է որպես անձանց միջև էմոցիոնալ կապի արտահայտում:[107] Սոցիալ-հոգեբանական գրականության մեջ այդ եզրույթի բովանդակային շեշտը դրվում է սոցիալական կողմի վրա:

Հարկ է նշել նաև Է.Ֆրոմմի և Կ.Գ.Յունգի աշխատությունները: Է.Ֆրոմմը առաջիններից է «ինքնության» եզրույթը քննել սոցիալական ինքնության շրջանակներում: Նա իր «Бегство от свободы» աշխատության մեջ ցույց է տվել ինքնության կապը որոշակի պատմական փուլերի հետ, ինչը նոր խոսք էր սոցիալ-հոգեբանության մեջ:[108]

Ինքնության հետագա ուսումնասիրությունները իրենց զարգացումն են գտել միջխմբային հարաբերությունների հոգեբանության մեջ: Նշանակալի ներդրում է կատարվել Ա. Թեջֆելի և Ջ. Թերների կողմից սոցիալական ինքնության կոնցեպտը ինքնակատեգորիզացիայի տեսության միջոցով քննելու ուղղությամբ:[109] Ա. Թեջֆելը իր տեսության հիմքում առաջ էր քաշում սոցիալական որոշակի հանրույթի գաղափարը, որն ուներ անձնային և սոցիալական հակադիր մակարդակների փոխգործողությունների հնարավորություններ: Զարգացնելով սոցիալական

---

106 Эриксон Э., Идентичность: юность и кризис, М., 1996, 344 с.

107 Фрейд З., Психология масс и анализ человеческого Я, М., 1925, 98 с.; Фрейд. З. Тотем и табу. Психология первобытной культуры и религии, М.,1991, 170 с.

108 Фромм Э.,Бегство о свободы,М., 2011, 288 с.; Юнг К.Г., Архетип и символ, Москва, 1991, 304 с.

109 Tajfel H. and Turner J. C., The social identity theory of inter-group behavior, In S. Worchel and L. W. Austin, Psychology of Intergroup Relations, Chigago, 1986, 485p.

ինքնության Ա.Թեջֆելի մոտիվացիոն տեսությունը, Ջ. Թերները ներմուծել է ինքնակատեգորիզացիայի կոգնիտիվ տեսությունը՝ հիմնված եռաստիճան, փոխադարձ հակադիր կատեգորիաների վրա՝ համամարդկային, սոցիալական և անձնային: Վերը նշվածի լույսի ներքո ներկայացնենք նաև ներկայումս գիտական հարթակներում կիրառություն գտած «կրոնական Ես-պատկեր» եզրույթը, որը նույնպես հիմնված է համամարդկային՝ որպես որոշակի կրոնական ուսմունքի կրողի, սոցիալական՝ որպես տվյալ կրոնական ուսմունքի սահմաններում գոյություն ունեցող որոշակի ուղղության կրողի, և անձնային կատեգորիաների ամբողջություն: Այսպես, քրիստոնեության մեջ կարող ենք տարանջատել ուղղափառ, կաթոլիկ կամ նեսթորական կոնֆեսիաները: Ի դեպ, կոնֆեսիաներ կոչվում են ինչպես քրիստոնեական եկեղեցու կողմից պաշտոնապես ընդունված ուղղությունները, այպես էլ՝ ինքնակոչ ենթակառույցները, ինչպիսիք են աղանդները, որոնք թեև իրենց համարում են «քրիստոնյա», սակայն եկեղեցու կողմից պաշտոնապես մերժված են ու դիտարկվում են պայմանականորեն:

Սոցիալ-հոգեբանական հայեցակետից անձի կրոնական Ես-պատկերի քննությունը ենթադրում է անձի ինքնության ուսումնասիրություն, ինչը հնարավորություն է տալիս կրոնական խմբերում դիտարկել անձի որոշակի սոցիալ-հոգեբանական արտահայտությունները:

Ինչպես տեսնում ենք, անձի սոցիալական և, մասնավորապես, կրոնական Ես-պատկերի լուսաբանումը հոգեբանական գրականության մեջ հանգում է, ընդհանուր առմամբ, անձի՝ հասարակության հետ փոխգործողությունների բացահայտմանը: Այն կարող է ներկայացվել որպես հասարակության մեջ անձնային զարգացման դրսևորումներից մեկը: Դատելով խնդրի միջդիսցիպլինար էությունից, կարող ենք փաստել բազմաթիվ գիտական վկայությունների մասին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են կրոնական ինքնության սոցիալ-հոգեբանական հայեցակետին:

Խնդրի բացահայտման գիտամեթոդաբանական մոտեցումներից նշենք Հոլդշտեյնի և Հեկհաուզենի հայացքները:[110] Այսպես, անձի կրոն-

[110] Хекхаузен Х. Мотивация и деятельность. Т. 1. М., 1986.

նական ինքնության երևույթը կարելի է հասկանալ անձի ինքնառեալի-զացիայի շրջանակներում: Խնդրի այդ կողմին անդրադարձել է Հոլդշ-տեյնը, համաձայն որի հայացքների՝ շրջակա աշխարհը դադարում է հանդես գալ լոկ որպես ինքնառեալիզացիայի համար խոչընդոտների աղբյուր, այլ, ընդհակառակն, ներ է առնվում իր դրական սահմանման մեջ, երբ անհատը գտնվում է աշխարհի նկատմամբ «ադեկվատ հարա-բերության մեջ»: «Ինքնառեալիզացիան առկա է, երբ անհատը ընդունակ է կատարել այն, ինչը պահանջում է իրենից աշխարհը»: Այս դիրքորո-շումը հուշում է անձի կրոնական ինքնության՝ որպես շրջապատում անձի ինքնադրսևորման և ներկայացման փաստի մասին:

Համաձայն Հ. Հեկհաուզենի կարծիքի, անձի ինքնառեալիզացիային և ինքնահաստատմանը նպաստում է նվաճման մոտիվացիայի իրագոր-ծումը: Մեր խնդրին է առնչվում հատկապես մոտիվացիայի այն շեշտա-դրումը, որը վերաբերում է գերբնական աշխարհի հետ փոխգործողու-թյուններին, նրանից ակնկալվող որևէ արդյունքին և, իր հերթին, այդ աշխարհին ուղղվող անձի հարցադրումներին: Անձի էթնոկրոնական ինքնությունը, այդպիսով, նպատակաուղղվում է ցանկալի արդյունքի ապահովմանը: Դա մոտիվացիայի այն ձևն է, որն անձի կողմից ակնկա-լում է որևէ նվաճում:

Էթնոհոգեբանական հետազոտության տեսանկյունից կարևորվում են կրոնի հոգեբանության այնպիսի դրսևորումները, որոնք՝ լինելով ան-ձի ինքնաարտահայտման միջոց, արտացոլում են հասարակության ազ-գային-հոգեբանական գոյության և ինքնության յուրահատկությունը:

Կրոնական ինքնության դրսևորումները ի հայտ են գալիս անձի սո-ցիալականացման պրոցեսների հետ զուգընթաց՝ որպես սեռա-տարիքա-յին, սոցիալական, հոգևոր և զարգացման այլ չափանիշների հանրագու-մար: Այդ գործընթացի արդյունքում անձը ձեռք է բերում համապատաս-խան սոցիալական դեր, որի կատարման համար կիրառում է տարբեր մոտեցումներ և դիրքորոշումներ: Ուստի, մատնանշելով կրոնական ինք-նության ուսումնասիրության հոգեբանական առումները, նախ և առաջ

հարկ է նշել անձի ինքնությանը վերաբերող սոցիալ-հոգեբանական գիտամեթոդաբանական նվաճումների մասին:

Անձի ինքնության հոգեբանական ուսումնասիրության հարցում մեծ ներդրում ունի Ս.Կ.Նարտովա-Բոչավերը:[111] Նա անդրադարձել է անձի սոցիալական ինքնության հարցերին անձի հոգեբանական տարածության բնորոշման շրջանակներում:

Հետևելով անձի հոգեբանական տարածության Ս.Կ.Նարտովա-Բոչավերի ձևակերպմանը, մենք այն նշանակում ենք որպես «կեցության սուբյեկտիվորեն կարևորվող ձև», որը բնորոշում է անձի ակտուալ գործունեությունը: Ըստ Վ.Ի.Սլոբոդչիկովի, հոգեբանական տարածությունը ներ է առնում ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական երևույթների մի ամբողջ համալիր, որոնց հետ անձը իրեն նույնականացնում է: Այն ներկայացված է վեց չափանիշների միջոցով, որոնց դեպրիվացիան վկայում է հոգեբանական տարածության սահմանների խախտման մասին:[112] Փաստորեն, հոգեբանական տարածության եզրույթը, իր մեջ ներառելով անձի սոցիալ-հոգեբանական հատկանիշները, ունակ է նաև արտահայտելու անձի էթնոկրոնական ինքնության յուրահատկությունները:

Ամփոփելով վերը նշված գիտական մոտեցումների ընտրանին, կարող ենք վկայել անձի կրոնական, իսկ լայն իմաստով, սոցիալական ինքնության վերաբերյալ հոգեբանական գիտական մտքի աստիճանական զարգացման մասին: Ինքնության եզրույթը՝ ձևավորվելով անձի ընդհանուր հոգեբանության շրջանակներում, նախ իր արտահայտությունն է գտել միջխմբային հարաբերությունների հոգեբանության մեջ, այնուհետև զարգացել է շնորհիվ գիտակցության փոփոխված վիճակնե-

[111] Нартова-Бочавер С. К., Понятие “психологическое пространство личности”: обоснование и прикладное значение; Психологический журнал, том 24, #6, 2003, “Наука”, Москва, 128 с.

[112] Слободчиков В. И.,Ступени развития субъектности,-http://murzim.ru/nauka/psihologija/vozrastnaja-psihologija/27080-stupeni-razvitiya-subektnosti-po-vi-slobodchikovu.html.

րի ուսումնասիրությունների և ընդգրկվել սոցիալ-հոգեբանական հետազոտությունների շրջանակում որպես սոցիալական ինքնության եզրույթ:

Հաջորդ տեսական շեշտը կրոնական ինքնության ուսումնասիրության ասպարեզում դրել է Մասլոուն, համաձայն որի հայացքների՝ ինքնաակտուալիզացիայի՝ որպես կյանքի կարճ էպիզոդների՝ ևս մի հասկացումը կոչվում է պիկային ապրումներ:

Ա.Մասլոուն մեծ նշանակություն է տալիս նման պիկային ապրումներին (այսինքն, կյանքում հիշվող պահերին): Նրանք կյանքին արժեք են ներկայացնում և կարող են հանդես գալ որպես ինքնասպանությունները կանխարգելող գործոններ: Դրա հետ մեկտեղ, նա կտրականապես դեմ է նման պիկային ապրումները գերբնական բացատրության փորձերից՝ պաշտպանելով դրանց բնական ծագումը և էությունը: Թեոլոգիայի նշանային լեզուն, ըստ իրեն, առաջացել է որպես նման պիկայն ապրումների նկարագրություն, որոնք ունեն երկրային բնույթ:[113]

Ա.Մասլոուն՝ դարձնելով իր ուսումնասիրության առարկանանձի գերագույն արտահայտությունները, փորձում է հասկանալ դրանք ոչ թե որպես նրա նկատմամբ որևէ գերագույնի արտահայտություն, Աստծո շնորհ կամ աբսոլյուտ ոգու ներկայություն, այլ՝ որպես մարդու էության բնական ատրիբուտ: Սակայն, Ա.Մասլոուի համար մարդու էությունը սպառվում է իր կենսաբանական էությամբ: Այդ պատճառով մարդկային արժեքների գերբնական մեկնաբանություններին գիտական միակ այլընտրանքը, համաձայն Ա.Մասլոուի, դա մարդու բոլոր ձգտումների հանգեցումն է իր ժառանգական «պաշարին»: Ըստ Ա.Մասլոուի՝ մարդու էությունը հանգում է իր բնությանը, իսկ մարդու բնությունը՝ իր հերթին, կենսաբանական բնությանը: Հենց այստեղ ենք տեսնում անձի էթնոկրոնական ինքնության՝ որպես անձի ունեցած պիկային ապրումների և հասարակությունից առանձնանալու փաստի, հոգեբանական մոտեցման անուղղակի զուգահեռները: Մասլոուի հայացքները, սակայն, սահմանա-

[113] Леви-Брюль Л., Первобытное мышление.Психология мышления,-под ред. Ю.Б. Гиппенрейтер и В.В. Петухова, М., 1980, 532с.

փակվում են հարցի կենսաբանական բացատրությամբ և չեն ընդգրկում էթնոկրոնական ինքնության՝ որպես անձի սրբազան արտահայտության, սոցիալական կողմը:

Ի տարբերություն Ա.Մասլոուի, Կոնը ուշադրության կենտրոնում է դնում անձի՝ շրջակա աշխարհի հետ հարաբերությունները:

Շրջակա աշխարհի նկատմամբ անձը կարող է հանդես գալ ոչ միայն սուբյեկտի կարգավիճակով, այլ նաև՝ օբյեկտի: Անձն իրեն ընկալում է որպես օբյեկտ խորհրդանիշների որոշակի համակարգում, որն իր մեջ ներ է առնում ոչ միայն անմիջական կապերը, այլև՝ անցյալի և ապագայի միջնորդավորված տարրերը: Այս կտրվածքով անձի կրոնական ինքնության ուսումնասիրումը ավելի է մոտենում սոցիալ-հոգեբանական հետազոտության պահանջներին:

Ի.Ս.Կոնը ժամանակակից գիտության մեջ առանձնացնում է ինդիվիդուալ զարգացման նկարագրության համար երեք գլխավոր հասկացություններ որպես ամբողջություն՝ «կյանքի ժամանակ», «կենսական փուլ» և «կյանքի ճանապարհ» գլխավոր փուլերը:[114]

«Կյանքի ժամանակը»՝ որպես եզրույթ, նրա ձգվածությունը կամ տարածությունը նշանակում է ծնունդի և մահվան միջև ժամանակային ինտերվալը: Թե ինչով է լցված այս ժամանակային տարածությունը, այն չի հստակեցնում: «Կենսական փուլ» եզրույթը ավելի է որոշակիացված և բովանդակալից: Այն ենթադրում է, որ կյանքի ընթացքը ենթակա է հայտնի օրինաչափության, իսկ նրա փուլերը իրենցից մշտական շրջապտույտ են ներկայացնում: Սակայն «կենսական փուլի» եզրույթն ենթադրում է նաև որոշակի պարփակություն, ընթացքի ավարտելիություն, որի կենտրոնը հենց ինքն է: Այդուհանդերձ, անհատի՝ որպես անձնավորության զարգացման կարևորագույն պրոցեսները, որոնց թվին են պատկանում նաև կրոնական ինքնության դրսևորումները, անհնար է հասկա-

[114] Кон И. С., Социологическая психология, Москва, 1999, 532 с.

նալ առանց այլ մարդկանց կամ սոցիալական ինստիտուտների հետ նրա փոխգործողության շեշտադրման:

Առավել տարողունակ և գործածական եզրույթը «կյանքի ճանապարհն է»: Այդ հասկացությունը տարբերվում է «կենսական փուլի(ցիկլի)» հասկացությունից առաջին հերթին բազմակողմանիությամբ, նրանով, որ այն ենթադրում է տարբեր միտումների և զարգացման ճանապարհների բազմություն միևնույն կենսագրության սահմաններում: Նրա պարբերացման հիմքում ոչ թե գծային, այլ մեկընդմիշտ սահմանված փուլերն են, որոշակի կենսական իրադարձությունները: Ցանկացած կենսական իրադարձության ժամանակը, հերթականությունը և իրագործման միջոցը ոչ պակա կարևոր են, քան բուն փաստը, որ տվյալ իրադարձությունը տեղի է ունեցել: Դա արդեն պահանջում է սոցիոլոգիական, հոգեբանական և պատմական վերլուծության համադրում, քանի որ կենսական կարևորագույն իրադարձությունների վերապրումը անպայմանորեն առնչվում է որոշակի կրոնական, սոցիալական և մշակութային օրիենտացիաների հետ: Այդ պատճառով էլ, խոսելիս անձի կրոնական ինքնության գիտական հիմքերի մասին, բացի հոգեբանական տարբեր մոտեցումներից, անհրաժեշտ է տալ նաև հարակից գիտական մտքի զարգացման հակիրճ նկարագրությունը: Ուստի, առանձին քննենք կրոնի հոգեբանության, առասպելաբանության, մարդաբանության, լեզվաբանության և սոցիոլոգիայի ոլորտներում կրոնական ինքնության ուսումնասիրության եզրերը:

Կրոնի հոգեբանությունը հետազոտում է հասարակական և անձնային մակարդակներում կրոնական հայացքների, զգացմունքների, տրամադրությունների, սովորությունների և ավանդույթների բովանդակությունը և կառուցվածքը: Այն նաև բացահայտում է առասպելի միջոցով կրոնական գիտակցության գոյության և գործառնության մեխանիզմները:

Առասպելի հասկացութային համակարգի զարգացումը գիտական ասպարեզում կապված է մի շարք հեղինակների հետ: Նրանց մեծ մասը կրոնական մտքի ձևավորումն ու զարգացումը հանգեցնում են առասպե-

լական մտածողության հետ: Տեսությունը, որի համաձայն առասպելի էությունը կայանում է բնական երևույթների այլաբանական պատկերացման մեջ, կապված է նախ և առաջ Մաքս Մյուլլերի անվան հետ:[115] Բայց այդ նատուրալիստական սիմվոլիզմը պարզեցնում է խնդիրը՝ բացառելով կարևոր միջանկյալ օղակները՝ պաշտամունքը, ծեսը և հավատալիքները:

Արտահայտվելով Մաքս Մյուլլերի այլաբանական մեկնաբանությունների դեմ, Էնդրյու Լէնգը առաջ է քաշել պարզունակ առասպելի էթիոլոգիական տեսությունը:[116] Դա մի քայլ առաջ էր, քանի որ իր տեսությունը պարզունակ մշակույթում առասպելին վերագրում էր ավելի կիրառական դեր: Սակայն այն էականորեն զիջում է ծնակերպման հստակությամբ: Նախնադարյան կարգերով ապրող մեր նախնիների առասպելաբանության հավասարեցումը պարզունակ գիտությանը, մարդկային մշակույթի տեսական մեկնաբանության մեջ երբևէ տեղ գտած սխալներից մեկն է:

Այս թեմայի աղոտ մեկնաբանությունը տվել է պրոֆ. Ռութ Բենեդիքտը. «Բանահյուսության ժամանակակից ուսումնասիրությունը ազատվում է նախապաշարմունքներից և այլաբանություններից և ելնում է բանահյուսության նշանակության  հասկացումից որպես սոցիալական երևույթի և որպես սոցիալական խմբի տրամադրությունների և մշակութային կյանքի արտահայտման միջոց»:

Ռոբերթսոն-Սմիթը, երևի թե, եղել է առաջինը,  որը գիտակցել է կրոնի սոցիալական կողմը և դիտել է անձի սրբազան գործառույթները սոցիալական ենթատեքստում: Նա ընդգծել է, երբեմն չափազանցված կերպով, ծեսի նշանակալիորեն մեծ դերը կրոնական դոգմաների նկատմամբ: Նրա համոզմամբ, կրոնը իրենից ներկայացնում է ֆիքսված պրակտիկ գործողությունների համալիր, այլ ոչ թե՝ դոգմաների համակարգ: Կարճ ասած, սովորույթը նա կապում էր ոչ թե դոգմայի, այլ առասպելի հետ:

115 Мюллер М., Введение в науку о религии, М., 2002, 632 с.

116 Green R., Andrew Lang.A critical biography with a short-title bibliography of the works of Andrew Lang,- Leicester: E. Ward, 1946, 280p.

Ռոբերթսոն-Սմիթը նախազգաց Մալինովսկու կողմից ներկայացված տեսանկյունը. «Եթե մտածելակերպի այն ձևը, որը ներկայանում է առասպելի մեջ, չի ստանում հավաստիացում ծեսի կողմից, նշանակում է, որ այն ձեռք չի բերել բառի բուն իմաստով կրոնական սանկցիա, առասպելը ծեսից անջատ լոկ կասկածելի և անհուսալի վկայություն է»: Իր հայացքները ազդեցություն են ունեցել հետագա մի շարք հեղինակների վրա՝ Է.Ա.Գարդների, որը առասպելի մասին իր հոդվածում („Hastings' Encyclopaedia of Religion and Ethics"), գրում է, թե «առասպելաբանությունը բնության և աստվածների կամ այլ գերբնական ուժերի բնավորության ներկայացման և բացատրման միջոցով օգնում է անձին ճիշտ հիմքի վրա կառուցել նրանց հետ իր հարաբերությունները»:[117]

Լ.Լեվի-Բրուլը կրոնը վեր էր հանում կոլեկտիվ պատկերացումներից: Սովորույթի և լեզվի հետ մեկտեղ՝ կոլեկտիվ պատկերացումների շարքին էր նա վերագրում նաև հավատալիքները: Ուսումնասիրելով «պարզունակների» գիտակցությունը, նա եկել է այն եզրակացության, որ այն «պատված է միստիկական տարրերով, որոնք անբաժանելի են և որոնք, անշուշտ, ունեն կոլեկտիվ բնույթ»: Միստիցիզմի տարրերը առկա են նաև ժամանակակից մարդու մոտ: Յանկացած կրոնի համար կոլեկտիվ պատկերացումները աղբյուր են հանդիսանում հետևյալ հատկությունների շնորհիվ. նրանք կրում են իմպերատիվ բնույթ, փոխանցվում են սերնդե սերունդ, իրենց գոյությամբ կախված չեն ինդիվիդուալ հոգեբանությունից և պարտադրվում են անձին՝ նախորդում են և հաջորդում նրան:

Անձի կրոնական Ես-պատկերի ուսումնասիրության գործում առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում լեզվական արտահայտչամիջոցները: Համաձայն Ա.Ռ.Լուրիայի կարծիքի՝ «Լեզու ասելով մենք հասկանում ենք կոդերի բարդ համակարգ, որոնք նշանակում են առարկաներ, հատկանիշներ, գործողություններ կամ հարաբերություններ, որոնք կրում են կոդավորման, տեղեկատվության փոխանցման և այն այլ համակարգերի մեջ ներմուծման գործառույթ»: Լեզվի հոգեբա-

[117] Лурье С. В., Историческая этнология, М., 1998, 448 с.

նական կառուցվածքի խնդիրը, նրա դերը հաղորդակցման և գիտակցության ձևավորման մեջ, ներկայանում է երևի թե որպես հոգեբանության ամենակարևոր բաժիններից մեկը: Հոգեբանության ամբողջ բովանդակության նշանակալի մասն է կազմում վերլուծությունը այն բանի, թե ինչպես է կառուցվում իրականության արտացոլումը, ինչպես է անձը արտացոլում իրական աշխարհը, որում նա ապրում է և ինչպես է նա ստանում օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ կերպարը: Այս մոտեցումը կարելի է մասնավորեցնել և կիրառել անձի կրոնական ինքնության, ինչպես նաև՝ նրա գործողությունների նկատմամբ ձևավորված հասարակական կարծիքի հետազոտման ասպարեզում:[118]

Հասարակական պատմության արդյունքում լեզուն դարձավ մարդկային իմացության որոշիչը, շնորհիվ որի մարդը կարողացավ դուրս գալ զգայական փորձի սահմաններից, առանձնացնել հատկանիշներ, ձևավորել հայտնի ընդհանրությունները կամ կատեգորիաները: Կարելի է ասել, որ եթե մարդը չունենար աշխատանք և լեզու, ապա նա չէր ունենա և վերացական «կատեգորիալ» մտածելակերպ: Մտածելակերպի այս հատկանիշը իր արտահայտությունն է գտնում կրոնական պատկերացումների, հասկացությունների և վարքի ողջ համակարգում: Կրոնը, ինքնին ներկայանալով որպես նշանային բարդ ամբողջություն, առնչվում է կոդավորման այնպիսի համակարգի հետ, որի միջոցով կառուցվում է աշխարհի և տիեզերքի մասին կատեգորիալ գիտելիքը: Եվ այդ գործում՝ որպես նշանային համակարգ, մեծ դեր է կատարում լեզուն:

Ինչպես ասվեց, անձի կրոնական Ես-պատկերի ուսումնասիրության մեջ կարևորվում է միջդիսցիպլինար մեթոդաբանական մոտեցումը: Կիրառելով կոմպլեքսային մեթոդաբանությունը՝այն նպատակ ունի բացահայտելու բնության, աշխարհի և սոցիումի հետ անձի հաղորդակցման էական հիմքերը: Դա թույլ կտա խոսել ոչ միայն սեփական էթնիկ ինքնության ընկալման մասին, այլև՝ կրոնական ու մշակութային ինքնության և սոցիումի կյանքի կառուցվածքային կազմակերպման մասին: Ուստի, ի նկատի ունենալով հաղորդակցման կարևորությունը անձի կրոնական

[118] Лурия А.Р., Язык и сознание, Москва, 1979, 319 с.

Ես-պատկերի հետազոտության գործում, անդրադառնանք մի շարք հայտնի տեսական և մեթոդաբանական մոտեցումներին:

Խնդրի հետազոտման մեթոդաբանական մոտեցումները կարելի է ենթարկել տարբեր դասակարգումների: Դրանք կախված են ուսումնասիրության նպատակներից և նրանց լուծման կոնցեպտուալ դիրքորոշումներից:

Անձի կրոնական Ես-պատկերի կոնցեպտը տիրապետում է բազմաթիվ հնարավորություններով, որոնք թույլ են տալիս մեկնաբանել տարբեր սոցիալական կապերը և անհատների փոխհարաբերությունները: Այն՝ ընդգրկվելով սոցիալական ինքնության եզրույթի մեջ, տալիս է անձի սահմանումը խմբային հասկացությունների միջոցով այնպես, որ անձը կարողանում է իրեն նկարագրել խմբի մեջ ներգրավվելու շնորհիվ: Անձի ներ- և միջ- խմբային արտահայտությունների քննությունը հանգեցնում է կրոնական հատկանիշի դիտարկմանը որպես էթնիկ ինքնության ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունք: Խնդիր է առաջանում տվյալ երևույթի ուսումնասիրումը իրականացնել համապատասխան մեթոդների ընտրությամբ:

Հետազոտության քանակական ֆորմալ մեթոդները, մի կողմից, սահմանափակում են էթնիկ ինքնության մասին դատողությունների և հասկացությունների գրանցումն ու քննությունը, սակայն, մյուս կողմից, ստատիստիկ հնարքների միջոցով դյուրին են դարձնում տվյալների մշակումը: Որակական մեթոդները տիրապետում են ավելի լայն հնարավորություններով բացահայտելու անձի սուբյեկտիվ դիրքորոշումները, բայց դժվարությամբ են ենթարկվում նրանց կառուցվածքային մեկնաբանությանը:

Տվյալ աշխատության մեթոդական հիմնական աղբյուր են հանդիսանում ուսումնասիրության ոչ ֆորմալ մեթոդները, որոնց արդյունքների հավաստիությունը ստուգվում է ստատիստիկ տվյալների միջոցով:

Նշենք, որ որակական մեթոդները հիմնված են սոցիալական երևույթների ուսումնասիրման ֆենոմենոլոգիական մոտեցման վրա: Այդ մոտեցումը ենթադրում է այն գաղափարը, որ յուրաքանչյուր անձ կառու-

ցում է իր սեփական իրականությունը, որը կարող է այս կամ այն չափով ընդունվել հանրույթի այլ անդամների կողմից: Բացի այդ, այն կարող է փոփոխության ենթարկվել արտաքին կամ ներքին պայմանների ներքո: Այդպիսի փոփոխություն կարող է առաջացնել թե ինքը՝ հետազոտողը, և թե շրջապատը:

Անձի էթնոկրոնական ինքնության ուսումնասիրության գործում իր ուրույն տեղն է զբաղեցնում նշանային համակարգի տեսությունը, քանի որ անձի գործունեության էթնոկրոնական ձևերը սահմանվում են ինչպես կրոնական հավատալիքների բովանդակությամբ, այնպես էլ՝ միջոցներով: Գործունեության միջոցների ու ձևերի կարգավիճակում հաճախ հանդես են գալիս խորհրդանիշները: Ուստի, ներկայացնենք տարբեր հեղինակներիմոտեցումները խորհրդանիշի էության և նշանակության վերաբերյալ: Ի.Ն.Յաբլոկովը խորհրդանիշը դիտում է որպես երկու հատկությունների միասնություն. դրանք են՝ խորհրդանշական առկա գործողությունը, բառը, առարկան և իմաստային նշանակությունը: Առաջինի միջոցով մեզ է ներկայանում երկրորդ հատկությունը:[119]

Տ.Մ.Դրիդձեն խորհրդանշանի, իսկ ավելի լայն իմաստով, նշանի վերաբերյալ հայտնում է այն տեսակետը, որ նշանը հանդես է գալիս սեմիոտիկայի տարրական միավոր:[120] Այն գոյություն չունի գործունեությունից և վարքից անկախ: Նշանը կոմունիկատիվ է ինչպես իր բնույթով, այնպես էլ՝ գործառույթով, ինչը հենց նշանի յուրահատկությունն է: Պատահական չէ, որ խոսելիս սեմիոլոգիայի մասին՝ որպես գիտության, որն ուսումնասիրում է «նշանների կյանքը հասարակության ներքո», հայտնի լեզվաբան Ֆ. դե Սոսյուրը ենթադրում էր, որ սեմիոլոգիան կդառնա սոցիալական, իսկ հետագայում՝ ընդհանուր հոգեբանության մաս:[121] Եվ պատահական չէ, որ քննելով էթնոկրոնական ինքնության կառուցվածքը, անհնար է չանդրադառնալ նշանային համակարգին: Այն կարող է ու-

[119] Яблоков И. Н., Методологические проблемы сициологии религии, Москва, 1972, 133 с.

[120] Дридзе Т. М.,Текстовая деятельность в структуре социальной коммуникации. Проблемы семиосоциопсихологии. – М., 1984, 289 с.

[121] Соссюр Ф. де., Курс общей лингвистики,М., 2004, 256с.

նենալ տարբեր արտահայտչամիջոցներ՝ առարկայական կամ նյութական, վերբալ, ոչվերբալ և այլն: Նշանների տեսությունը իր զարգացման ընթացքում ձեռք է բերել հստակ ուրվագծեր: Նշմարվում են նրա ձևակերպման երկու միտումներ: Առաջինը, ընդհանուր նշանային տեսության ստեղծման միտումն է, որի արմատները հանգում են Չ.Պիրսի կողմից առաջ քաշած «հարաբերությունների ունիվերսալ ալգորիթմի» տեսությանը:[122] Երկրորդ միտումը սոցիալական հոգեբանության մեջ ուրվագծվող միտումն է, որը քննում է նշանը գործունեության և վարքի կառույցների մեջ իր ընդգրկվածության տեսակետից: Այդ տեսակետը բազմիցս ներկայացրել են Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Ն. Լեոնտևը, Ա. Ա. Լեոնտևը, Չ. Մորրիսը, Գ. Կլաուսը և շատ ուրիշներ:

Համաձայն Լ.Ս.Վիգոտսկու կարծիքի, նշանը ենթադրում է ինչպես ակտիվ՝ բացահայտ պատասխան ռեակցիա, այնպես էլ՝ թաքնված կամ ներքին: Չ.Մորրիսը հատուկ ուշադրություն է դարձրել նշանի սոցիալական և անհատական նշանակության վրա, ինչպես այն բանի, որ շրջակա սոցիալական իրականության հետ նշանների գիտակցաբար համադրելու դեպքում վարքը ավտոմատ պատասխան ռեակցիայից վեր է ածվում «կրիտիկական և բանական»-ի:[123]

Ա. Ա. Լեոնտևը նշանի անվան տակ հասկանում է երեք տարբեր առումներ. 1. նշան՝ որպես գործունեության իրական բաղկացուցիչ մաս, 2. նշան՝ որպես իդեալական կերպար, որը առօրյա գիտակցության մեջ «ռեալ նշանի» հոմանիշն է, 3. նշան՝ որպես առաջինի կառույցի և գործառույթի գիտական իմաստավորում:[124]

Նշանների միջոցով կառուցվում է կրոնական ինքնության ողջ համակարգը, որն՝ ունենալով ինքնին այլաբանական իմաստավորում, անշուշտ, կարիք է զգում խորհրդանիշների միջոցով ներկայացվելու հասարակությանը: Կրոնական գիտակցությունը, մասնավորապես, անձի կրոնական նույնականացումը արտահայտվում է պաշտամունքային հա-

[122] Pierce C.S., Selected writings,- Dover Publication, 1958, 389p.
[123] Morris Ch.W., Signs, language and behavior, N.Y., 1946, 155 p.
[124] Леонтьев А.А., Психология общения, Тарту, 1974, с.93.

րուստ փորձում և ձևավորված կրոնական ինստիտուտների գործունեության մեջ: Ավելին, խորհրդանշանների միջոցով անձը շրջակա աշխարհին ներկայանում է սուբյեկտի կարգավիճակով և իր գործունեությամբ նպաստում է հասարակությունում էթնոկրոնական ինքնության ձևավորմանը: Նշանային համակարգի միջոցով իրենց արտահայտությունն են գտնում էթնոկրոնական հատկանիշները, որոնք կարող են ձևավորել նշանների «սեմանտիկական դաշտեր»: Դրանք ստեղծվում են բառի շուրջ և ամփոփում են նրա իմաստային բնութագիրը: Ուստի, ներկայացնելով անձի կրոնական ինքնության դրսևորումները, անհրաժեշտ է անդրադառնալ և հնարավորինս կիրառել լեզվագիտության ձեռքբերումները և մեթոդոլոգիական հայեցակետերը: Բառի ասսոցիատիվ նշանակության ուսումնասիրության պատմությունը ներկայացրել է Ա. Ռ. Լուրիան, որը հղում է կատարում մի շարք հեղինակներին: Այսպիսով, գիտության մեջ ներմուծվեց նոր հասկացություն՝ «սեմանտիկական դաշտ», որը կանգնած է յուրաքանչյուր բառի հետևում:

Մեթոդոլոգիական տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում նաև այն մշակութաբանական ուսումնասիրությունները, որոնք ինքնության երևույթը դիտարկում են միջմշակութային հարաբերությունների ենթատեքստում: Դրանցից են՝ Յու.Մ.Լոտմանի տեսությունը՝առնչվող մշակույթների փոխգործողություններին, Ու.Բեքի դրույթը տարբեր մշակույթների «գործունեության, կյանքի և ընկալման համար սոցիալական տարածության» ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ:[125]

Նշենք հատուկ Դ. Ս. Լիխաչովի սահմանների տեսությունը մշակույթում, Կ. Ցյուրիերի տեսակետը մշակույթների միջև սահմանային գոտիների վերաբերյալ, ինչպես նաև՝ Դ. Պ. Կուդրյայի տեսակետը մշակույթների միջև սահմանների մասին:[126] Սահմանը մշակույթի տարածության

---

[125] Бек У., Что такое глобализация? Ошибки глобализма - ответы на глобализацию, М., 2001, 118 с.

[126] Лихачев Д. С., Очерки по философии художественного творчества, СПб., 1999, 285 с.; Кудря Д. П., Культура и граница,-в кн.: В перспективе культурологии: повседневность, язык, общество, - М., 2005,383 с.; Цюрхер К., Мультикульту-

մեջ, ըստ Կուդրյայի, կարող է և՛ բաժանել, և՛ միավորել: «Կենդանի սահմանը» սուբյեկտների միջև գործառութային սահման է՝ իրենց կապող գործառույթներով: Սահմանը ստեղծում է շփում մարդկանց, մշակույթների և «մշակութային ֆենոմենների» միջև: Հետաքրքիր են նաև Վ. Ս. Բիբլերի գաղափարները նրա մասին, թե մշակույթի կենտրոնը գտնվում է սահմանի վրա՝ այնտեղ, ուր նա բախվում է այլ մշակույթների հետ: Այս գաղափարները հուշում են այլ էթնիկ խմբերի հետ անձի հաղորդակցման ընթացում ձևավորվող էթնոկրոնական ինքնությանը և կարող են օգտակար լինել խնդրի բազմակողմանի ուսումնասիրության գործում:

Այսպիսով, քննելով անձի կրոնական Ես-պատկերի տեսամեթոդական հիմքերը, փաստում ենք այդ եզրույթի սահմանային, միջդիսցիպլինար բնույթը: Այդ հանգամանքը թեև կարող է տեղիք տալ երևույթի տարբեր կարծիքների և մեկնաբանությունների, այդուհանդերձ, հնարավորություն է ընձեռում բազմակողմանի քննությանն ու ներկայացմանը:

## Ես-պատկերները և տարէթնիկ մշակութային ինքնությունը

Սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության շրջանակներում կարևորվում են անձի կրոնական ինքնության այնպիսի արտահայտությունները, որոնք կապվում են էթնիկ ինքնության բովանդակային բաղադրիչի հետ:

Փորձենք ներկայացնել հայերի ազգային Ես-պատկերի դրսևորումներում անձի կրոնական ինքնության գործառույթները՝ ի նկատի ունենալով «յուրայինների» և «օտարների» մասին հայերի կարծրատիպային պատկերացումները: Այստեղ հարկ է «օտարների» խմբի մեջ առանձ-

---

рализм и этнополитичекий порядок в постсоветской России: некоторые методологические замечания, ЛТолис, 1999, № 6

նացնել կոնֆլիկտային և ոչ կոնֆլիկտային միջէթնիկ հարաբերությունները և դիտարկել անձի էթնոկրոնական ինքնության գործառույթները դրանցում առանձին վերցված, որոնք բնութագրում են ոչ միայն անձի կրոնական պատկանելիությունը, այլև, ինչպես կերևա ստորև, ներկայանում են նաև էթնիկապես՝ բնորոշելով անձի թե′ կրոնական և թե′ էթնիկական հատկանիշները:

Էթնոկրոնական ինքնության կարևոր հատկանիշներից նշենք հայերի հյուրասեր լինելու մասին պատկերացումները:

Դրանք հանդիպում են ամենուր: Առաջին հայացքից, հյուրասիրության մասին պատկերացումները ընդգրկում են զուտ ազգային ինքնատիպությանը վկայող փաստերը: Սակայն հայկական բանահյուսական նյութը ցայտուն կերպով ցույց է տալիս հայերի հյուրասիրության մասին սթերեոտիպային պատկերացումներում անձի էթնոկրոնական ինքնության առկայությունը:

Հյուրասիրության փաստը հայերի մոտ գիտակցվում  է ոչ միայն էթնիկ, այլ նաև կրոնական առումով, քանի որ հյուրին սեղանին չհրավիրելը ընդունվում է որպես մեղք, հյուրը «կարոտ է մնում», իսկ մեղքը «մնում է տան տիրոջ վրա»: Հյուրին հարկ է հյուրասիրել նույնիսկ այն դեպքում, երբ նա ուտելու ցանկություն չի հայտնում: Մի ադեպտի խոսքերով, «մեղքից խուսափելու համար պետք է հյուրասիրել հացով նույնիսկ թուրքին»: Եվ այդ պատճառով, չհյուրասիրելու հանգամանքը ենթադրում է ոչ միայն անհյուրընկալություն որպես այդպիսին, այլև մատնանշում է տվյալ անձի մեղքի վրա, իսկ դա էլ, իր հերթին, ենթադրում է, որ նա չի հետևում քրիստոնեական հավատքի հիմնական դրույթներին:

Ավելի մանրամասն դիտենք, թե ինչով է պայմանավորված նրա կապը մեղքի հետ և ինչպես է բնութագրվում այդ դեպքում հայերի էթնիկ ինքնությունը:

Այս հարցի վերաբերյալ կան բազմաթիվ վկայություններ հայկական բանահյուսական նյութերում, ավանդական ծիսա-պաշտամունքային սովորույթներում և ազգագրական գրավոր աղբյուրներում:

Համաձայն Հայաստանի տարբեր վայրերում մեր կողմից գրի առված կարծիքների, եթե հյուրի տանը երեխան ուտելիքի հոտ է առնում, բայց համտես չի անում այն, նա անպայման մահանում է: Հարցվողները շեշտում են, որ նույնիսկ մեծահասակ մարդիկ՝ առնելով ուտելիքի հոտը և համտես չանելով այն, տուն վերադառնալուն պես հիվանդանում են. իրենց մարմինը «ուռում է»: Իսկ մի աղջկան, որը նույնպես հիվանդացել էր և գտնվում էր մահամերձ վիճակում, հնարավոր եղավ փրկել միայն այն բանից հետո, երբ նա համտեսեց տվյալ ուտելիքը:

Համապատասխանաբար, «եթե հիվանդին աղոթք չեն կարդում, նա կարող է մահանալ»: Այդ պատճառով հյուրին չհյուրասիրելը, ինչպես և աղոթք չկարդալը հավասարազոր է սպանության: Այդ երկու հասկացությունները կարող են ընդգրկվել նույն սեմանտիկական դաշտի մեջ և համարվել հակասոցիալական վարքի կայուն հատկանիշներ:

Հյուրասիրության մասին պատկերացումը բնութագրում է ոչ միայն «յուրային» խմբի էթնիկության կայուն հատկանիշը, այլև ձևավորում է «օտարների» մասին հայերի պատկերացումները: Այսպես, անհավատ հայերը կոչվում են «անաղ ու հաց քուրդ»: Այս բառաձևը արտահայտում է հավատքի գլխավոր հատկանիշներից մեկը: «Անաղ ու հաց» նշանակում է ոչ միայն «անշնորհակալ», այլև՝ «անհյուրընկալ»:[127] «Աղ ու հաց»-ը փոխաբերական իմաստով հանդես է գալիս որպես բարեկամության խորհրդանիշ:[128] Ինչպես տեսնում ենք, բանահյուսական և լեզվագիտական նյութը հուշում է «հյուրասեր» - «քրիստոնյա» - «հայ» հասկացությունների փոխարինելիության, այսինքն, նշանային նույնացման մասին: Ուստի, հյուրասիրության հատկանիշի միջոցով հայերը ոչ միայն առանձ-

---

[127] Խմբ. Ղարիբյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1,Երևան 1969, 263 էջ.

[128] Խմբ. Ղարիբյան Ա. Ս ., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1,Երևան 1969, 263 էջ.

նացնում են իրենց «օտարներից», այլև՝ «օտարների» շարքին են դասում անհյուրասեր «յուրայիններին»:

Ինչպես տեսնում ենք, հյուրասիրությունը  հանդես է գալիս որպես թե կրոնական, և թե էթնիկ ինքնության կայուն հատկանիշ:

Հայերի կրոնական ինքնությունը կարող ենք սահմանել քրիստոնեական հավատքի առկայությամբ, որի անխախտ դիրքերը մատնանշում են նաև հայերի էթնիկ ինքնությանը: Այն լուրջ հիմք է ներկայանում հասարակության ծիսա-պաշտամունքային կյանքի ձևավորման և կարգավորման համար՝ դրանով իսկ բնութագրելով հայերի էթնիկ ինքնատիպությունը:

Էթնոկրոնական ինքնության գործառնությունը տեսնում ենք հայերի ներ- և միջ-էթնիկ հաղորդակցության մեջ:

Հարցվողները ներէթնիկ հաղորդակցության իդեալական ձև են համարում, այնպիսի հաղորդակցությունը, որում ի նկատի են առնվում սեռատարիքային առանձնահատկությունները: Այդ պատճառով «երեխայի հետ հարկ է շփվել երեխայի նման, համապատասխանաբար՝ մեծահասակի հետ»: Բայց Աստծո հետ հարաբերություններում այդ հորիզոնական (այսինքն, հավասարազոր, նույն դիրքերից) ուղղության փոխարեն առկա է հարաբերությունների ուղղահայաց ուղղությունը, այն է՝ «Աստվածն էլ մեզ պահել ա»: Նրա մասին, թե սակրալ աշխարհի հետ հարաբերությունների դեպքում առաջին պլան է ելնում վարքի բարոյական կոդեքսը, վկայում է հենց անձի նշանակումը որպես «աբուռ»: Այն Հայաստանի բազմաթիվ վայրերում հայտնի է որպես «պատիվ, ամօթի զգացմունք, երեսի ջուր (պարսկերեն «abru»՝«ամօթ, պատիւ»), որ կազմված է «ab»՝ «ջուր» և  «ru»՝ «երես» բառերէն և կը նշանակէ բուն «երեսի ջուր»»:[129] Ուստի, բարբառային հարուստ նյութը ցայտուն կերպով ցույց է տալիս անձի սոցիումում ներկայանալու միջոցը՝ որպես բարոյական էակ, «աբուռ» ունեցող անհատ և, դրանով էլ հասարակության մեջ ներգրավ-

[129] Աճառեան Հր., Հայերէն գաւառական բառարան,-ԷԱԺ, հ.թ, 1913 թ.

ված ու սոցիալականացված անձ: Եվ եթե բարոյական հատկանիշները կարող են նպաստել անձի հասարակության մեջ ներգրավվմանը և ակտիվ գործունեությանը, ապա նույն հատկանիշների բացակայությունը՝ համարվելով մարդկային էության հիմքերից մեկը, համարվում է անձի անհաջողությունների գլխավոր պատճառը:

Բարոյական արժեքների պրիզմայով գիտակցվում է նաև հայերի միջէթնիկ հաղորդակցությունը: Շեշտվում են հատկապես կոնֆլիկտային միջէթնիկ հարաբերությունները, որոնց մասին խոսելիս հարցվողները նման արժեքները վերագրում են սեփական էթնոկրոնական ինքնությանը և համարում «յուրայինների» էթնիկության կարևոր հատկանիշներից մեկը: Օրինակ, հետպատերազմյան շրջանում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում բավականին տարածված են դարձել մանկական խաղերը, որոնք նմանակում են պատերազմական գործողությունները: Դա ավելի բացահայտ է երևում սահմանամերձ շրջաններում: Նման խաղերից մեկում երեխաները սկսում են գոռալ՝ «պլուտը եկավ»:[130] Դիմելով նորից Հր.Աճառյանի կողմից տրված բառի բացատրական իմաստավորմանը, տեսնում ենք, որ «պլուտ» բառը մեկնաբանվում է որպես «դատարկ, աղքատ, անկուտի, դրամ չունեցող», իսկ Ղարաբաղում՝ «փճացած վարքի տէր, անբարոյական, սաստիկ գինով»: Հետաքրքիրն այն է, որ այս հակասոցիալական, անբարոյական արժեքների կրողը խաղի մեջ անպայման լինում է «թուրքը»՝ ինչպես որ պատերազմի տարիներին հաճախ կոչում էին ադրբեջանցիներին: Ինչպես տեսնում ենք, «պլուտ»-ը իր ավանդական իմաստներով չի արտահայտում որոշակի էթնիկ պատկանելիություն, բայց իր հակասոցիալական երանգավորումը բավական է, որ այն «կպնի թուրքերին»:

Կոնֆլիկտային միջէթնիկ հարաբերությունները, մասնավորապես, հայ-ադրբեջանական հարաբերությունները, իրենց կնիքն են թողել հայերի էթնոկրոնական ինքնության վրա: Այս հարցի ներքո ամբողջ հասարակությունը բաժանվում է «յուրայինների» և «օտարների»: Դա երևում է ոչ միայն հատուկ ծեսերում: Այն ունի իր վառ արտահայտությունը աղան-

130 Նույն տեղում:

դավոր և այլ կրոնական պատկանելիություն ունեցող հայերի՝ հասարակության հետսոցիալ-հոգեբանական հարաբերություններում: Վերցնենք Եղեգնաձորի շրջանի Շատին գյուղում բնակվող կրիշնայականների հետնորդների օրինակը: Չնայած որ համագյուղացիները իրենց կրոնի գլխավորը՝ Կրիշնան, գիտակցում են որպես հնդկական աստվածություն, բայց կրոնը ամբողջությամբ համարում են մահմեդական, քանի որ այն՝ադեպտների խոսքերով՝ «ուրիշ է, ոչ հայկական»: Նմանապես, հայկական երգը, որը հնչեց սկզբից հայերեն, այնուհետև ֆրանսերեն լեզուներով, բայց պահպանելով նույն մեղեդին, նույնպես ընկալվում է որպես մահմեդական երգ, այն է՝«ուրիշ, օտար երաժշտությամբ»: Թողնենք գյուղացիների կողմից բառերը մեղեդիով շփոթելու և վերջինով կողմնորոշվելու հանգամանքը և նշենք, որ միևնույն մեղեդին, որը հնչում է անհասկանալի լեզվով, նույնացվում է անծանոթ, «օտար» մեղեդու հետ, և, հետևապես, «թուրքականի» հետ:

Էթնիկ ինքնության կայուն հատկանիշ է անձի կրոնական ինքնությունը, որը վառ արտահայտություն է գտնում կոնֆլիկտային միջէթնիկ հարաբերություններում և նպաստում է էթնոմետ ինքնության դրսևորմանը:

Այսպիսով, ներ- և միջ-էթնիկ հարաբերություններում հայերի էթնոկրոնական ինքնության գործառնությունը տեսնում ենք «յուրային» և «օտար» էթնիկությունների հակադիր բնութագրման մեջ: «Յուրային» էթնիկությունը արտահայտվում է բարոյական կայուն հատկանիշների միջոցով, որոնք էլ, իրենց հերթին, ներկայացվում են էթնոկրոնական ինքնության կառուցվածքում: Իսկ «օտարված» խմբերի բնութագրումներում՝ լինեն դրանք օտար էթնիկ, թե՝ օտար կրոնական խմբեր, նկատում ենք էթնիիկության բացասական հատկանիշների նույնացումը օտար կրոնական ինքնության հետ: Այդ պատճառով էլ «անհավատ հայերը», որոնք սեփական էթնիկ խմբից «օտարվում են» իրենց կրոնական ինքնության յուրահատկությամբ, նույնացվում են քրդերի էթնիկության հետ, այսինքն՝ «օտարվում են» էթնիկապես: Այստեղ հանգում ենք էթնոկրոնական ինքնության մի շատ կարևոր բնութագրականի՝ այն է, «ստվերային ինքնութ-

յան» եզրույթի: Այն նշանակենք էթնիկական և կրոնական ես-պատկեր-ների աղճատված, ստվերային գիտակցմամբ, որը տարբերվում է տվյալ էթնիկ խմբում ընդունված նորմերից և արժեհամակարգից: Ստվերային ինքնությունը կարելի է բացահայտել օտարման մեխանիզմների շնոր-հիվ, որոնց արդյունքում ի հայտ են գալիս հասարակությունից օտարված կրոնական կամ էթնիկ խմբերը: Բերենք ստվերային ինքնության մի օրի-նակ. էթնոկրոնական այն խմբերը (օր., կրիշնայական հայերը), որոնք չունեն կոնֆլիկտային ներէթնիկ հարաբերություններ, նույնացվում են մահմեդականների՝ կոնֆլիկտային բնույթ կրող էթնոկրոնական ինք-նության հետ, այսինքն, «օտարվում են» կրոնապես: Ընդհանրացնելով, կարող ենք փաստել, որ «յուրայիններից» «օտարման» ենթարկվող էթ-նիկ, կրոնական և սոցիալական այլ խմբերը ներկայցվում են «օտար», հաճախ, հակադիր հատկանիշներ ունեցող, էթնոկրոնական ինքնության միջոցով: «Օտարման» մեխանիզմները գործում են ոչ միայն «անհա-վատ հայերի», այլև՝ աղանդավոր հայերի նկատմամբ: Քննության է առն-վել Հայաստանում ապրող «հավատացյալներ» կոչվող աղանդավոր հա-յերի մի խումբ: Նրանք իրենց ինքնությունը ներկայացնում են նույնպես «օտարման» մեխանիզմի միջոցով: Բայց այն ուղղված է ոչ թե գերազան-ցապես կոնֆլիկտային էթնիկ խմբերին, այլ՝ սեփական էթնիկ խմբին: Այդ պատճառով էլ հանդիպում ենք հարցվողների համատարած բացա-սական վերաբերմունքը աղանդավոր հայերի նկատմամբ: Նրանք իրենց ինքնությունը ընկալում են «սովորական» հայերից տարբերվելու մեջ, այ-սինքն՝ չեն ընդունում կենդանիների մատաղը, չեն գողանում և այլն: Բայց, դրա հետ մեկտեղ, հասարակական ուխտագնացությունների ժա-մանակ, որոնք պարբերաբար կազմակերպվում են Շադիվանքում, նրանք բոլորի հետ համտեսում են մատաղը՝ այն ուտելով «մի տեղում»: Դա նշանակում է, որ սեղանի շուրջ նրանք կարող են նստել իրարից հե-ռու, բայց հաղորդակցվել մեկը մյուսի հետ հայացքներով: Այդ հաղոր-դակցումը արդեն իսկ ստեղծում է հաղորդակցական մի ընդհանուր նշա-նային տարածք, որը առանձնացնում է իրենց մյուսներից և հանդիսա-նում է ինքնության արտահայտման ձևերից մեկը: Աղանդավորների հոգևոր մտերմությունը արդեն իսկ խորհրդանշում է իրենց «մի տեղում»

գտնվելը: Այստեղից հետևում է, որ տարածական տեղադրումը ենթադրում է ոչ միայն իրական տեղաբաշխումը, այլև՝ սոցիալական:

Այստեղ էլ հասկացվում է հյուրասիրության մասին իրենց նախապաշարմունքը, որ ամեն մեկի հետ նրանք սեղան չեն նստում և, հակառակը, ամեն մեկից չեն ընդունում հյուրասիրվելու հրավերը: Նախ, հյուրընկալ տան տերը պետք է լինի արժանի, որպեսզի հյուրը ընդունի իր տուն մտնելու և հյուրասիրվելու հրավերը: Այդպիսի ընտրողական վերաբերմունքը բացատրվում է նրանով, որ նույն սեղանին նստելը ոչ միայն սեղանակից լինելու, այլև՝ տանտիրոջ և հյուրի հոգևոր մտերմության արգասիքն է: Դրանով իրենք ցույց են տալիս, որ ունեն կյանքի նկատմամբ «միևնույն չափը»: Հետաքրիր է, որ, ինչպես նշվել է, այդ հանգամանքը պահպանվում է նաև ընդհանուր հասարակական ճաշկերույթների ժամանակ, երբ տարբեր մարդիկ ստիպված են նստել նույն սեղանի շուրջ, բայց գաղափարակիցները «հայացքներով», այսինքն՝ ընդհանուր սոցիալական տարածքով առանձնացնում են իրենց մնացած շրջապատից: Աղանդավորների այս պատկերացումները բավականին տարբերվում են վերը ներկայացված հյուրասիրության վերաբերյալ հայերի ընդհանուր պատկերացումներից: Հիշենք «թուրքին հյուրասիրելու», այսինքն, առանց կրոնական կամ էթնիկական խտրականության, յուրաքանչյուրին հյուրասիրելու հայերի սովորույթը: Այն հակադրվում է աղանդավոր խմբի՝ հյուրի ընտրողաբար վերաբերվելու սովորույթից: Ուստի, այս պարագայում, ի տարբերություն աղանդավորների խմբերի, կարող ենք փաստել հայերի էթնոկրոնական ինքնության դրսևորումը տոլերանտության և համերաշխության սկզբունքների համաձայն: Նման դրսևորումները ունեն կարևոր դաստիարակչական և մանկավարժական նշանակություն՝ երիտասարդ սերնդին զերծ պահելու որևէ աղանդավորական ազդեցություններից:

Էթնոկրոնական ինքնության պատկերը տարբերվում է նաև հին ու նոր (Արևմտյան Հայաստանից վերաբնակեցված) հայերի մոտ: Այն նույնպես ուղեկցվում է էթնիկության տարբեր դրսևորումներով: Արդեն այն փաստը, որ նոր հայերը ավելի շատ են մոմ վառում սրբատեղիներում,

որ  իրենք հին հայերից ավելի վաղ են ունեցել գյուղում տերտեր, դատում են նոր հայերի ավելի մեծ կրոնականության մասին, ինչի բնութագրական արտահայտությունը՝ իրենց ավելի մեծ «ուժն է»: Այս փոխհարաբերությունները հանգում են վերաբնակեցման խնդրի սոցիալ-հոգեբանական իմաստավորմանը: «Վերաբնակեցման փաստը պահանջում է զոհաբերություն»:[131] Այս պատկերացման հետ առնչվում է նոր հայերի նկատմամբ ներկայումս հայտնի վերաբերմունքը՝ որպես «սովածների»: Այդ պատճառով, նրանց չհյուրասիրելով, մարդը իր վրա է վերցնում ավելի մեծ մեղք, քան եթե այդպես վարվեր հին հայի նկատմամբ, քանի որ սովածի համար (այսինքն՝ վերաբնակչի) «ուտելիքի հոտը ավելի ուժեղ է»:

Այս առումով նշենք նաև նոր հայերի հներից ամենակարևոր տարբերակիչ գծերից մեկը՝ դա լեզուն է: Ավելի հստակ, տարբեր բարբառներն են, որոնք մասսայականապես ընկալվում են որպես տարբեր լոկալ լեզուներ: Վերաբնակեցման խնդիրը ինքնին կապված էր նաև լեզվի խնդրի հետ: Գ.Սրվանձտյանցը որպես հայերի դժվար կացությունից ազատվելու հնարավոր միջոցներից է նշում հետևյալները. «կամ վերաբնակեցումը, կամ ռուսների, անգլիացիների և այլոց ազգության՝ այսինքն՝ իրենց կրոնի ընդունումը»:[132] Կրոնափոխության մասին պատկերացումները դուրս են մղվում անձնային դաշտից և, ստանալով խիստ սոցիալական երանգավորում, արտահայտվում են «օտար» էթնիկ խմբերին հատուկ հատկանիշներով: Նման կրոնափոխության հիմնական պատճառներից ադեպտները նշում են նաև եկեղեցու բացակայությունը (օտար էթնիկ միջավայրում): Ուստի, սրբազան տարածությանառկայությունը գնահատվում է իր հասարակական արժեքով, որի բացակայության դեպքում խախտվում է «յուրային-օտար» կամ «ներս-դուրս» բինարային հակադրությունը: Նկատենք, որ հասարակության առկայությունը (հասարական կարծիքի իմաստով) կատարում է որոշիչ դեր նաև հարսնացուի ընտրության հարցում, որը որ, ըստ ադեպտների կարծիքի,  կարող էր լինել մահմեդական, եթե չլիներ հասարակության համընդհանուր բացասական կարծիքը:

---

131 Սրվանձտյանց Գ., Երկեր, հ.2, Երևան, 1982, 426 էջ:

132 Նույն տեղում:

Մի կողմից, տեսնում ենք, որ օտար կրոնին հետևելը ենթադրում և նշանակում է օտար էթնիկ հանրության պատկանելիությունը: Սա ևս մի ապացույց է հայերի կրոնական և էթնիկ ինքնությունների նշնային նույնացման: Այլ խոսքերով, դա վկայություն է այն բանի, որ անձի էթնոկրոնական ինքնությունը կրում է էթնոպահպան գործառույթ և ընդգրկվում է անձի էթնոմետ սոցիալիզացիայի մեջ: Մյուս կողմից, վերաբնակիչ հայերը հայտնվում են սահմանային իրավիճաակում.նրանք թեև մնում են «յուրային» էթնիկական հանրության մեջ, բայց վերջինիս կողմից ընդունվում են «օտարված»: Երկու դեպքում էլ գործ ունենք «յուրային» միջավայրից վերաբնակիչ անձիսոցիալ-հոգեբանական «օտարման»մեխանիզմի հետ: Դրա վառ ապացույցներից է Հր.Աճառյանի կողմից ներկայացված էթնո-լեզվաբանական նյութը՝ վերաբերող խոյեցի և սալմաստեցի վերաբնակիչներին. «Խոյեցի» Շմ. բարբառով նշանակում է «անհասկացող, բթամիտ, խաչագող», Երևանի բարբառով՝ «սուտ բարեպաշտ ձևանալով՝ մինչև իսկ սրբութիւնները գողցող, ընդհանուր առմամբ խաբեբայ», իսկ Տփղիսի բարբառով՝ «մականուն սալմաստեցոց»:[133]

Այսպիսով, մենք քննեցինք անձի կրոնական ինքնության գործառնությունը էթնիկ ինքնության դրսևորման մեջ: Վերը նշված ոչ լրիվ, բայց ներկայացուցչական տեղեկությունների այս ընտրանին ցույց է տալիս հայերի էթնոկրոնական ինքնության ամբողջ ինքնատիպությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու հասարակությունում տարբեր ոլորտների՝ սոցիալական, բարոյական, ստրատիֆիկացիոն և այլ, փոխկապակցված հարաբերությունները: Դրանով էլ պայմանավորված է անձի էթնիկ ինքնության հետ հարակից խնդիրների՝ ինչպես չափի ու կշռի, վերաբնակեցման, մարդու և շրջակա միջավայրի ընկալման ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

Այժ ներկայացնենք անձի կրոնական և ազգային Ես-պատկերների դրսևորումների առանձնատկությունների վերաբերյալ հակիրճ համեմատական նյութ այլ էթնոսների մոտ: Այդ նյութի ընտրությունն պայմանավորված է եղել երկու սկզբունքներով. նախ, հայերի հետ կապի առկա-

133 Աճառեան Հր., Հայերէն գաւառական բառարան,-ԷԱԺ, հ.թ, 1913 թ.

յությամբ՝ որպես միջէթնիկ հարաբերությունների ևս մի օրինակ, և, երկրորդ, կոնֆլիկտային և ոչ կոնֆլիկտային միջէթնիկ հարաբերությունների դիտարկմամբ:

Ռուսական խոշոր բազմաէթնիկ քաղաքներում կատարված հետազոտության արդյունքներով պարզվել է, որ էթնիկ ինքնությունը այլ ազգերի (հայերի, վրացիների, հրեաների, թաթարների և այլոց) մոտ ավելի վաղ տարիքում է արտահայտվում, քան ռուսների մոտ:[134] Նրանք ավելի հաճախ էին կապում իրենց ինքնանույնականացումը էթնիկ պատկանելիության հետ: Նմանատիպ հետազոտություններում հեղինակները դա պայմանավորում են ընտանեկան արժեքներով և ավանդույթներով:[135] Առաջին խմբի (այլազգիների) մոտ նկատվում է էթնիկ ինքնության և հավատքի, այլ խոսքերով, ազգային և կրոնական Ես-պատկերների, նույնականացման միտում: Այն հարցին, թե կցանկանայիք արդյոք փոխել իրենց ազգությունը, հարցվողների կեսից ավելին պատասխանում էր, որ երբևիցէ չէին ցանկանա փոխել իրենց ազգությունն ու հավատքը (հետազոտվողների 55%): Էթնիկ և կրոնական պատկանելիության մասին իրենց պատասխանները կրում էին էմոցիոնալ ավելի վառ բնույթ, քան ռուս երեխաների պատասխանները: Ռուս երեխաները իքնանույնականացման հատկանիշների ցանկում ավելի հաճախ էին նշում հասակակիցների հետ շփումը, քան իրենց ազգության և հավատքի գիտակցումը:

Այս էմպիրիկ նյութը ապացույց է այն բանի, որ բազմաէթնիկ միջավայրում էթնիկ փոքրամասնությունների մոտ ավելի վառ է արտահայտվում էթնոմետ ինքնությունը: Ավելին, այն կրում է էթնոպահպան գործառույթ, ինչում էթնոկրոնական ինքնությունը կատարում է կարևոր դեր: Այն նույնացվում է էթնիկ պատկանելիության հետ և դիտվում որ-

[134] Гармаева Т. В., Особенности этнической идентичности младших школьников и подростков, проживающих в мегаполисе // Психологические исследования: электрон. науч. журн. 2010. N 2(10). URL: http://psystudy.ru

[135] Гургуров Д. И., Гагаузы – потомки тюрок-огузов или славяно-болгар?, Кишинев,1988, 162 с.; Дробижева Л. М., Российская и этническая идентичность: противостояние или совместимость / Россия реформирующаяся, М., 2002, 381 с.

պես անձի կայուն, օբյեկտիվ հատկանիշ:[136] Մեկ այլ համեմատական նյութ է ընձեռել ք.Իժևսկում (ՌԴ) կատարված հետազոտությունը, որը նույնպես վերաբերում էր բազմաէթնիկ հասարակությանը՝ գերազանցապես ռուսների և թաթարների միջավայրին: Այն անց է կացվել թաթարական վարժարանում և դպրոցում՝ նպատակ ունենալով բացահայտելու թաթարների էթնիկության դրսևորումները և կրթական գործընթացի դերակատարությունը դրանցում:[137] Մեր համար այն կարևորություն է ներկայացնում այնքանով, որքանով ցուցադրում է էթնիկության արտահայտությունները ոչ կոնֆլիկտային միջէթնիկ իրավիճակում: Հարցվողները նշում էին, որ «թաթարականությունը» կապված չէ մահմեդական կրոնի հետ. «Մահմեդականությունը մզկիթում է, այլ ոչ՝ կրթական հաստատությունում:  Մենք աշխարհիկ կրթական հիմնարկություն ենք և չենք դասավանդում մահմեդական կրոն: Մենք նաև չենք կարող հասկանալ, թե ինչպես է հնարավոր մահմեդականության միջոցով վերածնել ազգային թաթարական արժեքները: Մզկիթն իր համար է, մենք՝ մեր»: Ուսուցչական անձնակազմի այս դիրքորոշումը ցույց է տալիս, որ, նրանք՝ նպատակ դնելով վերածնել թաթարական էթնիկ ինքնությունը, չեն հենվում կրոնական ինքնության վրա: Ուստի, այն չի դիտվում էթնիկ ինքնության կայուն հատկանիշ: Այդպիսին չի համարվում նաև թաթարական լեզուն: Հարցվողները նշում են, որ հաճախ թաթարները չեն տիրապետում ազգային լեզվին, բայց համարում են իրենց թաթարներ: Այս պարագայում «թաթարականությունը» գերազանցապես կապվում է ազգային ավանդույթների հետ, որոնց համակարգման և խորապես գիտակցման նպատակով էլ ստեղծվել են թաթարական կրթական հաստատությունները: Այսպիսով, դպրոցը ուղղված է լրացնելու էթնիկության «պակասը», ինչը արդյունք է ընտանիքում ստացած ազգային թերի դաստիարակության:

---

136 ред. Л. М. Дробижевой, Социальная и культурная дистанции. Опыт многонациональной России, М., 1998, 385 с.; ред. БарреттМ., РязановойТ., ВоловиковойМ., Развитие национальной, этнолингвистической и религиозной идентичности у детей и подростков, М., 2001, 196 с.

137 Шадрин А. А., КардинскаяС. В.,-«Национальное образование» как мультикультурный проект, http://vestnik.udsu.ru/2005/2005-12/vuu_05_12_17.pdf

Տեսնում ենք, որ թաթարների մոտ ոչ կրոնը, ոչ լեզուն, ոչ էլ ընտանեկան դաստիարակությունը չեն համարվում էթնիկության կայուն հատկանիշներ: Հարց է առաջանում թաթարական էթնիկության գոյության ձևերի մասին: Ավելին, հարցման ընթացքում գրի արված թաթարական էթնիկ ինքնության կայուն հատկանիշները ներակայացնում է ոչ թե բացառապես ազգային Ես-պատկերը, այլ՝ համամարդկային արժեքները, ինչպիսիք են. «հյուրընկալությունը, ինքնասիրությունը, հպարտությունը, աշխատասիրությունը» և այլն: Այս սթերեոտիպերը կարելի է վերագրել ինչպես թաթարներին, այնպես էլ՝ այլ էթնոսներին: Ուստի, դրանք չեն կրում որևէ էթնիկ բովանդակություն, և կրկին ցույց են տալիս թաթարական էթնիկ ինքնության անորոշ սահմանումը: Հենց այս պարագայում է կարևորվում կրթական հաստատության կոչումը վերաձնելու թաթարական էթնիկությունը: Նման հաստատությունների գոյությունը պայմանավորված է թաթարական համայնքային կենտրոնի գործունեությամբ, որն էլ ներկայացրել է քաղաքի վարչական իշխանությանը նման հաստատությունների անհրաժեշտությունը: Այսպիսով, ազգային փոքրամասնությունների էթնիկության ինստիտուցիոնալիզացիայի միջոցները նաև էթնոքաղաքական զարգացումների արդյունք են:

Էթնիկ ինքնության վերաձննդի քաղաքականության առաջնահերթ լծակներից է ավանդական անցյալի հետ կապի մատնանշումը:[138]

Վերը նշված հետազոտություններում հատուկ շեշտվում են, մի կողմից, թաթարական կրթության հին ավանդույթները, և, մյուս կողմից, ներկա կրթական գործընթացը միտվում է ազգային ավանդույթների ճանաչմանը: Կրթության մեջ էթնիկ ավանդույթների ներկայությունը ապահովվում է կրթական հարուստ «անցյալի» տեղափոխումով ներկա կրթական գործընթացի մեջ: Թաթարական ավանդույթները, այսպիսով ներկայանում են որպես կրթական հաստատության ավանդույթներ, ինչը, իր հերթին, ներկայացնում է թաթարական համայնքային կենտրոնի կարևո-

[138] Акопян Н., Хачатрян А., Психологический обзор современных технологий по актуализации исторической памяти // Историческая память и современные политические процессы, Санкт-Петербург, 2021, 20-28

րությունը թաթարական էթնիկության վերածննդի և զարգացման գործում:

Ակներև է, որ էթնոքաղաքական որոշակի գործընթացների արդյունքում կառուցվում է սոցիալական իրականության պատկերը, ուր թաթարական էթնիկությունը հասկացվում է գերազանցապես ազգային ավանդույթների համատեքստում, որոնք էլ դիտվում են թաթարական էթնիկության կայուն հատկանիշներ:

Ինչպես տեսանք, ՌԴ բնակվող թաթարների էթնիկ ինքնության կայուն հատկանիշներից դուրս են մղվել լեզվական և կրոնական հատկանիշները, բայց որպես այդպիսին դարձել են ազգային ավանդույթները: Նշենք, որ այս դեպքում ուսումնասիրվել է ոչ կոնֆլիկտային միջէթնիկ իրավիճակ, ուր թաթարները համերաշխ ապրում են ռուսների հետ: Դա վերաբերում է նաև այնպիսի էթնոտարբերակիչ հատկանիշին, ինչպիսին է կրոնական ինքնությունը: Որոշ դեպքերում այն կարող է դառնալ ինքնանույնականացման և էթնոսի բնութագրման կարևորագույն տարրերից մեկը: Օրինակ, ներկայիս գլոբալիզացիայի և համաշխարհային ինտեգրման պայմաններում ռուսներից շատերը չեն կարողանում միանշանակ բացատրել «ռուսականության» յուրահատկությունը: Եվ այստեղ իր ուրույն դերն է կատարում ուղղափառությունը՝ ոչ այնքան որպես կրոն, որքան որպես ռուսական ինքնատիպության խորհրդանիշ: Եվ հատկանշական է, որ հարցվողներից 82% իրենց համարում են ուղղափառ, իսկ ընդամենը 42%՝ հավատացյալ:

Ա.Կ.Պապցովան քննության է առել գագաուզների էթնիկ ինքնության դրսևորումները:[139] Գագաուզների կրոնականությունը նշվում էր տարբեր հեղինակների մոտ: Լ.Ս.Բերգի համաձայն, գագաուզները «բավական կրոնական են»:[140] Վ.Ա.Մոշկովը բնութագրում է իրենց որպես

[139] Папцова А. К., К вопросу об эволюции соотношения религиозной, этнической и языковой идентичностей гагаузов в XIX -XX вв.,-http://turkolog.narod.ru/info /gag-35.htm.

[140] Берг Л. С., Бессарабия, Кишинев,1993,196 с.

կոշտ, գրեթե ֆանատիզմի հասնող քրիստոնյաների:[141] Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 19-20-րդ դդ. գագաուզների էթնիկ ինքնության հատկանիշների մեջ գերիշխող տեղ է զբաղեցնում կրոնական ինքնությունը: Այն էթնիկ ինքնության համալիրում արտահայտելը վկայություն է այն բանի, որ կրոնական ինքնությունը մասնակցում է գագաուզների էթնիկ մոբիլիզացիային և էթնիկության ցուցանիշներից մեկն է: Գագաուզների ներկայությունը Բեսարաբիայում բացատրվում է Բալկաններում թուրք-մահմեդական հալածանքներով:[142] Անկասկած, գագաուզները գիտակցում և բացատրում են իրենց հայտնվելը Բեսարաբիայում էթնոկրոնական ինքնությունը պահպանելու նպատակով: Գագաուզների բուլղարական ծագման օգտին են խոսում բանահյուսական բազմաթիվ նյութեր և պատմական վկայություններ: Դրանցից առավել հատկանշական է Դ.Չակիրի կողմից գրառված մի վերաբնակչի վկայությունը գագաուզների ծագման մասին. «Պատերազմի ժամանակ թուրքերը բոլոր քրիստոնյաներից պահանջեցին փոխել հավատքը, այլապես բոլորը կոչնչացվեն: Եվ քրիստոնյաներից մի քանիսը հրաժարվեցին կրոնից, բայց պահպանեցին լեզուն, իսկ մյուսները՝ գագաուզները, հրաժարվեցին հարազատ բուլղարական լեզվից, բայց պահպանեցին իրենց հավատքը»:[143]

Էթնիկության սոցիալ-հոգեբանական դրսևորումների հայեցակետից հավատքի պահպանության համար գագաուզների հալածանքների վկայությունները խոսուն փաստեր են իրենց համար կրոնական պատկանելիության կարևորության և էթնիկ յուրօրինակության արտահայտության մասին: Նման բանահյուսական նյութ մեր կողմից գրառվել է նաև հայերի մոտ: Հայաստանի տարածքում կատարած հարցումների ընթացքում գրի են առնվել նկանատիպ բանահյուսական վկայություններ հայերի և այլ ժողուրդների ծագման վերաբերյալ: Արժանի է հիշատակման մի

---

[141] Мошков В. А.,Наречия бессарабских гагаузов,-Образцы народной литературы тюркских племен, т.10, СПб.1904., 252 с.

[142]Каранастас-Радова О.К.,Гагаузы в составе задунайских переселенцев и их поселения в Буджаке (конец XVIII- начало XIX вв.), Кишинев-Комрат, 2001, 131 с.

[143] Гургуров Д. И., Гагаузы – потомки тюрок-огузов или славяно-болгар?, Кишинев,1988, 162 с.

պատկերացում Մուշի հայերի և քրդերի փոխհարաբերությունների մասին: «Մենք, քրդերս, առաջ եղել ենք հայեր: Երբ մեր պապերը կորցրեցին իրենց ազատությունը և զավթիչները հայերին առաջարկեցին ուրանալ քրիստոնեությունը, նրանք՝ համաձայնվելով, վերցրեցին ձիեր, զենք և ազատություն: Այսպես, մեր պապերը պահպանեցին ազատությունը՝ կորցնելով հավատքը, իսկ ձեր պապերը պահպանեցին կրոնը, բայց կորցրեցին ազատությունը և մնացին գերի»:

Մուշի հայերի և քրդերի մասին այս պատկերացումը ունի զուգահեռներ անհավատների մասին պատկերացման հետ՝ որպես «անաղ ու հաց» քրդերի, այսինքն՝ որպես հավատքը կորցրած հայերի, և, հետևապես, հյուրասիրության օրենքներին չհետևող անձանց: Նման կարծրատիպային պատկերացումները վերաբերում են միջէթնիկ կոնֆլիկտային իրավիճակներին, երբ հալածվող կողմը ստիպված է լինում ընտրություն կատարել սեփական ազգության և կյանքի պահպանման միջև: Այստեղ է, որ նկատում ենք էթնիկ և կրոնական պատկանելիության նույնացումը սոցիալական լարված իրավիճակում: Փոխել դավանանքը նշանակում է նաև փոխել ազգային պատկանելիությունը, և հակառակն: Այլ խոսքերով, ազգային Ես-պատկերի դրսևորման կայուն հատկանիշ է դառնում անձի կրոնական Ես-ը ինքնությունը, ինչը վառ արտահայտություն է գտնում կոնֆլիկտային միջէթնիկ հարաբերություններում և նպաստում է էթնոմետ ինքնության դրսևորմանը: Այստեղից էլ կարող ենք եզրակացնել, որ էթնոկրոնական ինքնությունը կարող է հիմք ծառայել «յուրային» էթնիկ խումբը «այլոցից» տարբերելու և հակադրելու մեջ այն դեպքում, եթե խմբերը գտնվում են հակամարտության մեջ: Սա կարևոր մեթոդոլոգիական տեսակետ է այն խնդրի, թե որ չափանիշների հիման վրա են էթնիկ խմբերը ընկալվում ոորպես «յուրային» կամ «օտար»:

Վերը ներկայացված նյութը ցույց է տալիս, որ կրոնական ինքնությունը ունի մեծ նշանակություն հայերի ազգային Ես-պատկերի սահմանման կամ էթնիկ ինքնության արտահայտության համար: Այն դիտարկելու համար սոցիալ-հոգեբանական հայեցակետից անցկացվեցին միջմշակութային համեմատություններ այլ էթնիկ խմբերի (թաթարների, գա-

գաուզների, քրդերի, ռուսների և այլոց) էթնիկ ինքնության դրսևորումների հետ: Կարող ենք փաստել, որ անձի կրոնական Ես-պատկերը ստանում է ազգային Ես-պատկերի կայուն հատկանիշ գերազանցապես այն դեպքում, երբ անձը գտնվում է կոնֆլիկտային իրավիճակում այլ էթնիկ խմբի հետ: Այդ դեպքում հակամարտ խումբը ներկայացվում է որպես այլ, «օտար» հավատք ունեցող մի խումբ՝ ի դեմս յուրայինների խմբի, որոնց դավանանքի նկատմամբ վերաբերմունքը կրում է էթնոներկայացուցչական և էթնոպահպան բնույթ:

Կրոնական ինքնության ներկայությունը էթնիկ ինքնության կառուցվածքում կարող է մասնակիորեն պայմանվորված լինել տվյալ հասարակության կոնսերվատիվ բնույթով, մասամբ էլ՝ այն հանգամանքով, որ կրոնական նույնականացման արդյունքում ձևավորվում են էթնիկ ինքնության որոշակի արժեքները և, խոսելիս ազգային, էթնիկ արժեքների մասին՝ անձը անպայման հղում է կատարում կրոնական ինքնության փաստին:

Կրոնական Ես-պատկերի գործառնությունը անձի ազգային Ես-պատկերի դրսևորման մեջ պայմանավորված է ներքին և արտաքին մի շարք գործոններով: Ներքին գործոնը ի հայտ է գալիս անձի էթնիկ յուրօրինակությունն ատահայտելու և այլ էթնիկ խմբերին ներկայացնելու ժամանակ: Արտաքին գործոնը կապված է միջէթնիկ հարաբերությունների պատմականորեն ձևավորված գործընթացներով և համաշխարհային գլոբալիզացիայի միտումներով, երբ փոքր էթնիկ խմբերը ձգտում են ընդգրկվել համաշխարհային կրոնական կամ այլ խմբավորումների մեջ:[144]

Հայերին, ուստի, բնորոշ է ինտեգրման երկու ոլորտ՝ աշխարհով մեկ սփռված հայկական սփյուռքի և, ընդհանուր առմամբ, քրիստոնեական աշխարհի հետ նույնացումը: Այսպես, հայերը իրենց ազգային պատկանելությունը ցուցադրում են իրենց քրիստոնյա, առավել ևս՝ աշխարհում առաջին քրիստոնյա, լինելով: Դրա մեկ այլ վկայություն է հա-

[144] Хачатурян В.М., История мировых цивилизаций, М., 1998, 201с.

ճախ հանդիպող «հայերը՝ քրիստոնյա ազգ» արտահայտությունն է, ուր պարզ երևում է կրոնական և էթնիկ ինքնությունների նույնացումը:

Տարէթնիկ միջավայրում էթնիկ ինքնության դրսևորումների վերը ներկայացված համեմատական նյութը ամփոփում է թույլ արտահայտված կրոնական ինքնության գործառնության սոցիալ-հոգեբանական արտահայտությունները: Նրանք, անվերապահորեն, մատնանշում են ասիմիլիացիոն և էթնոկրոնական ինքնության ստվերման միտումների մասին: Ուստի, կրոնական Ես-պատկերի առկայությունը էթնիկական խմբերի ներքին համախմբվածության առանցքային գործոն է տարէթնիկ միջավայրում: Հետևապես, դեռահասի էթնոմետ դիրքորոշումների ձևավորման և էթնոկրոնական ինքնության ամրակայման առավելապես նպաստավոր սոցիալական միջավայրը սոցիալականացման կրթական ինստիտուտն է: Այն ուղորդում և նպաստում է դեռահասի էթնոկրոնական ինքնության նկարագրի ձևավորմանը և նպատակաուղղված գործունեությամբ խթանում է էթնոմետ արժեհամակարգի յուրացումը: Ուստի, կրթական ինստիտուտներում ազգային ես-ի կրթման և դաստիարակման գործընթացը հանգեցնում է կրոնական ես-ի ամրապնդմանը և գիտակցմանը որպես անձի էթնիկության դրսևորման ամբողջական պատկեր:

## ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

### Կիրառված մեթոդների նկարագիրը և հիմնավորումը

Անձի ինքնության կրոնական և ազգային Ես-պատկերների ուսումնասիրությունը պահանջում է համապատասխան փորձարարական հետազոտության անցկացում:

Ստորև ներկայացվում է փորձարարական հետազոտության նկարագրություն, որում ընդգրկվել են ընդհանուր թվով 329 դեռահաս (163 աղջիկ և 166 տղա): Հետազոտության ընտրանքի տարիքային սահմանները (10-15 տարեկան դեռահասներ) հստակեցվել են պիլոտային հետազոտության արդյունքների հիման վրա, որում ընդգրկվել են 7-9 տարեկան 22 աղջիկներ և 23 տղաներ (45 հոգի): Փորձարարական հետազոտության վերջնական արդյունքները ստուգելու և գիտական վարկածը հաստատելու նպատակով առանձնացվեց նաև ստուգիչ խումբ, որում ընդգրկվեցին փորձարարական հետազոտությանը մասնակցող երեխաների ծնողները և ուսուցիչները (98 հոգի):

Հետազոտությունն անց է կացվել դեռահասների երկու խմբերի հետ: Առաջին խմբի մեջ ընդգրկվել են 10-12 տարեկան դեռահասներ (86 աղջիկ և 88 տղա), իսկ երկրորդ խումբի մեջ՝ 13-15 տարեկան դեռահասներ (77 աղջիկ և 78 տղա):

Տարիքային երկու խմբերում էլ եղել են հայազգի դեռահասներ (n=116), այդ թվում սիրիահայ (n=29) և հայ աղանդավոր դեռահասները (n=33) և հետևյալ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները՝ եզդի դեռահասներ (n=77), մոլոկան (n=68) և ասորի դեռահասներ (n=68):

Հետազոտության իրականացումը կատարվել է երկու փուլերով: Երկու փուլերին մասնակցել են դեռահասների երկու խմբերը: Փուլերի բաժանումն ու դասակարգումը կապված է ուսումնասիրվող երևույթի նախ-

կինում գրեթե չլուսաբանված լինելու հանգամանքով և այժմ բազմակողմանի հետազոտության անցկացման տեսլականով: Ուստի, առաջին փուլում անց են կացվել էթնիկական և կրոնական ես-պատկերների բացահայտմանն ուղղված մեթոդական քննությունները, ի հայտ են բերվել անձի էթնիկականության և կրոնականության բաղադրատարրերը:

Երկրորդ փուլի ընթացքում նախորդ փուլի արդյունքները դասակարգվեցին տեսականորեն ու մեթոդապես և ներկայացվեցին որպես գիտատեսական նոր կոնցեպտի ապացույց: Ուստի, ստորև նկարագրվում են փորձարարական հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն ու դրանց հիմնավորումները:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները և նրանց ձևափոխումները. «Անձի անկախ բնութագրերի ընդհանրացման» մեթոդը, Գ.Ու.Սոլդատովայի «Էթնիկական նույնականության տիպերը» և «Էթնիկական աֆիլիացիա» մեթոդական մշակումները, Դ. Կացի և Կ. Բրեյլիի «Հատկանիշների վերագրումը» մեթոդիկայի հիման վրա ստեղծված «Էթնիկական և կրոնական ինքնության ախտորոշում» մոդիֆիկացված հարցաշարերը, պրոյեկտիվ մեթոդների համալիրում ձևավորված Ֆ. Գուդինաֆի «Ինքնանկար» պրոյեկտիվ մեթոդիկայի հենքով կազմված «Էթնիկական ես-պատկեր» և «Կրոնական ես-պատկեր» ձևափոխված թեստերը ու «Էթնիկական և կրոնական ես-պատկերների նույնականության հոգեախտորոշման էքսպրես» հեղինակային թեստը, «Էթնոմետ դիրքորոշումների ախտորոշումը բաց հարցերի միջոցով» հարցարանը, «Ցանցային ախտորոշում» հեղինակային մեթոդիկան:[145] Հետազոտության արդյունքների մշակման ժամանակ իրականացվել է հոգեբանական, այնուհետև՝ ստացված արդյունքների համահարաբերակցական վերլուծություն:

**«Անձի անկախ բնութագրերի ընդհանրացման» մեթոդը** ենթադրում է թե՛ սեռատարիքային, և թե՛ էթնիկական ու կրոնական պատկա-

[145] Katz D., Braly K. W. Racial stereotypes of one hundred college students // Journal of Abnormal and Social Psychology,1933. Vol. 28,p. 280-290.

նելիության տվյալների հավաքագրում: Տվյալ մեթոդը հետազոտական նպատակներին հարմարացնելու համար կարող է պարունակել նաև անձի էթնիկական և կրոնական ես-պատկերներին նվիրված պատկերացումներ:

**«Էթնիկական նույնականության տիպերը»** մեթոդական մշակման նպատակը ազգային ինքնագիտակցության միտումների ուսումնասիրությունն է դեռահասության տարիքում, հատկապես տարբեր էթնոկիրների շրջանում (հավելված 1): Դիտարկվում են էթնիկական նույնականության հետևյալ տիպերը՝ էթնոնիհիլիզմ, էթնիկական անտարբերություն, նորմա կամ դրական էթնիկական նույնականություն, էթնոմեկուսացում, ազգային ֆանատիզմ:[146]

**«Էթնիկական աֆիլիացիա»** մեթոդական մշակումը համալրում է նախորդ մեթոդի կիրառությունը, քանի որ այն ուղղված է բացահայտելու էթնոաֆիլիատիվ միտումները: Վերջիններս արտացոլվում են հարցաշարի համապատասխան ինդիկատորների միջոցով և նկարագրում են անձի էթնիկական պատկանելիության բարձր կամ ցածր պահանջմունքները:[147]

Դ. Կացի և Կ. Բրեյլիի «Հատկանիշների վերագրումը» մեթոդիկան ստեղծվել է 20-րդ դարի 30-ական թվականներին: Այդ մեթոդիկայի և «Մշակութա-արժեքային դիֆերենցիալ» մեթոդիկայի[148] հիման վրա ստեղծված **«Էթնիկական և կրոնական ինքնության ախտորոշումը»** մոդիֆիկացված հարցաշարերը կիրառվել են համալրելու վերը ներկայացված մեթոդական մշակումների արդյունքները: Հետազոտվողներին հանձնարարվել էր գնահատել էթնիկական 40 հատկանիշ, որից հետո՝ ընտրել դրանցից կրոնական ուղղվածությամբ աչքի ընկնող հատկանիշները: Առաջարկված հակադիր սեմանտիկ զույգ հատկանիշներն արտահայտում են՝  տվյալ էթնոկիրի նկատմամբ ինքնավերաբերմունքը (1, 2,

---

[146] Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Եր., 2002, 392 էջ:

[147] Նույն տեղում:

[148] Նույն տեղում:

12,15,16,19,20), էթնիկական ես-ի ակտիվության ուժը (3, 4, 9,11,13,17,18), կրոնական ես-պատկերի գնահատականը (5,6,7,8,10,14): Պարտադիր պայման է՝ հատկանիշները չպետք է պարունակեն երևույթի անմիջական բնութագիրը:

Նույն խնդրին ենք ծառայեցրել նաև «Էթնոմետ դիրքորոշումների ախտորոշումը բաց հարցերի միջոցով» հեղինակային թեսթը, որի սահմաններում հետազոտվողներին առաջադրվել էր բնութագրել էթնոմետ դիրքորոշումները ներկայացնող էթնիկական և կրոնական ես-պատկերները: Թեսթի բովանդակային առանցքը կազմում էին անձի էթնոմետ դիրքորոշումները և դրանցում կրոնական ինքնության առկայության հարցադրումները: Թեսթի առավելությունն այն էր, որ այն հետազոտվողներին հնարավորություն ընձեռեց նշելու այդ հարցադրումների կարևորությունն ու սոցիալականացման կրթական ինստիտուտի գործառնությունը դրանց արժևորելու գործում:

Հաջորդ մեթոդիկան մշակվել է Ֆ. Գուդինաֆի «Ինքնանկար» պրոյեկտիվ մեթոդիկայի հենքի վրա: **«Էթնիկական ես-պատկեր», «Կրոնական ես-պատկեր»** թեսթերի կիրառման անհրաժեշտությունը նույնպես բխում էր բազմակողմանի ուսումնասիրության և ապացուցելիության պահանջներից: «Էթնիկական ես-պատկեր» և «Կրոնական ես-պատկեր» մեթոդական մոդիֆիկացիաների օգնությամբ ախտորոշվեցին և ապացուցվեցին դեռահասների էթնիկական և կրոնական ես-պատկերները բացահայտող բաղադրիչները և, մյուս կողմից, լույս սփռեցին անձի էթնոկրոնական ինքնության տարբեր դրսևորումների վրա: **«Էթնիական և կրոնական ես-պատկերների նույնականության հոգեախտորոշման էքսպրես»** պրոյեկտիվ մեթոդիկան կառուցվել է էթնիկական ես-պատկերների, էթնիկական հաղորդակցման, իրազեկության, լավատեսության և շարժունության միջինացված ցուցանիշների համադրման միջոցով, համապատասխանաբար՝ կրոնական ես-պատկերների, կրոնական իրազեկության, լավատեսության և ակտիվության միջինացված ցուցանիշների հետ: Ուստի, այս մեթոդիկան ևս հնարավորություն տվեց հստակեց-

նելու «էթնոկրոնական ինքնություն» եզրույթի հասկացութային շրջանակը:

**«Ցանցային ախտորոշում»** հեղինակային մեթոդիկան կազմվել է աշխատանքի երկրորդ փուլում: Անց է կացվել բոլոր ընտրախմբերի հետ:

Նպատակը՝ դուրս բերել դեռահասի կողմից կոնֆենսինալ ինքնությամբ պայմանավորված էթնոմետ արժեհամակարգը: Այս մեթոդիկայի առանձնահատկություններն են՝

-Այն հնարավորություն է տալիս բացահայտել ազգային և կրոնական պատկերացումների համակարգը,

-Դեռահասի՝ որպես տվյալ էթնոկրի և, միաժամանակ, որպես տվյալ կրոնի ներկայացուցչի գիտակցումը,

-Տվյալ էթնոկիր դեռահասի սոցիալական հարաբերությունները նույն տարածաշրջանում բնակվող մյուս էթնոկիր դեռահասների հետ,

-Այս մեթոդի առավելությունը նրա շարժունությունն է և ոչ թե ստատիկ լինելը:

Անց կացման գործընթացը հետևյալն է՝

Քարտի վրա, բոլոր բաժիններում պարտադիր պետք է արտահայտված լինեն նույն տարածաշրջանում ապրող բոլոր էթնոկիր խմբերը (հայեր, եզդիներ, սիրիահայեր, մոլոկաններ, ասորիներ, ինչպես նաև աղանդավորներ): Դեռահասը պետք է համապատասխան նշումներ կատարի (դրական կամ բացասական) նրանց նկատմամբ վերաբերմունք արտահայտելիս:

Ցանցի ստորաբաժանումներն են՝

• Հայեր

• Սիրիահայեր

• Եզդիներ

• Մոլոկաններ

• Աղանդավորներ

• Ասորիներ

Հրահանգը հետևյալն է՝ «Առօրյա կյանքում Դուք առավելապես նախընտրում եք…»՝

1.շփվել նույն սեռի, թե՞ հակառակ սեռի ներկայացուցչի հետ,

2. ինչո՞վ է պայմանավորված Ձեր ընտրությունը՝

- նա իմ կրոնի ներկայացուցիչն է,

- նա իմ ազգի ներկայացուցիչն է,

- մենք նույն կրոնի և ազգի ներկայացուցիչներն ենք:

Այսպիսով, վերը նկարագրված «Ցանցային ախտորոշում» հեղինակային մեթոդիկան նպատակաուղղված է բացահայտելու հարցվողների սեռադիրքային, էթնոմետ և կրոնական դիրքորոշումների ամբողջական կառուցվածքը: Դեռահասներին առաջադրվել էր տալ մեկնաբանություններ առօրյա կյանքում նախընտրելի ներ- և միջէթնիկ շփումների վերաբերյալ: Այս մեթոդիկայի կիրառումը եկավ ապացուցելու ուսումնասիրվող երևույթի ոչ ֆորմալ մեթոդների կիրառման արդյունքում ստացված եզրահանգումները:

Յուրաքանչյուր փորձարարական հետազոտություն իրականացնելիս անհրաժեշտ է մատնանշել, որ ընտրված մեթոդների կիրառելիու-

թյունը բխում է ուսումնասիրության բուն նպատակից և ուղղված է գիտական վարկածի ապացուցմանը: Այդ հանգամանքով է պայմանավորված ընտրված մեթոդների մշակումն ու հետագա վերլուծությունը: Տվյալ հետազոտության օրինակում մեթոդների երկու փուլով իրականացումը հանգեցրեց ազգային և կրոնական ես-պատկերներիի ներկայացմանը, նրանցում՝ կրոնական ստվերային ես-ի բացահայտմանն ու սոցիալականացման կրթական ինստիտուտի արժևորմանը էթնոկրոնական ինքնության ձևակերպումներում:

**Փորձարարական հետազոտության արդյունքները**

Առաջին փուլում, ըստ փորձարարական ուսումնասիրության ընտրանքի, առանձնացվել են հետևյալ խմբերը.

- հայազգի դեռահասներ (n=54)

- աղանդավոր ուղղվածությամբ (n=33)

- սիրիահայեր (n=29)

- եզդի դեռահասներ (n=77)

- մոլոկան դեռահասներ (68)

- ասորի դեռահասներ (68)

Այժմ ներկայացնենք համալիր մեթոդների կիրառման միջոցով ստացված արդյունքների միջինացված տվյալները:

Ստորև ներկայացված է անկախ բնութագրերի ընդհանրացման արդյունքում տվյալների ամփոփման ձևաթուղթը:

*Աղյուսակ 1. Հետազոտված դեռահասների մասին ընդհանուր տվյալների ճնաթուղթ*

| | Ընդհանուր տեղեկություններ հետազոտվողների մասին | Դեռահասների քանակական տվյալներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| • | Տարիքը | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| • | **Էթնիկական պատկանելիություն**<br>• հայ | | | | | | |
| | • եզդի | | | | | | |
| | • մոլոկան | | | | | | |
| | • ասորի | | | | | | |
| | **Կրոնական պատկանելիություն** | | | | | | |
| | • Արևելյան ուղղափառ ուղղություն | | | | | | |
| | • Աղանդավորներ | | | | | | |
| | • Կաթոլիկ ուղղություն | | | | | | |
| | • Եզիդական | | | | | | |
| | • Հնադավան | | | | | | |
| | • Նեսթորական | | | | | | |
| • | **Սեռը՝**<br>արական | | | | | | |
| | իգական | | | | | | |
| • | **Կենցաղային պայմանները՝**<br>Ցածր | | | | | | |
| | Միջին | | | | | | |
| | Բարձր | | | | | | |

«Ընդհանուր տվյալներ հետազոտված դեռահասների մասին» աղյուսակ 1-ում զետեղված տվյալները արտահայտում են հետազոտվողների սեռատարիքային, սոցիալական, էթնիկական և կրոնական պատկանելիության հիմնական ցուցանիշները: Հայ դեռահասների կազմում հաշվառվել են նաև սիրիահայ և աղանդավոր երեխաները՝ որպես հայ էթնոկիր: Կենցաղային պայմանների մասին տեղեկությունները, գլխավորապես, բացահայտվել են ուսուցիչների հետ զրույցների շնորհիվ: Բնավ, հարկ է նշել կենցաղային պայմանների պայմանական ենթաբաժանումը, որը, այդուհանդերձ, հնարավորություն տվեց ընդհանուր պատկերացում կազմելու հետազոտվողների կենսագրական տվյալների մասին: Շեշտենք նաև նրանց տարիքային սահմանների ընտրության հանգամանքը. այդ տարիքային խմբերն առավելապես են ընդգրկվում սոցիալականացման կրթական ինստիտուտների թիրախային կետում, քանի որ սկսում են ուսուցանել հասարակագիտական մի շարք առարկաներ, որոնք միտված են զարգացնելու անձի ինքնության բազմապիսի կողմերը:

**«Էթնիկական նույնականության տիպերը»** մեթոդի օգնությամբ ստացված արդյունքները վկայում են, որ դեռահասների մոտ ավելի հաճախ են հանդիպում էթնիկական նույնացման այնպիսի դրսևորումներ, ինչպիսին են էթնիկական անտարբերությունը և էթնոմեկուսացումը (61%): Դրական էթնիկական նույնականացման առավելագույն ցուցանիշները տեսնում ենք հայ (57%), սիրիահայ (69%) և մոլոկան (54%) դեռահասների մոտ, ընդորում, բոլոր թվարկած ընտրախմբերում նկատվում է այդ ցուցանիշի աճի միտում երկրորդ տարիքային խմբի մոտ: Հատկանշական է վերը թվարկած խմբերի պատասխանների ուղիղ համեմատականը «Էթնոմետ դիրքորոշումների ախտորոշումը բաց հարցերի միջոցով» հարցարանի միջոցով բացահայտված մասնագիտական հստակ կողմնորոշման ու կարիերայի նկատմամբ ձևավորված պատկերի հետ: Իհարկե, դա կարելի է բացատրել ուսումնական առարկաների հագեցվածության աստիճանով, ինչպես նաև շփման ավելի լայն դաշտով: Խոսուն փաստ է աղանդավոր դեռահասների մոտ դրական նույնականացման ծայրահեղ ցածր պատկերը (26%), ինչը ուղեկցվում է հետագա մասնագիտական աղոտ կողմնորոշվածությամբ ու անկայունությամբ: Նրանց

պատասխանների ցածր ցուցանիշները գերազանցեցին մնացած բոլոր խմբերին: Ավելին, ցուցանիշների նվազման միտումը պարզ երևում է ա-ղանդավորների երկու տարիքային խմբերը համեմատելիս, ինչը վկայում է էթնոկրոնական աղավաղված, ստվերային ինքնության առկայության դեպքում ազգային Ես-պատկերի վտանգված լինելու և անձի սոցիալա-կանացման գործընթացում էթնոկրոնական աղավաղված ինքնության բացասական ներուժի մասին: Այսպես, աղանդավոր հայերի երկու խմբում էլ գրեթե բացակայում էր հստակ պատկերացումը նախընտրելի մասնագիտություն ձեռքբերելու ու սոցիալական հարաբերությունների կայունացման մեխանիզմների վերաբերյալ: Համեմատաբար ցածր էին եզդի և ասորի դեռահասների էթնիկական դրական նույնականության ցուցանիշները, որոնք հուշում են ազգային այդ փոքրամասնությունների ասիմիլիացիոն միտվածության մասին: Եվ հակառակն, մոլոկանների պատասխանների հանրագումարը ցույց է տալիս նրանց բավական կա-յուն էթնիկական դրական նույնականացումը, որն, անշուշտ, դիտվում է որպես էթնոպաշտպան հզոր գործառույթ: Նշենք մոլոկան դեռահասնե-րի գերակշռող մասի հստակ պատասխանները դպրոցը ավարտելուն պես սոցիալական շփումների ու մասնագիտական ընտրության վերա-բերյալ: Փաստ է նաև հայ դեռահասների մոտ էթնիկական անտարբե-րության ցածր տոկոսի բացահայտումը (≈43%), որը տրամաբանորեն նվազում էր էթնիկական դրական նույնականության աճի հետ մեկտեղ: Հայերի ընտրախմբում միայն տարբերվում էին աղանդավոր դեռահաս-ների պատասխանները՝ վկայող էթնիկական անտարբերության տարած-վածությանը:

Ընդհանուր առմամբ, այս մեթոդիկայի կիրառման արդյունքում կա-րող ենք փաստել էթնոֆանատիզմի նվազագույն ցուցանիշների մասին (12%) գրեթե բոլոր ընտրախմբերում, իսկ հայ դեռահասների մոտ՝ նույ-նիսկ նրա չգիտակցման մասին: Իսկ էթնոնիհիլիզմն ու էթնոմեկուսացու-մը դրսևորվում են ի հակադրություն դրական նույնականության. արտա-հայտվում են այն ժամանակ, երբ թուլանում է անձի դրական նույնակա-նությունը սեփական էթնիկության վերաբերյալ: Այս արդյունքները պա-

րարտ հող են հետագա ուսումնասիրությունների և բովանդակալից են իրենց արժևորման առումով:




***Գծապատկեր 1. «Էթնիկական նույնականության փիպերը» մեթոդիկայի փվյալների միջինացված փոկոսային արփահայփվածություն***

Առաջին փուլի հաջորդ կարևորագույն մեթոդական մշակումը «**Էթնիկական աֆիլիացիան»** է, որի արդյունքները ներկայացվում են ստորև: Այս մեթոդիկան հնարավորություն տվեց բացահայտելու էթնիկական պատկանելիության (էթնոաֆիլիատիվ միտումների) բարձր պահանջմունքները:

Գծապատկեր 2–ում պարզ երևում են էթնոաֆիլիատիվ հետևյալ միտումները.

Հայ դեռահասների բոլոր խմբերում նկատվում է էթնիկական պատկանելիության բարձր պահանջմունքի միտում (59%): Բացառություն են կազմում միայն աղանդավոր հայերի ցուցանիշները (21%), որոնք ոչ միայն կտրուկ տարբերվում են նախորդներից, այլև նկատելիորեն նվազում են աղանդավոր հայերի երկրորդ խմբում (17%)՝ առաջինի համեմատ: Այս արդյունքը գալիս է ապացուցելու դիտման և զրույցի միջոցով (տես՝ վերևում) բացահայտված աղանդավորների մեկուսացված լինելու և էթնոօտարման ընդգծված վարքագծի հանգամանքով: Հայ դեռահասների ընտրախումբը ցույց տվեց նաև կրթական գործընթացի դրական ազդեցությունը էթնոաֆիլիատիվ բարձր պահանջմունքների ձևավորման վրա, ինչը տեսնում ենք հայ դեռահասների երկրորդ խմբի բավական բարձր ցուցանիշների (47%) շնորհիվ: Հակառակ պատկերն ենք նկատում եզդի և ասորի դեռահասների մոտ, որոնք դեռահասության վերջում ցուցաբերում են էթնիկական պատկանելիության ցածր պահանջմունքներ (26%), ինչը խոսում փաստ է նրանց ասիմիլիացիոն միտումների մասին: Նույնը չի կարելի ասել մոլոկանների կողմից գրանցված ցուցանիշների վերաբերյալ: Նրանց տարիքային երկու խմբերն էլ, չնչին տարբերությունով, պահպանում են էթնիկական բավական բարձր պահանջմունքների միտումները (34%):




***Գծապատկեր 2. Էթնոաֆիլիատիվ պահանջմունքի միտումների արտահայտվածության աստիճանը***

Դ. Կացի և Կ. Բրեյլիի «Հատկանիշների վերագրումը» մեթոդիկայի հիման վրա **«Ազգային և կրոնական ես-պատկերների ախտորոշումը»** մոդիֆիկացված հարցաշարերը կիրառվել են համակարգելու վերը ներկայացված մեթոդական մշակումների արդյունքները: Այս մեթոդիկայի արդյունքները ներկայացված են ստորև (աղյուսակ 2):

Աղյուսակի տվյալներից պարզ երևում է հետևյալ օրինաչափությունը. բացահայտվել են դեռահասների կարծրատիպային պատկերացումները սեփական ազգային և կրոնական ես-պատկերների մասին: Տվյալ մեթոդիկան հնարավորություն ընձեռեց համադրելու այդ պատկերացումները և նկարագրել անձի էթնոկրոնական ինքնության դրսևորումները, գործառնությունը էթնիկ ինքնության համալիր կառուցվածքում:

Վերլուծության արդյունքում կարող ենք նշել հետևյալ դիտարկումները. գրեթե բոլոր ընտրախմբերում դեռահասության տարիքի սկզբում

(10-12տ.) գրանցվում է էթնիկական ես-ի համեմատաբար ցածր գնահատական, որն առավելապես արտահայտվում է մեթոդիկայի առաջին բաղադրիչի՝ էթնոկիրի նկատմամբ համապատասխան վերաբերմունքով: Սոցիալականացման հետագա ընթացքում նկատվում է աճի միտում՝ հիմնականում հայերի, սիրիահայերի, եզդիների և ասորիների պատասխաններում: Հայ դեռահասների առաջին տարիքային խմբում տեսնում ենք բացասական եզրին հարող անորոշ պատասխանների խումբ, իսկ երկրորդ տարիքային խմբում՝ արտահայտված դրական գնահատականի աճի պատկեր (22%): Այն համեմատաբար ցածր է միայն կրոնական ես-ի գնահատման հատվածում: Դա խոսում փաստ է սեփական էթնիկության ֆորմալ և բովանդային բաղադրիչների նույնականության միտումների, սակայն էթնոկրոնական ինքնության ոչ լիարժեք ձևավորման և թերի զարգացման մասին: Համեմատաբար կայուն ցուցանիշներ ենք հանդիպում մոլոկանների մոտ (35%), որոնք, համեմատելիս «էթնիկական նույնականության տիպերի» մեթոդիկայի արդյունքների հետ, կարող ենք եզրակացնել մոլոկանների էթնիկական և կրոնական կայուն դիրքորոշումների մասին: Եզդիների և ասորիների ասիմիլյացիոն միտվածության ներքո նկատում ենք համեմատաբար դրական վերաբերմունք էթնոկիրի ակտիվության դատողություններում (հատկապես երկրորդ տարիքային խմբում), բայց, միաժամանակ, զգուշություն՝ գնահատականներում: Սիրիահայերի մոտ նկատում ենք միգրացիոն գործընթացների բացասական ազդեցությունը դեռահասության սկզբում, սակայն հաջորդ տարիքային խմբում ակնհայտորեն նվազում են էթնոտարման դրսևորումները (24%), որոնք արտահայտվում են ինչպես մոնոէթնիկ, այնպես էլ տարէթնիկ միջավայրում շփումների բազմազանության ու կայունության մեջ, ինչպես նաև՝ ընդհանուր հասարակական նորմերի ու արժեքների ավելի խորը հասկացման, դպրոցը ավարտելուն պես սեփական կյանքի ուղին ավելի հստակ պատկերացման ու կարիերայի նախնական պլանավորման մեջ:

| Հատկանիշներ | **Հայ դեռ. I խումբ** | **Հայ դեռ. II խումբ** | **Սիրիահայ դեռ. I խումբ** | **Սիրիահայ դեռ. II խումբ** | **Աղանդ. դեռ. I խումբ** | **Աղանդ. դեռ. II խումբ** | **Եզդի դեռ. I խումբ** | **Եզդի դեռ. II խումբ** | **Մոլոկան դեռ. I խումբ** | **Մոլոկան դեռ. II խումբ** | **Ասորի դեռ. I խումբ** | **Ասորի դեռ. II խումբ** | Հատկանիշներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Անդասփիարակ* | -1 | 1 | -3 | -3 | -2 | -3 | -2 | -2 | 2 | 3 | -2 | 2 | *Դասփիարակված* |
| *Անհյուրընկալ* | -2 | 3 | -3 | -3 | 1 | 2 | -1 | -2 | 2 | 3 | -1 | -2 | *Հյուրընկալ* |
| *Հայրենասեր* | 3 | 2 | -3 | 3 | -3 | 2 | 2 | 2 | 3 | 2 | 2 | 2 | *Կոսմոպոլիտ* |
| *Համառ* | 0 | 3 | 3 | 2 | -1 | -2 | -1 | 1 | 3 | 3 | -1 | 2 | *Զիջող* |
| *Վախկոտ* | -1 | 2 | -3 | -2 | 3 | 3 | -2 | -1 | 2 | 2 | -2 | -1 | *Լավաբես* |
| *Անգործունյա* | -1 | 2 | -2 | -3 | 2 | 3 | -2 | -2 | 3 | 3 | -1 | -2 | *Գործունյա* |
| *Ցածր ինքնագնահ.* | -2 | 2 | -3 | -1 | 1 | 2 | 1 | -1 | 1 | -1 | 1 | 0 | *Բարձր ինքնագնահ.* |
| *Չարություն* | -3 | 1 | -3 | -3 | 2 | 3 | -2 | -1 | 2 | 2 | -2 | -1 | *Բարի* |
| *Չշփվող* | -2 | -2 | -2 | -3 | -2 | -2 | 2 | 2 | -3 | -2 | 2 | 1 | *Շփվող* |
| *Նյութ. արժեք.-ի առաջնություն* | 0 | 3 | -3 | -2 | 3 | 3 | 0 | 1 | 3 | 3 | 0 | 1 | *Հոգևոր արժեք.-ի առաջնություն* |
| *Ալարկոտ* | -3 | 3 | -3 | -3 | 2 | 3 | 1 | 1 | 3 | 3 | 2 | 1 | *Աշխատասեր* |
| *Հարգանք այլ ժող.-ների նկատմամբ* | 3 | 2 | 3 | 3 | 2 | 1 | 1 | 2 | -2 | -2 | 1 | 2 | *Գերիշխող* |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Կախվածություն շրջապատից* | 1 | -1 | 3 | 3 | 1 | 0 | -2 | -1 | -2 | -1 | -1 | 0 | *Անկախություն շրջապատից* |
| *Ագրեսիվ* | -1 | -1 | -3 | -2 | 2 | 2 | -1 | -1 | 0 | 1 | -1 | -1 | *Ընկերասեր* |
| *Անտարբեր* | -3 | -1 | 1 | -3 | 0 | 1 | -2 | -2 | 0 | -1 | 0 | 0 | *Գթասիրտ* |
| *Միամիտ* | 3 | 1 | 1 | 0 | 0 | -1 | 0 | 1 | -2 | -2 | 0 | 1 | *Խորամանկ* |
| *Անհատականություն* | 3 | 2 | -2 | -3 | 2 | 3 | 2 | 2 | 2 | 3 | 1 | 1 | *Կոլեկտիվիզմ* |
| *Հաջողության հասնելու ձգտումի բացակայություն* | -2 | 2 | -2 | -3 | -3 | -3 | 0 | 0 | 2 | 1 | 1 | 1 | *Հաջողության հասնելու ձգտում* |
| *Անպարտաճանաչ* | -3 | 0 | -3 | -3 | -2 | -3 | 1 | -1 | 3 | 3 | 2 | 2 | *Պարտաճանաչ* |
| *Կոպտություն* | 0 | -1 | -3 | 0 | -2 | -3 | 2 | -2 | 2 | 3 | 1 | 0 | *Հարգալից* |

***Աղյուսակ 2. «Ազգային և կրոնական ես-պատկերների հոգեախտորոշումը» մոդիֆիկացված մեթոդիկայի միջինացված թվային տվյալները***




***Գծապատկեր 3. «Ազգային և կրոնական ես-պատկերների հոգեախտորոշումը» մոդիֆիկացված մեթոդիկայի միջինացված տվյալների գրաֆիկական պատկերը***

Առաջին փուլում մեր կողմից անց է կացվել նաև պրոյեկտիվ մեթոդների մի ամբողջ համախումբ: Ֆ. Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա մշակվել և դեռահասների ընտրախմբերի հետ անց է կացվել «**Էթնիկական ես-պատկեր**», **ապա** «**Կրոնական ես-պատկեր**» մեթոդիկան:

Արդյունքները ներկայացված են ստորև:

«**Էթնիկական ես-պատկեր**» մեթոդիկայի միջինացված տվյալների համաձայն ($n_{հայ1}$=30, $n_{հայ2}$=24) դեռահասների տարիքային առաջին խմբի մոտ ավելի ցածր է (43%) էթնիկական ինքնագնահատականը, քան տարիքային երկրորդ խմբի մոտ (57%), ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ ցածր տարիքում էթնիկական ինքնագնահատակա-

նը հաճախ ստվերվում է անձնային որակներով, դեռ հղկված չէ սեփական անձի՝ որպես էթնոկիր անհատի, մասին պատկերացումը: Այս խմբի դեռահասները ավելի հաճախ ձգտում են նմանեցնել ինքնանկարը իրենց իրական կամ ցանկալի արտաքինին: Երկրորդ խմբի հետազոտվողները ցայտուն կերպով արտահայտեցին իրենց համար կարևորություն ներկայացնող էթնիկական ինքնագնահատականի դրսևորումները:

Առաջին և երկրորդ խմբերի դեռահասների կողմից երկուստեք բավականին շատ էին ընտրված էթնոսիմվոլները: Սա տարիքային առանձնահատկություն է, որը նրանց թույլ է տալիս ինքնադրսևորվել և ինքնահաստատվել որպես հայ էթնոկիր:

Էթնիկական հաղորդակցումը ավելի զարգացած և հագեցած է դեռահասների երկրորդ տարիքային խմբի մոտ, ինչը չի կարելի ասել էթնիկական լավատեսության մասին: Դեռահասության սկզբում դեռահասներն ավելի են աչքի ընկնում լավատեսությամբ, քան մի քանի տարի անց: Այս փաստը բացատրվում է էթնիկական վախերի առկայությամբ, որը վրա է հասնում ինքնագիտակցության զարգացմանը զուգահեռ: Դեռահասերի երկրորդ խումբը սոցիալական հմտությունների զարգացմանը, ճգնաժամային տարիքի նորագոյացությունների ձեռք բերմանը զուգահեռ ավելի ճկուն են: Նրանք պատրաստակամ են լինում ավելի շատ շփվել, փոխճանաչել քան դեռահասության սկզբում: Մեր ընտրախմբում որպես ենթախմբեր են հանդես եկել սիրիահայերն ու աղանդավորները:

Առանձին խմբերում էթնիկական առանձնահատկություններն եսպատկերում հետևյալն էին. սիրիահայ դեռահասների երկու տարիքային խմբերում էլ ($n_{սիր.1}$=14, $n_{սիր.2}$=15) բարձր էր էթնիկական ինքնագնահատականը, էթնիկական ճկունությունը, նրանք բավականին լավ աչքի են ընկնում էթնիկական հաղորդակցմամբ, էթնիկական լավատեսությամբ (81%), սակայն բավականին  բարձր է էթնիկական վախերն ու տագնապները, ինչը մեկնաբանվում է նրանցում առկա միգրացիոն ներկա շարժունությամբ:

Աղանդավոր հայ դեռահասների երկու խմբերում ($n_{աղանդ.1}$=19, $n_{աղանդ.2}$=14) առկա էին հետևյալ տարբերությունները. դեռահասների առաջին տարիքային խմբի մոտ շատ ավելի ցածր էին էթնիկական ես-պատկերի բոլոր բաղադրիչները: Սակայն համեմատելով վերոնշյալ երկու խմբերի հետ, երկրորդ տարիքային խումբը կրկին ցածր շեմում է իր թվային տվյալներով (23%): Այս հանգամանքը մեկնաբանվում է աղանդի բացասական ներգործությամբ դեռահասի էթնիկական ես-ի ձևավորման վրա, ինչպես նաև որոշ բաղադրիիչների կայունացման համար: Միակ բարձր տվյալը գրանցվել է սիմվոլների դաշտում (32%), և հետազոտությունը ցույց տվեց, որն աղանդի մեկ այլ վտանգավոր գիծ է՝ օգտագործելով էթնիկական սիմվոլները արագ տարածվել և տեղայնացնել սեփական աղանդը:

Եզդի դեռահասների «Էթնիկական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված տվյալների համաձայն ($n_{եզդի1}$=40, $n_{եզդի2}$=37)տարիքային առաջին խմբի մոտ ավելի բարձր է էթնիկական ինքնագնահատականը, դրական վերաբերմունքը սեփական էթնիկական պատկանելիությանը, ավելի աղքատիկ էր սիմվոլների ընտրությունը, սակայն գունային հագեցվածությունը միանշանակ հուշում էր, որ տվյալ նկարը նկարել է եզդի երեխա: Նրանք հայրենասիրական միտվածությամբ գերազանցել են բոլոր ընտրախմբերին, ավելի ցածր էր էթնիկական հաղորդակցումը (49%), ինչը մեր կողմից մեկնաբանվում է որպես եզդի ավանդական ընտանիքներում երեխաների դաստիարակության մեջ ավանդապաշտության, փակվածության գերակշռումը: Սակայն եզդի դեռահասը ավելի լավատես է էթնիկական առումով, բայց ստատիկ: Եզդի դեռահասների երկրորդ տարիքյաին խմբում ցածր միավորները միանշանակ մեկնաբանվում է սոցիալականացման ընթացքում ասիմիլիացիոն միտումներով: Ասիմիլիացիոն միտումներ են նկատվում նաև ասորի դեռահասների «էթնիկական ես-պատկեր»-ներում ($n_{ասորի1}$=33, $n_{ասորի2}$=35): Նրանք տարէթնիկ միջավայրում իրենց դրսևորում են բավական ճկուն, լավատեսորեն, շատ քիչ են արտահայտված էթնիկական վախերը:

Մոլոկան դեռահասների ($n_{\text{մոլոկան1}}$=38, $n_{\text{մոլոկան2}}$=30) տարիքային ցենզը գրեթե ոչ մի կարևոր նշանակություն չունի: Այսինքն, աննշան տարբերություն է նկատվում միայն էթնիկական հաղորդակցման ոլորտում: Նրանք ամուր կապված են իրենց էթնիկական սկզբին, սիմվոլներին: Էթնիկական վախերն ու տագնապները գիտակցված չեն դեռահասի կողմից, որը խոսում է այն մասին, որ այս տարիքում նրանց մոտ, որպես էթնոկիր, առաջնային պաշտպանական մեխանիզմներից է փոխհատուցումը (կոմպենսացիան), գերակշռում են եզդի ու ասորի խմբերի նկատմամբ համեմատաբար հստակ պատկերացումները կարիերայի պլանավորման վերաբերյալ: Այդուհանդերձ, պահպանվում են հետագա սոցիալական շփումների, մասնագիտական ընտրության և կարիերայի նկատմամբ միջին գնահատականները: Այս տվյալներով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ նրանք ճկուն չեն, հոռետես են, իսկ հայրենասիրությունը ուղղակիորեն կիրառելի չէ, որպես ազգային առանձնահատկություն:

***Աղյուսակ 3. Ֆ. Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա անց կացրած «Դեռահասի էթնիկական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված փվյալները հետազոտված դեռահասների երկու տարիքային խմբերում ($n_{հայ1}$=63, $n_{հայ2}$=53)***

| Նկարի գնահատման չափանիշները | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված հայ դեռահասների խմբեր | | Հետազոտված սիրիահայ դեռահասների խմբեր | | Հետազոտված աղանդավոր դեռահասների խմբեր | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.)% | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.)% | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.) | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.) | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.) | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.) |
| Ընդհանուր նկարի չափը | Էթնիկ. բարձր ինքնագնահական | 43% | 57% | 71% | 74% | 25% | 37% |
| | Էթնիկական ցածր ինքնագնահատ. | 57% | 43% | 29% | 26% | 75% | 63% |
| Պատկերների ընդհանուր չափերը, գունային համադրությունը | Իրազեկվածություն | 57% | 62% | 63% | 69% | 11% | 12% |
| | Վերաբերմունք | 68% | 48% | 85% | 75% | 22% | 24% |
| | Սիմվոլներ | 71% | 75% | 79% | 85% | 32% | 31% |
| Էթնիկական առանձնահատկություններ | Հայրենասիրու-թյուն | 82% | 86% | 91% | 89% | 24% | 26% |
| | էթնիկական հաղորդակցում | 63% | 85% | 80% | 79% | 21% | 20% |
| | Էթնիկական լավատեսություն | 85% | 79% | 72% | 74% | 17% | 18% |
| | Էթնիկական հոռետեսություն | 15% | 21% | 28% | 26% | 83% | 82% |
| | Էթնիկական վախեր (տագնապ) | 13% | 35% | 76% | 79% | 11% | 13% |
| Էթնիկական շարժունություն | Էթնիկական ճկունություն | 71% | 86% | 87% | 89% | 12% | 14% |
| | Էթնիկական ստատիկություն | 63% | 74% | 65% | 69% | 25% | 27% |

***Աղյուսակ 4. Ֆ. Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա անցկացրած «Դեռահասի էթնիկական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված փվյալները հետազոտված դեռահասների երկու տարիքային խմբերում ($n_{եզդի1}$=40, $n_{եզդի2}$=37)***

| Նկարի գնահատման չափանիշները | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված եզդի դեռահասների խմբեր | |
|---|---|---|---|
| | | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.) % | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.)% |
| **Ընդհանուր նկարի չափը** | **Էթնիկական բարձր ինքնագնահատական** | 35% | 47% |
| | **Էթնիկական ցածր ինքնագնահատական** | 65% | 53% |
| **Պատկերների ընդհանուր չափերը, գունային համադրությունը** | **Իրազեկվածություն** | 52% | 63% |
| | **Վերաբերմունք** | 13% | 14% |
| | **Սիմվոլներ** | 32% | 41% |
| **Էթնիկական առանձնահատկություններ** | **Հայրենասիրություն** | 68% | 76% |
| | **Էթնիկական հաղորդակցում** | 49% | 42% |
| | **Էթնիկական լավատեսություն** | 68% | 78% |
| | **Էթնիկական հոռետեսություն** | 32% | 22% |
| | **Էթնիկական վախեր (տագնապ)** | 11% | 13% |
| **Էթնիկական շարժունություն** | **Էթնիկական ճկունություն** | 48% | 33% |
| | **Էթնիկական ստատիկություն** | 52% | 67% |

***Աղյուսակ 5. Ֆ. Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա անցկացրած «Դեռահասի էթնիկական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված տվյալները հետազոտված դեռահասների երկու տարիքային խմբերում ($n_{մոլոկան1}$=38, $n_{մոլոկան2}$=30)***

| Նկարի գնահատման չափանիշները | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված մոլոկան դեռահասների խմբեր | |
|---|---|---|---|
| | | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.) | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.) |
| Ընդհանուր նկարի չափը | Էթնիկական բարձր ինքնագնահատական | 67% | 59% |
| | Էթնիկական ցածր ինքնագնահատական | 33% | 41% |
| Պատկերների ընդհանուր չափերը, գունային համադրությունը | Իրազեկվածություն | 42% | 43% |
| | Վերաբերմունք | 23% | 34% |
| | Սիմվոլներ | 52% | 48% |
| Էթնիկական առանձնահատկություններ | Հայրենասիրություն | 12% | 16% |
| | Էթնիկական հաղորդակցում | 46% | 82% |
| | Էթնիկական լավատեսություն | 32% | 28% |
| | Էթնիկական հոռետեսություն | 68% | 72% |
| | Էթնիկական վախեր (տագնապ) | 25% | 27% |
| Էթնիկական շարժունություն | Էթնիկական ճկունություն | 32% | 38% |
| | Էթնիկական ստատիկություն | 64% | 71% |

*Աղյուսակ 6. Ֆ. Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա անցկացրած «Դեռահասի էթնիկական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված փվյալները հետազոտված դեռահասների երկու փարիքային խմբերում ($n_{տարիք1}$=33, $n_{տարիք2}$=35)*

| Նկարի գնահատման չափանիշները | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված ասորի դեռահասների խմբեր | |
|---|---|---|---|
| | | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.)% | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.)% |
| Ընդհանուր նկարի չափը | Էթնիկական բարձր ինքնագնահատական | 33% | 37% |
| | Էթնիկական ցածր ինքնագնահատական | 67% | 63% |
| Պատկերների ընդհանուր չափերը, գունային համադրությունը | Իրազեկվածություն | 35% | 39% |
| | Վերաբերմունք | 26% | 18% |
| | Սիմվոլներ | 32% | 31% |
| Էթնիկական առանձնահատկություններ | Հայրենասիրություն | 24% | 26% |
| | Էթնիկական հաղորդակցում | 25% | 27% |
| | Էթնիկական լավատեսություն | 72% | 66% |
| | Էթնիկական հոռետեսություն | 28% | 34% |
| | Էթնիկական վախեր (տագնապ) | 11% | 13% |
| Էթնիկական շարժունություն | Էթնիկական ճկունություն | 62% | 55% |
| | Էթնիկական ստատիկություն | 38% | 45% |

Ինչպես երևում է «**Կրոնական ես-պատկեր»** մեթոդիկայի ($n_{\text{հայ1}}=30$, $n_{\text{հայ2}}=24$) ամփոփ տվյալներից, օրինաչափ է հայ դեռահասների առաջին խմբում կրոնական միջին աստիճանի ինքնագնահատականը, ինչը առավելապես բարձրանում է դեռահասների երկրորդ տարիքային խմբում: Այս հանգամանքը մեկնաբանվում է էթնիկականության կարևորագույն բաղադրիչի առանձնահատկությամբ: Այն է՝ էթնիկականության բաղադրիչներից է կրոնը, իսկ էթնիկական ինքնագնահատականի ձևավորմանը սոցիալականացման կրթական ինստիտուտի ազդեցությամբ (դպրոց) դեռահասության սկզբում ավելի քիչ է նկատվում կրոնական ինքնագնահատականը, իսկ արդեն դեռահասության վերջում ուղղորդված, պերմանենտ ազդեցության արդյունքում դեռահասն ունենում է ավելի բարձր կրոնական ինքնագնահատական, արդյունքում դրական վերաբերմունք սեփական կրոնական պատկանելիության նկատմամբ, սիմվոլների հիանալի տիրապետում, հաճախ համամետում մյուս կրոնական սիմվոլների հետ, դրանց ընդգծում, միաժամանակ, բարձր են ցուցանիշները կրոնական իրազեկվածության մեջ, նկատելի են ակտիվ դրսևորումներ, սակայն՝ պասիվ խմբային ընդգրկվածություն: Դեռահասների մեջբերումներից են. «Ես իմ մեջ եմ հավատում», «Ինքս ինձ համար եմ աղոթում« և այլն: Ի համեմատություն «Էթնիկական ես-պատկեր» մեթոդիկայի տվյալների, կարող ենք փաստել, որ նույն դեռահասների ինքնանկարների տարբերությունն այն էր, որ էթնիկական իրազեկվածությունը ավելի բարձր էր, քան կրոնական տեղեկացվածությունը: Միաժամանակ «Էթնիկական աֆիլիացիայի» տվյալները հայ դեռահասների երկրորդ խմբում նկատելիորեն բարձր էին, այսինքն էթնիկական պահանջմունքի ինդիկատորը բարձր էթնոաֆիլիատիվ միտումն է: Մյուս կողմից վերևում պարզ երևում էր էթնոէգոիզմի բարձր տվյալները՝ զուգակցված դրական էթնիկական նույնականությամբ: Այստեղ կրոնական լավատեսությունը ընկալվում է որպես էթնիկականի համալրում:

Սիրիահայերը և աղանդավորները գտնվում էին ծայրահեղ բևեռներում, չնայած որ տարածքային պատկանելիությամբ պետք է լիներ հակառակը: Փաստի մեկնաբանությունը հետևյալում է. նույն էթնոկիրների տարբեր սոցիալ-տնտեսական, մշակութային և կրոնական ներքին

պատկերացումները բախվում են այն կետում, որ սիրիահայ դեռահասների առաջին տարիքային խմբում շատ բարձր էր կրոնական տեղեկացվածությունը, իսկ երկրորդ տարիքային խմբի մոտ բարձր էին նաև կրոնական ինքնագնահատականը, դրական աֆիլիատիվ կրոնական միտումները, կրոնական դրական զգացմունքային դաշտը: Այս իմաստով խմբային ընդգրկվածությունը սիրիահայ դեռահասների երկու խմբերի մոտ հասնում է առավելագույնի (85%):

Աղանդավոր դեռահասների երկու խմբերի մոտ, հասկանալի պատճառներով սիմվոլիկան նույնն էր, սակայն կրոնական ես-պատկերները աղավաղված, ինչը չէր ժխտում կրոնական տեղեկացվածության բարձր լինելու փաստը, խմբային ընդգրկվածությունը: Ցավալի փաստ է տվյալների համամետությունը այն առումով, որ նրանց էթնիկական հոռետեսությունը և սիմվոլների տիրապետումը ունի մեկ այլ նպատակ, ոչ թե ձևավորել էթնոկրոնական ինքնության արժեհամակարգ, այլ դեռևս դեռահասության սկզբից սերմանել էթնոմեկուսացումը:

Եզդի դեռահասների մոտ ($n_{եզդի1}=40$, $n_{եզդի2}=37$) կրոնական տեղեկացվածությունը ցածր էր, սիմվոլներ՝ աղքատիկ, ինչը ուղիղ համեմատական է ցածր կրոնական ինքնագնահատականի հետ դեռահասների առաջին տարիքային խմբի մոտ: Մինչդեռ եզդի դեռահասների երկրորդ տարիքային խմբի հետազոտվողները շփոթում էին և չէին կողմնորոշվում էթնիկական և կրոնական սիմվոլների դասակարգման մեջ: Նույն փաստը նկատվել է նաև ասորի դեռահասների երկու տարիքային խմբերում ($n_{ասորի1}=33$, $n_{ասորի2}=35$):

Մոլոկան դեռահասների ($n_{մոլոկան1}=38$,$n_{մոլոկան2}=30$) երկու խմբերում տվյալները միանման էին, ինչպես «էթնիկական ես-պատկեր»-ի դեպքում: Մյուս ընտրախմբերի տվյալների համեմատությամն նրանց ինքնանկարների բովանդակությունը ավելի վառ գույներով արտահայտում էր նրանց դրական հուզական վերաբերմունքը սեփական կրոնական պատկանելիության նկատմամբ: Խմբային ընդգրկվածության բարձր աստիճանը, այսինքն տարբեր մարդկանց առկայությունը իրենց կրոնական ինքնանկարներում խոսում է այն մասին, որ նրանց էթնիկական միասնականությունը պայմանավորված է կրոնական լավատեսությամբ:

***Աղյուսակ 7. Ֆ.Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա անց կացրած «Դեռահասի կրոնական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված փվյալները հեփազոփված դեռահասների երկու խմբերում ($n_{հայ1}$=63, $n_{հայ2}$=53)***

| Նկարի գնահատման չափանիշները | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված հայ դեռահասների խմբեր, ($n_{հայ1}$=30, $n_{հայ2}$=24), % | | Հետազոտված սիրիահայ դեռահասների խմբեր, ($n_{սիրիահայ.1}$=14, $n_{սիրիահայ2}$=15), % | | Հետազոտված աղանդավորական դեռահասների խմբեր ($n_{աղանդավոր1}$=19, $n_{աղանդավոր2}$=14),% | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.) | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.) | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.) | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.) | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.) | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.) |
| Ընդհանուր նկարի չափը | Օգտագործված է թղթի ամբողջ մակերեսը | 47% | 58% | 49% | 74% | 35% | 69% |
| | Օգտագործված է թղթի մի մասը | 53% | 42% | 51% | 26% | 65% | 31% |
| Պատկերներիընդհանուրչափերը, գունայինհամադրությունը | Պատկերները, մեծ են, վառգույներով, երփներանգ | 59% | 62% | 65% | 74% | 22% | 24% |
| | Պատկերները փոքր են, գույները մուգ | 41% | 38% | 35% | 26% | 78% | 76% |
| | Սիմվոլներ | 71% | 75% | 79% | 85% | 32% | 48% |
| Կրոնական առանձնահատ-կություններ | Կրոնական իրազեկություն | 48% | 67% | 61% | 85% | 24% | 26% |
| | Պատկանելիության զգացում | 73% | 84% | 81% | 89% | 22% | 20% |
| | Կրոնական հոռետեսություն | 45% | 39% | 47% | 64% | 43% | 48% |
| | Կրոնական լավատեսություն | 55% | 61% | 53% | 36% | 57% | 52% |
| | Կրոնական անտարբերություն | 60% | 68% | 36% | 31% | 35% | 23% |
| Կրոնական վարքագիծ | Ակտիվ դրևորումներ | 61% | 54% | 87% | 89% | 52% | 74% |
| | Պասիվ չընդգրկվածություն | 63% | 74% | 45% | 49% | 25% | 27% |
| | Խմբային ընդգրկվածության աստիճանը | 53% | 46% | 81% | 85% | 54% | 75% |

*Աղյուսակ 8. Ֆ. Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա անցկացրած «Դեռահասի կրոնական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված տվյալները հետազոտված դեռահասների երկու խմբերում ($n_{եզդի1}$=40, $n_{եզդի2}$=37)*

| Նկարի գնահատման չափանիշները | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված եզդի դեռահասների խմբեր ($n_{□□□□1}$=40, $n_{□□□□2}$=37) | |
|---|---|---|---|
| | | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.),% | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.),% |
| Ընդհանուր նկարի չափը | Օգտագործված է թղթի ամբողջ մակերեսը | 25% | 34% |
| | Օգտագործված է թղթի մի մասը | 75% | 66% |
| Պատկերների ընդհանուր չափերը, գունային համադրությունը | Պատկերները, մեծեն, վառգույներով, երփներանգ | 65% | 69% |
| | Պատկերները փոքր են, գույները մուգ | 35% | 31% |
| | Սիմվոլներ | 34% | 38% |
| Կրոնական առանձնահատկություններ | Կրոնական իրազեկություն | 21% | 18% |
| | Պատկանելիության զգացում | 60% | 69% |
| | Կրոնական հոռետեսություն | 56% | 64% |
| | Կրոնական լավատեսություն | 44% | 36% |
| | Կրոնական անտարբերրություն | 66% | 58% |
| Կրոնական վարքագիծ | Ակտիվ դրևորումներ | 57% | 69% |
| | Պասսիվ չընդգրկվածություն | 43% | 31% |
| | Խմբային ընդգրկվածության աստիճանը | 52% | 59% |

| Նկարի գնահատման չափանիշները | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված մոլոկան դեռահասների խմբեր ($n_{\text{մոլոկան1}}=38$, $n_{\text{մոլոկան2}}=30$) | |
|---|---|---|---|
| | | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.), % | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.), % |
| Ընդհանուր նկարի չափը | Օգտագործված է թղթի ամբողջ մակերեսը | 35% | 37% |
| | Օգտագործված է թղթի մի մասը | 65% | 63% |
| Պատկերների ընդհանուր չափերը, գունային համադրությունը | Պատկերները, մեծ են, վառ գույներով, երփներանգ | 41% | 55% |
| | Պատկերները փոքր են, գույները մուգ | 59% | 45% |
| | Սիմվոլներ | 32% | 45% |
| Կրոնական առանձնահատկություններ | Կրոնական իրազեկություն | 24% | 29% |
| | Պատկանելիության զգացում | 42% | 50% |
| | Կրոնական հոռետեսություն | 48% | 35% |
| | Կրոնական լավատեսություն | 52% | 65% |
| | Կրոնական անտարբերություն | 21% | 23% |
| Կրոնական վարքագիծ | Ակտիվ դրևորումներ | 40% | 47% |
| | Պասսիվ չընդգրկվածություն | 60% | 53% |
| | Խմբային ընդգրկվածության աստիճանը | 64% | 72% |

*Աղյուսակ 9. Ֆ. Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա անցկացրած «Դեռահասի կրոնական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված փվյալները հետազոտված դեռահասների երկու խմբերում*

***(n*** $_{մոլոկան1}$***=38,*** n$_{մոլոկան2}$=30)

| Նկարի գնահատման չափանիշները | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված ասորի դեռահասների խմբեր | |
|---|---|---|---|
| | | Դեռահասների առաջին խումբ (10-12տ.), % | Դեռահասների երկրորդ խումբ (13-15տ.), % |
| **Ընդհանուր նկարի չափը** | **Օգտագործված է թղթի ամբողջ մակերեսը** | 23% | 39% |
| | **Օգտագործված է թղթի մի մասը** | 77% | 61% |
| **Պատկերների ընդհանուր չափերը, գունային համադրությունը** | **Պատկերները, մեծեն, վառգույներով, երփներանգ** | 19% | 22% |
| | **Պատկերները փոքր են, գույները մուգ** | 81% | 78% |
| | **Սիմվոլներ** | 26% | 28% |
| **Կրոնական առանձնահատկություններ** | **Կրոնական իրազեկություն** | 24% | 26% |
| | **Պատկանելիության զգացում** | 26% | 34% |
| | **Կրոնական հոռետեսություն** | 47% | 49% |
| | **Կրոնական լավատեսություն** | 53% | 51% |
| | **Կրոնական անտարբերություն** | 46% | 48% |
| **Կրոնական վարքագիծ** | **Ակտիվ դրևորումներ** | 42% | 54% |
| | **Պասսիվ չընդգրկվածություն** | 25% | 27% |
| | **Խմբային ընդգրկվածության աստիճանը** | 64% | 67% |



*Գծապատկեր 4. «Դեռահասների էթնիկական և կրոնական ես-պատկերների» պրոյեկտիվ մեթոդիկայի միջինացված թվային փվյալների գրաֆիկական պատկեր*

***Աղյուսակ 10. Ֆ. Գուդինաֆի «Մարդու ինքնանկար» մեթոդիկայի հիման վրա անց կացրած «Դեռահասի կրոնական ես-պատկեր» մեթոդիկայի միջինացված փվյալները հետազոտված դեռահասների երկու խմբերում ($n_{\text{ասորի1}}$=33, $n_{\text{ասորի2}}$=35)***

| Նկարի գնահատման չափանիշներ | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված հայ դեռահասների խմբեր | | Հետազոտված եզդի դեռահասների խմբեր | | Հետազոտված մոլոկան դեռահասների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դեռահասների 1-ին խումբ | Դեռահասների 2-րդ խումբ | Դեռահասների 1-ին խումբ | Դեռահասների 2-րդ խումբ | Դեռահասների 1-ին խումբ | Դեռահասների 2-րդ խումբ |
| 1.Նկարի փոփոխման չափանիշները | Փոխում է ամբողջությամբ | 22% | 24% | 24% | 25% | 37% | 28% |
| | Փոխում է մասնակիորեն | 78% | 76% | 76% | 75% | 63% | 72% |
| 2.Պատկեր գունային փոփոխություն | Պահպանում է նախնական տարբերակը | 25% | 54% | 32% | 41% | 52% | 43% |
| | Փոփոխում է դեպի վառ գույներ | 29% | 15% | 51% | 38% | 22% | 27% |
| | Փոփոխում է դեպի մուգ գույներ | 46% | 31% | 17% | 21% | 26% | 30% |
| 3, Սիմվոլներ | Ավելացնում է կրոնական սիմվոլներ | 62% | 68% | 14% | 24% | 26% | 23% |
| | Պակասեցնում է կրոնական սիմվոլներ | 11% | 12% | 12% | 7% | 37% | 31% |
| | Պահպանում է կրոնական սիմվոլներ | 27% | 20% | 74% | 69% | 61% | 46% |
| | Ավելացնում է էթնիկական սիմվոլնր | 17% | 15% | 14% | 15% | 38% | 46% |
| | Պակասեցնում է էթնիկական սիմվոլներ | 43% | 51% | 11% | 11% | 13% | 11% |
| | Պահպանում է էթնիկական սիմվոլներ | 40% | 48% | 75% | 88% | 49% | 43% |

**<u>Հետազոտության երկրորդ փուլում</u>** (n=329) կիրառված մեթոդական ապարատի արդյունքներն են՝

«Էթնիկական ես-պատկեր» և «Կրոնական ես-պատկեր» պրոյեկտիվ մեթոդիկայի տվյալների հիման վրա անհրաժեշտություն եղավ կիրառել նաև հեղինակային նախաձեռնությամբ ստեղծված «Էթնիկական և կրոնական պատկերների հետ նույնացման հոգեախտորոշիչ էքսպրես» մեթոդիկան:

Բոլոր բարձ րարդյունքներ ցուցաբերած դեռահասները (65 %)՝ հետազոտված դեռահասների երկրորդ խմբից էին: Տվյալ փաստը մեկնաբանվում է այն պատճառով, որ սոցիալականացման արդյունքում դեռահասը ես-պատկերների ամրակայմանը զուգահեռ ամրապնդում է նաև իր էթնիկական ես-պատկերը: Այս փաստը մեկնաբանվում է նաև դպրոցում «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների շրջանակներում գիտելիքների ձեռք բերմամբ և պարբերաբար ուսուցիչների կողմից կազմակերպված միջոցառումների շնորհիվ: Բացի այդ, փաստը մեկնաբանվում է նաև դեռահասի կողմից էթնիկական ավանդույթների մեջ ընդգրկմամբ, եկեղեցական տոնակատարություններին մասնակցմամբ: Քանի որ մինչ այդ դեռահասների ինքնուրույնության սահմանափակման փաստը թույլ չի տալիս ինքնուրույն ընտրել, կազմակերպել կամ մասնակցել շատ էթնիկական, կրոնական միջոցառումների: Իսկ այս տարիքում (13-15տ.) նրանք ունենում են այդ հնարավորությունը:

Այստեղից կարևորվեց էթնիկական ես-ի կողքին տեսնել դեռահասի կրոնական ես-ի կապը և հարաբերակցությունը:

Այս նպատակով տեղայնացվեց «Էթնիկական և կրոնական պատկերների հետ նույնացման հոգեախտորոշիչ էքսպրես մեթոդիկան»:

Արդյունքները զետեղված են աղյուսակ 11-ում:

*Աղյուսակ 11. «Էթնիկական և կրոնական ես-պատկերների հետ նույնացման հոգեախտորոշիչ էքսպրես մեթոդիկա»-յի միջինացված փոկոսային արտահայտվածությունը*

| Նկարի գնահատման չափանիշներ | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված սիրիահայ դեռահասների խմբեր | |
|---|---|---|---|
| | | Դեռահասների 1-ին խումբ, % | Դեռահասների 2-րդ խումբ, % |
| 1.Նկարի փոփոխման չափանիշները | Փոխում է ամբողջությամբ | 28% | 25% |
| | Փոխում է մասնակիորեն | 72% | 75% |
| 2.Պատկեր գունային փոփոխություն | Պահպանում է նախնական տարբերակը | 63% | 61% |
| | Փոփոխում է դեպի վառ գույներ | 15% | 18% |
| | Փոփոխում է դեպի մուգ գույներ | 22% | 21% |
| 3, Սիմվոլներ | Ավելացնում է կրոնական սիմվոլներ | 17% | 13% |
| | Պակաեցնում է կրոնական սիմվոլներ | 9% | 10% |
| | Պահպանում է կրոնական սիմվոլներ | 74% | 77% |
| | Ավելացնում է էթնիկական սիմվոլնր | 14% | 17% |
| | Պակասեցնում է էթնիկական սիմվոլներ | 15% | 10% |
| | Պահպանում է էթնիկական սիմվոլներ | 71% | 82% |

*Աղյուսակ 12. «Էթնիկական և կրոնական պատկերների հետ նույնացման հոգեախտորոշիչ էքսպրես մեթոդիկա»-յի միջինացված տոկոսային արտահայտվածությունը*

| Նկարի գնահատման չափանիշներ | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված աղանդավոր դեռահասների խմբեր | | Հետազոտված ասորի դեռահասների խմբեր | |
|---|---|---|---|---|---|
| | | Դեռահասների 1-ին խումբ, % | Դեռահասների 2-րդ խումբ, % | Դեռահասների 1-ին խումբ, % | Դեռահասների 2-րդ խումբ, % |
| 1.Նկարի փոփոխման չափանիշները | **Փոխում է ամբողջությամբ** | 25% | 35% | 16% | 15% |
| | **Փոխում է մասնակիորեն** | 75% | 65% | 84% | 83% |
| 2.Պատկերի գունային փոփոխություն | **Պահպանում է նախնական տարբերակը** | 34% | 35% | 46% | 48% |
| | **Փոփոխում է դեպի վառ գույներ** | 35% | 27% | 28% | 31% |
| | **Փոփոխում է դեպի մուգ գույներ** | 31% | 38% | 26% | 21% |
| 3, Սիմվոլներ | **Ավելացնում է կրոնական սիմվոլներ** | 39% | 32% | 22% | 24% |
| | **Պակասեցնում է կրոնական սիմվոլներ** | 21% | 26% | 14% | 20% |
| | **Պահպանում է կրոնական սիմվոլներ** | 40% | 42% | 64% | 56% |
| | **Ավելացնում է էթնիկական սիմվոլնր** | 15% | 27% | 26% | 32% |
| | **Պակասեցնում է էթնիկական սիմվոլներ** | 41% | 45% | 11% | 8% |
| | **Պահպանում է էթնիկական սիմվոլներ** | 44% | 28% | 63% | 60% |

*Աղյուսակ 13. «Էթնիկական և կրոնական պատկերների հետ նույնացման հոգեախտորոշիչ էքսպրես մեթոդիկա»-յի միջինացված տոկոսային արտահայտվածությունը*

| Նկարի գնահատման չափանիշներ | Ընդգծված նախանշաններ | Հետազոտված աղանդավոր դեռահասների խմբեր | | Հետազոտված ասորի դեռահասների խմբեր | |
|---|---|---|---|---|---|
| | | Դեռահասների 1-ին խումբ, % | Դեռահասների 2-րդ խումբ, % | Դեռահասների 1-ին խումբ, % | Դեռահասների 2-րդ խումբ, % |
| **1.Նկարի փոփոխման չափանիշները** | **Փոխում է ամբողջությամբ** | 25% | 35% | 16% | 15% |
| | **Փոխում է մասնակիորեն** | 75% | 65% | 84% | 83% |
| **2.Պատկերի գունային փոփոխություն** | **Պահպանում է նախնական տարբերակը** | 34% | 35% | 46% | 48% |
| | **Փոփոխում է դեպի վառ գույներ** | 35% | 27% | 28% | 31% |
| | **Փոփոխում է դեպի մուգ գույներ** | 31% | 38% | 26% | 21% |
| **3, Սիմվոլներ** | **Ավելացնում է կրոնական սիմվոլներ** | 39% | 32% | 22% | 24% |
| | **Պակասեցնում է կրոնական սիմվոլներ** | 21% | 26% | 14% | 20% |
| | **Պահպանում է կրոնական սիմվոլներ** | 40% | 42% | 64% | 56% |
| | **Ավելացնում է էթնիկական սիմվոլնր** | 15% | 27% | 26% | 32% |
| | **Պակասեցնում է էթնիկական սիմվոլներ** | 41% | 45% | 11% | 8% |
| | **Պահպանում է էթնիկական սիմվոլներ** | 44% | 28% | 63% | 60% |

Էթնիկ և կրոնական ես-երի ամբողջականությունը բացահայտելու նպատակով կիրառվել է մեկ այլ մեթոդական մշակում, որն եկավ հավելելու հետազոտության երկրորդ փուլում ստացված արդյունքները: **«Էթնոմետ դիրքորոշումների ախտորոշումը բաց հարցերի միջոցով»** մեթոդիկայի ընդգրկումը փորձարարական հետազոտության շրջանակներում կրկին ստուգման ենթարկեց նախկինում ստացված արդյունքները և թույլ տվեց նրանք համարել հավաստի և ապացուցելի: Հարցվողներին առաջադրվել էր մեկնաբանել մի շարք հարցադրումներ, որոնք կապված էին անձի էթնոմետ դիրքորոշումների, նրանցում էթնիկական և կրոնական Ես-պատկերների համակցվածության և էթնոկրոնական ինքնության ձևավորմանը նպաստող ու դեռահասների կարիերայի պլանավորմանը նպաստող սոցիալականացման կրթական ինստիտուտների դերակատարությանը:

Բաց հարցերի բովանդակությունը միտված էր բացահայտելու էթնիկական և կրոնական ես-պատկերների կառուցվածքային բաղադրիչները, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ վեր հանելու նրանցում նկատվող փոխկապակցվածությունը: Այդ դիտողությունը լավագույնս ներկայացնում է էթնոկրոնական ինքնության համալիր կառուցվածքը: Ուստի, ազգային և կրոնական ես-պատկերները լուսաբանող հարցերը տրվել են՝ բաժանված բաղադրիչների երեք խմբերի՝ կոգնիտիվ (իմացական), աֆեկտիվ (զգացմունքային) և վարքային: Այդ բաժանումը համադրելի է նախորդ փուլում իրականացված «Անձի էթնիկական և կրոնական ինքնության ախտորոշման» մեթոդիկայի կառուցվածքային բովանդակությանը: Այսպես, «Էթնիկական ես-ի նկատմամբ վերաբերմունքը» ենթադրում է համապատասխան գիտելիքի առկայություն տվյալ էթնիկ խմբի վերաբերյալ, որն էլ բնութագրենք էթնիկական ես-ի իմացական բաղադրիչով: «Էթնիկական ես-ի ակտիվության» ցուցանիշը այստեղ արտահայտվում է վարքային բաղադրիչի միջոցով, իսկ «կրոնական ես-ի գնահատականը»՝ համապատասխանաբար, զգացմունքային բաղադրիչով: Գրանցված բոլոր պատասխանները խմբաավորվել և ենթարկվել են հա-

մահարաբերակցական վերլուծության, որն արտահայտիչ կերպով ցուցադրել է տվյալների կոռելյացիոն կապերը:

Տվյալները գրանցվել են հետևյալ 5 չափորոշիչների շնորհիվ (հավելված 4):

**«Ցանցային ախտորոշման» քարտի արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծություն**

Ստորև ներկայացված է «Ցանցային ախտորոշման» քարտի մշակված արդյունքները (հավելված ցանց):

Մեթոդիկայի առաջին կետում մեր կողմից կարևորվում էր հետազոտված դեռահասների սեռադիրքային լոկալիզացիան, ինչը պատկերավոր ձևով ներկայացրել ենք հետևյալ նկարում:

**Նկար 1.Ցանցային ախտորոշման քարտի արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծության տվյալները**

Երկէթնիկ ինքնություն (Էթնիկ ինքնության բովանդակային բաղադրիչը չի համընկնում ասկրիպտիվ բաղադրիչի հետ) **Եզդիներ, ասորիներ (60,3%)**

Մոնոէթնիկ ինքնություն (Էթնիկ ինքնության բովանդակային բաղադրիչը համընկնում է ասկրիպտիվ բաղադրիչի հետ) **Հայեր, սիրիահայեր, մոլոկաններ (80,2%)**

Մոնոէթնիկ աղավաղված ինքնություն (Էթնիկ ինքնության բովանդակային բաղադրիչը թույլ է արտահայտված ասկրիպտիվ բաղադրիչի նկատմամբ: Մոնոէթնիկ ինքնությունը ստվերվում է կրոնական աղավաղված պատկանելիությամբ)**Աղանդավորներ (70%)**

Ինչպես երևում է նկարում զետեղված տոկոսային տվյալներից, մոնոէթնիկ ինքնությունը ամրակայվում է կրոնական ես-ի գիտակցվածության աստիճանով, և հակառակը: Հաջորդ կետում մեր կողմից ամփոփվել է դեռահասների կրոնական և էթնիկական պատկանելիությամբ պայմանավորված ես-պատկերների թե առանձին, թե միասնական փոխազդեցությունը և հետագայում, որպես ամբողջական, ի հայտ գալը:

Ինչպես երևում է վերը ներկայացված երկու նկարներում, բոլոր ընտրախմբերում խիստ արտահայտված են ներէթնիկ փոխհարաբերությունները: Հաղորդակցման պասիվ դիրքում են գտնվում աղանդավորները, որոնց այս պատկերը ևս ապացուցում է էթնոկրոնական ստվերային ինքնությամբ պայմանավորված էթնոմեկուսացման և էթնոօտարման երևույթների դրսևորմանը, ինչը պետք է անհանգստացնի դեռահասների սոցիալականացման ոլորտի ներկայացուցիչներին: Հատկանշական է նաև, որ նրանք ներէթնիկ փոխհարաբերությունները բացարձակապես նկարագրում են միևնույն կրոնական ուվածության կողմնակից լինելու փաստով: Թերևս, դիտարկման ընթացքում նկատվել են աղանդավորների և այլ ընտրախմբերի փոխհարաբերությունների բազմաթիվ դեպքեր, այդուհանդերձ, ուշագրավ է այն փաստը, որ առաջինների կողմից մատնանշվում են միայն կրոնական նույն պատկանելիությամբ պայմանավորված կապերը: Դա խոսուն փաստ է կարծրատիպային պատկերացումների ձևավորման և տեղայնացման դեռահասի արժեհամակարգում: Նման պարփակ, էթնոկրոնական առումով ստատիկ կարգավիճակում են նաև մոլոկանների խումբը: Սակայն, կարող ենք տեսնել նրանց ներէթնիկ կապերի արտահայտման որոշակի առանձնահատկություն: Մոլոկանները իրենց ներէթնիկ փոխհարաբերությունները կարևորում են ոչ միայն կրոնական պատկանելիության սկզբունքով (ինչպես դա երևում էր աղանդավորների մոտ), այլև՝ էթնիկական և կրոնական ինքնության նույնացմամբ: Ասորիների ներէթնիկ շփումները հիմնականում արտահայտվել են էթնոկրոնական ինքնության առաջնահերթությամբ, թեև նկատվել է միջէթնիկ հարաբերությունների պասիվություն: Եզդիների շփումների բնույթը գրեթե հավասարաչափ բաշխված է բոլոր հատկանիշների միջև. նրանք միաժամանակ կարևորել են թե էթ-

նիկական, թե կրոնական և թե՝ էթնոկրոնական (որպես երկուսի ամբող-ջություն) ինքնության առկայությունը ներէթնիկ փոխհարաբերություննե-րում: Սակայն, հայերի հետ շփվելիս, գերազանցում է վերջիններիս հետ կրոնական նույնականության իրենց գիտակցումը: Հայ դեռահասների առավել ակտիվ շփումները գրանցվել են սիրիահայերի հետ, որոնք գե-րազանցապես կրում էին, ի տարբերություն հայ-եզդի փոխհարաբերու-թյունների, էթնոկրոնական ինքնության վառ արտահայտված պատկեր:

Այսպիսով, փորձարարական հետազոտության հիմնական արդ-յունքները վկայում են նրա մասին, կրոնական ես-ը ազգային ես-պատ-կերի կարևոր համալրում է, դարձնում է այն ավելի ամբողջական՝ ձևա-վորելով էթնոկրոնական ինքնության բովանդակային կառուցվածքը: Արդյունքների վերջնական ամփոփման, օրինաչափություններ դուրս բե-րելու և առավել մանրամասն տեղեկություն ստանալու նպատակով ան-հրաժեշտություն ծագեց կիրառել համահարաբերակցական վերլուծու-թյուն՝ համակարգչային SPSS 16.0 ծրագրով (հավելված 8):

Ստորև բերվում է պիլոտային, դեռահասների երկու խմբերի և ստու-գիչ խմբի էթնիկական ու կրոնական ես-պատկերների միջինացված թվային տվյալների գրաֆիկական պատկերը:




***Գծապատկեր 5. Էթնիկական և կրոնական ես-պատկերների բարձր հաճախականության միջինացված փվյալների դինամիկայի գրաֆիկական պատկեր***

Համահարաբերակցական վերլուծության արդյունքում տոկոսային արտահայտություններով ստորև ներկայացվում են էթնոկրոնական ինքնության բաղադրատարրեր կազմող կրոնական ես-պատկերների ցուցանիշները, որոնք լրացված են էթնիկական ես-պատկերների համալիր պատկերով: 5 բալանոց միջինացված սանդղակի միջոցով բացահայտվեցին էթնիկական ես-ի կոգնիտիվ բաղադրիչի գնահատման ցածր միավորի (2) առավել հաճախ հանդիպող դեպքերը: Գրեթե նույն դիրքում է նաև կրոնական ես-ի կոգնիտիտվ բաղադրիչի սանդղակը: Երկրորդ զույգ բաղադրիչների՝ էթնիկական և կրոնական աֆեկտիվ ես-երի գնահատման հաճախականությունը ավելի բարձր է (համապատասխանաբար՝ 4 և 5 միավորների միջակայքում), ինչը խոսում է զգացմունքային առումով բավական վառ արտահայտված էթնոկրոնական ինքնության դրսևորումներին: Եվ, վերջապես, երրորդ զույգ հատկանիշների ցուցանիշները, որոնք վերաբերում են էթնոկրոնական ինքնության վարքային արտահայտություններին, ունեն հետևյալ պատկերը՝ էթնիկական ես-ի

վարքային միավորների ցրվածությունը բավական մեծ է (2-5 միավորների միջակայքում) և գրեթե նույն հաճախականությամբ, իսկ կրոնական ես-ի դեպքում՝ առանձնանում է բարձր ակտիվություն ենթադրող 4-րդ միավորի ցուցանիշը: Այս տոկոսային տվյալները ևս մեկ անգամ ապացուցում են դեռահասության տարիքի սկզբում էթնոկրոնական ինքնության իմացական բաղադրիչի թերի ձևավորման և նրանում՝ ինքնության ստվերման վտանգի  իրողությունը: Այստեղ է, որ կարևորվում է կրթության գործառնությունը դեռահասների իմացական դաշտի այս բացը լրացնելու և ամբողջական ինքնություն ձևավորելու գործում: Այս տվյալները վկայում են նաև էթնիկական և կրոնական ես-պատկերների փոխկապակցվածության և համակցվածության մասին: Ապացուցվել են էթնիկական և կրոնական ես-երի վերոհիշյալ  ցուցանիշները (տես՝ «Էթնիկական և կրոնական ես- պատկերների ախտորոշման» մեթոդիկայի արդյունքները): Կարող ենք եզրակացնել այդ ցուցանիշների համալիր կառուցվածքային բնույթի մասին, ինչին վկայում են դեռահասների գնահատականներում էթնիկական և կրոնական ես-երի փոխըմբռնումը և մեկի մասին վերաբերմունքի արտահայտումը մյուսի միջոցով: Այսպես, օրինակ, դեռահասները հաճախ էթնիկական իրենց պատկանելիությունը փորձում են բացատրել կրոնական պատկանելիությամբ, և հակառակն: Բացառություն են կազմում աղանդավոր դեռահասների երկու տարիքային խմբերը, որտեղ շատ թույլ են արտահայտված էթնիկական բաղադրիչները՝ ի տարբերություն կրոնական խմբային ակտիվության և զգացմունքայնության: Այս վտանգավոր միտումները տեղիք են տալիս մտահոգվելու և ուշադրության կենտրոնում պահելու էթնոկրոնական ինքնության, այլ խոսքերով, էթնիկական և կրոնական ես-երի համաչափ դրսևորման, նրանց համակցվածության ուսումնասիրության խնդիրները: Կարևոր է նաև նշել էթնիկական և կրոնական իրազեկության ձևավորման հարցում   սոցիալականացման կրթական ինստիտուտների գործառնության կարևորության մասին պատասխանների գերակշիռ հատվածը: Դա նույնպես վկայում է ուսումնադաստիարակչական համապատասխան գործընթացների շնորհիվ էթնոկրոնական ինքնության ամրակայմանն ուղղված ակնկալվող  ազդեցությունը:

## Ես-պատկերների համահարաբերակցական վերլուծության արդյունքները

| Էթնիկական ես-ի կոգնիտիվ բաղադրիչ (պիլոտային խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 1 | 1 | .7 | 16.7 | 16.7 |
| | 2 | 4 | 2.7 | 66.7 | 83.3 |
| | 3 | 1 | .7 | 16.7 | 100.0 |
| | Ընդ. | 6 | 4.1 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի աֆեկտիվ բաղադրիչ (պիլոտային խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 2 | 1.4 | 33.3 | 33.3 |
| | 4 | 4 | 2.7 | 66.7 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 4.1 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի վարքային բաղադրիչ (պիլոտային խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 2 | 3 | 2.0 | 50.0 | 50.0 |
| | 3 | 3 | 2.0 | 50.0 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 4.1 | 100.0 | |

| Կրոնական ես-ի կոգնիտիվ բաղադրիչ (պիլոտային խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 1 | 2 | 1.4 | 33.3 | 33.3 |
| | 2 | 4 | 2.7 | 66.7 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 4.1 | 100.0 | |

| Կրոնական ես-ի աֆեկտիվ բաղադրիչ (պիլոտային խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 3 | 2.0 | 50.0 | 50.0 |
| | 4 | 3 | 2.0 | 50.0 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 4.1 | 100.0 | |

| Կրոնական ես-ի վարքային բաղադրիչ (պիլոտային խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 2 | 3 | 2.0 | 50.0 | 50.0 |
| | 3 | 3 | 2.0 | 50.0 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 4.1 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի կոգնիտիվ բաղադրիչ (դեռահասների 1 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախակա-նություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 2 | 10 | 6.8 | 41.7 | 41.7 |
| | 3 | 5 | 3.4 | 20.8 | 62.5 |
| | 4 | 7 | 4.8 | 29.2 | 91.7 |
| | 5 | 2 | 1.4 | 8.3 | 100.0 |
| | **Ընդ.** | 24 | 16.3 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի աֆեկտիվ բաղադրիչ (դեռահասների 1 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախակա-նություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 2 | 2 | 1.4 | 8.3 | 8.3 |
| | 3 | 7 | 4.8 | 29.2 | 37.5 |
| | 4 | 7 | 4.8 | 29.2 | 66.7 |
| | 5 | 8 | 5.4 | 33.3 | 100.0 |
| | **Ընդ.** | 24 | 16.3 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի վարքային բաղադրիչ (դեռահասների 1 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախակա-նություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 1 | 2 | 1.4 | 8.3 | 8.3 |
| | 2 | 5 | 3.4 | 20.8 | 29.2 |
| | 3 | 6 | 4.1 | 25.0 | 54.2 |
| | 4 | 4 | 2.7 | 16.7 | 70.8 |
| | 5 | 7 | 4.8 | 29.2 | 100.0 |
| | Ընդ. | 24 | 16.3 | 100.0 | |

| Կրոնական ես-ի կոգնիտիվ բաղադրիչ (դեռահասների 1 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 1 | 3 | 2.0 | 12.5 | 12.5 |
| | 2 | 7 | 4.8 | 29.2 | 41.7 |
| | 3 | 5 | 3.4 | 20.8 | 62.5 |
| | 4 | 5 | 3.4 | 20.8 | 83.3 |
| | 5 | 4 | 2.7 | 16.7 | 100.0 |
| | Ընդ. | 24 | 16.3 | 100.0 | |

| Կրոնական ես-ի աֆեկտիվ բաղադրիչ (դեռահասների 1 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 8 | 5.4 | 33.3 | 33.3 |
| | 4 | 10 | 6.8 | 41.7 | 75.0 |
| | 5 | 6 | 4.1 | 25.0 | 100.0 |
| | Ընդ. | 24 | 16.3 | 100.0 | |

| Կրոնական ես-ի վարքային բաղադրիչ (դեռահասների 1 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախակա-նություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 2 | 2 | 1.4 | 8.3 | 8.3 |
| | 3 | 4 | 2.7 | 16.7 | 25.0 |
| | 4 | 13 | 8.8 | 54.2 | 79.2 |
| | 5 | 5 | 3.4 | 20.8 | 100.0 |
| | Ընդ. | 24 | 16.3 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի կոգնիտիվ բաղադրիչ (դեռահասների 2 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| **Միավոր** | 2 | 2 | 1.4 | 16.7 | 16.7 |
| | 3 | 7 | 4.8 | 58.3 | 75.0 |
| | 4 | 3 | 2.0 | 25.0 | 100.0 |
| | **Ընդ.** | 12 | 8.2 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի աֆեկտիվ բաղադրիչ (դեռահասների 2 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճաախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| **Միավոր** | 3 | 1 | .7 | 8.3 | 8.3 |
| | 4 | 5 | 3.4 | 41.7 | 50.0 |
| | 5 | 6 | 4.1 | 50.0 | 100.0 |
| | **Ընդ.** | 12 | 8.2 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի վարքային բաղադրիչ (դեռահասների 2 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 3 | 2.0 | 25.0 | 25.0 |
| | 4 | 7 | 4.8 | 58.3 | 83.3 |
| | 5 | 2 | 1.4 | 16.7 | 100.0 |
| | **Ընդ.** | 12 | 8.2 | 100.0 | |

| Կրոնական ես-ի կոգնիտիվ բաղադրիչ (դեռահասների 2 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 1 | 1 | .7 | 8.3 | 8.3 |
| | 2 | 2 | 1.4 | 16.7 | 25.0 |
| | 3 | 5 | 3.4 | 41.7 | 66.7 |
| | 4 | 2 | 1.4 | 16.7 | 83.3 |
| | 5 | 2 | 1.4 | 16.7 | 100.0 |
| | **Ընդ.** | 12 | 8.2 | 100.0 | |

| Կրոնական ես-ի աֆեկտիվ բաղադրիչ (դեռահասների 2 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 2 | 1.4 | 16.7 | 16.7 |
| | 4 | 6 | 4.1 | 50.0 | 66.7 |
| | 5 | 4 | 2.7 | 33.3 | 100.0 |
| | **Ընդ.** | 12 | 8.2 | 100.0 | |

| Կրոնական ես-ի վարքային բաղադրիչ (դեռահասների 2 խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 1 | .7 | 8.3 | 8.3 |
| | 4 | 8 | 5.4 | 66.7 | 75.0 |
| | 5 | 3 | 2.0 | 25.0 | 100.0 |
| | **Ընդ.** | 12 | 8.2 | 100.0 | |

| Կրոնական ես-ի կոգնիտիվ բաղադրիչ (ստուգիչ խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 1 | 16.7 | 16.7 | 16.7 |
| | 4 | 4 | 66.7 | 66.7 | 83.3 |
| | 5 | 1 | 16.7 | 16.7 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 100.0 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի աֆեկտիվ բաղադրիչ (ստուգիչ խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 4 | 1 | 16.7 | 16.7 | 16.7 |
| | 5 | 5 | 83.3 | 83.3 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 100.0 | 100.0 | |

| Էթնիկական ես-ի վարքային բաղադրիչ (ստուգիչ խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 1 | 16.7 | 16.7 | 16.7 |
| | 4 | 4 | 66.7 | 66.7 | 83.3 |
| | 5 | 1 | 16.7 | 16.7 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 100.0 | 100.0 | |

| Կրոնական ես-ի կոգնիտիվ բաղադրիչ (ստուգիչ խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 3 | 2 | 33.3 | 33.3 | 33.3 |
| | 4 | 4 | 66.7 | 66.7 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 100.0 | 100.0 | |

| Կրոնական ես-ի աֆեկտիվ բաղադրիչ (ստուգիչ խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 4 | 5 | 83.3 | 83.3 | 83.3 |
| | 5 | 1 | 16.7 | 16.7 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 100.0 | 100.0 | |

| Կրոնական ես-ի վարքային բաղադրիչ (ստուգիչ խումբ) | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախականություն | Տոկոս | Նշանակալի տոկոս | Հավաքական տոկոս |
| Միավոր | 4 | 4 | 66.7 | 66.7 | 66.7 |
| | 5 | 2 | 33.3 | 33.3 | 100.0 |
| | **Ընդ.** | 6 | 100.0 | 100.0 | |

## Էթնոկրոնական ինքնության ձևավորմանն ուղղված մեթոդական հանձնարարականներ

Ուսումնասիրության փորձարարական քննության հիման վրա մշակվել են էթնոկրոնական ինքնության ամրակայմանն ուղղված մեթոդական հանձնարարականներ կրթական ոլորտի պատասխանատուների համար:

Հանձնարարականների նպատակն է՝

1. Մեթոդապես հիմնավորել կրթական ոլորտի պատասխանատուների աշխատանքի բնույթն ու ուղղվածությունը:

- Ընդլայնել դեռահասների գիտելիքները սեփական էթնիկական պատկանելիության ու նրա կրոնի, անցյալի ու ներկայի մասին,
- Ուղորդել դեռահասների հետ տարվող ուսումնադաստիարակչական գործունեությունը,
- Մեծացնել արտաուսումնական միջոցառումներում դեռահասների ընդգրկվածությունը,
- Հստակեցնել ուսումնական ծրագրերի էթնոմետ դիրքորոշումները,
- Ընդլայնել դեռահասների հետաքրքրվածությունը սեփական էթնիկական խմբի անցյալի ու ներկայի նկատմամբ:
- Կազմակերպել (անհրաժեշտության դեպքում) ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Ելնելով ուսումնասիրության ընդհանուր նպատակներից և առաջադրված խնդիրներից՝ մշակվել են հանձնարարականներ ուսուցիչների և կրթական ոլորտի պատասխանատուների համար:

Դեռահասի էթնոկրոնական ինքնության ձևավորման ու ամրակայման նպատակով անհրաժեշտ է ուղղորդել առարկայական որոշակի

ծրագրերի ուղղվածությունը էթնոմետ դիրքորոշման դաստիարակության ուղղությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալականացման կրթական ինստիտուտներում էթնոկրոնական ինքնության ամրակայումը կարող է ուղորդել տարէթնիկ սոցիալականացման բացասական ներուժի մարմանը, ուսումնամեթոդական ձեռնարկի հեղինակների կողմից ներկայացվում են հետևյալ *առաջարկությունները*՝

1. Ուսումնասիրության վերլուծությունն ու գրանցված արդյունքները կարող են մեթոդական ուղեցույց ծառայել հետագա գիտական ուսումնասիրությունների իրականացման համար;

2. Ուսումնասիրության եզրակացությունները կարող են ընդգրկվել «Էթնոհոգեբանություն» առարկայի որոշ բաժիններում և ներկայացվել գիտական լսարանին համապատասխան դասախոսության տեսքով;

3.«Էթնոկրոնական ինքնություն» եզրույթի համալիր կառուցվածքից ելնելով՝ կազմվել են հանձնարարականներ կրթական ոլորտի պատասխանատուներին, որի համար հիմք են ծառայել էթնոկրոնական ինքնության բաղադրիչների նկարագրության համաձայն **«Էթնոմետ դիրքորոշումների ախտորոշումը բաց հարցերի միջոցով»** մեթոդիկայի տվյալները.

- **Իմացական բաղադրիչ**, որի հիմքում ընկած են էթնիկական և կրոնական իրազեկության բարձրացման աշխատանքները.

1. Հանձնարարել կազմակերպելու համապատասխան ուսումնական և դաստիարակչական միջոցառումներ (օրինակելի դասեր, դասղեկի ժամեր, համադպրոցական միջոցառումներ)՝ դեռահասների էթնոկրոնական ինքնության և էթնոմետ դիրքորոշումների ձևավորման նպատակով:

2. Հիմք ընդունելով «Հայոց պատմություն» առարկայի չափորոշիչները և ծրագիրը՝ «Հայոց պատմության» առարկայի խնդիրները լրամշակել և

ներկայացնել էթնիկ ինքնության ձևավորման պատմական ուղին և էթնոկրոնական ինքնության դերը նրանում, իսկ դասավանդման նպատակները լրամշակել և ներկայացնել էթնիկ ինքնագիտակցության ձևավորումը և զարգացումը պայմանավորող նախադրյալները, ինչպես նաև՝ կրոնի դերը էթնիկական ինքնագիտակցության և էթնոմետ դիրքորոշումների ձևավորման վրա:

- **Զգացմունքային բաղադրիչ**, որի հիմքում դիտվում է սեփական էթնիկական խմբին և կրոնին պատկանելիության զգացումի էմոցիոնալ դրական միտվածությունը, հանձնարարել դպրոցի հոգեբանին.

1. Հոգեթերապևտիկ աշխատանքներ իրականացնել աղանդավոր դեռահասների էթնիկական ես-ի գնահատականը բարձրացնելու նկատառումով, ինչը կարող է նպաստել էթնոկրոնական ստվերային ինքնության շտկմանը,

2. Հոգեթերապևտիկ աշխատանքներ իրականացնել սիրիահայ դեռահասների հետ միգրացիոն փուլում էթնիկական և կրոնական լավատեսության միտումները պահպանելու, ինչպես նաև էթնիկական վախերից ու տագնապներից ազատվելու նպատակով (այդ աշխատանքները նպատակահարմար է իրականացնել նաև 2020 թ. պատերազմական գործողություններից հետո ՀՀ տարբեր մարզերում բնակություն հաստատած արցախահայ դեռահասների հետ),

3. Սեփական էթնիկական խմբի ու կրոնի նկատմամբ անտարբերության զգացումի հաղթահարմանն ուղղված համապատասխան աշխատանքներ իրականացնել դպրոցի ուսուցիչների հետ համատեղ:

- **Վարքային բաղադրիչ**, որի հիմքում ընկած է թե անհատական և թե խմբային ակտիվ ընդգրկվածությունը սեփական էթնիկական խմբի ու կրոնի ներկայիս դրսևորումներում.

1. Ի նկատի ունենալով, որ, ինչպես պարզվեց, նույնականացման ծայրահեղ դրսևորումները արտահայտվում են այն ժամանակ, երբ նվազում է էթնիկական դրական նույնականացման ցուցանիշը, ոլորտի պատաս-

խանատուներին կազմակերպել պարբերական մոնիթորինգներ՝ բացահայտելու դեռահասների շրջանում տարածվող միտումները, և ընդգրկել նրանց համապատասխան թրեյնինգների և այլ միջոցառումների մեջ:

2. Հանձնարարել դպրոցի ուսուցիչներին և հոգեբանին ուսումնադաստիարակչական և հոգեբանական խմբային աշխատանքներ իրականացնել էթնիկական ճկունության, հաղորդակցության էթնոմետ դրսևորումների ձևավորման ուղղությամբ:

## ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

### «Էթնիկական նույնականության տիպերը» մեթոդական մշակում[149]

Հրահանգ՝ Ստորև ներկայացվում են միջազգային հարաբերությունների և ազգային մշակույթի վերաբերյալ տարբեր մարդկանց կարծիքները: Մտածեք, թե որքանով է Ձեր սեփական կարծիքը համընկնում նրանց կարծիքի հետ: Գրավոր արտահայտեք Ձեր համաձայնությունը կամ անհամաձայնությունը:

| **Ես այնպիսի մարդ եմ, որը** | Համաձայն եմ | Այնելի շուտ համաձայն եմ | Ինչ-որ տեղ համաձայն եմ, իսկ ինչ-որ տեղ՝ ոչ | Այնելի շուտ համաձայն չեմ | Համաձայն չեմ |
|---|---|---|---|---|---|
| 1.Նախընտրում է սեփական ազգի ապրելակերպը, բայց մեծ հետաքրքրությամբ է վերաբերվում այլ ազգերի նկատմամբ | | | | | |
| 2.Գտնում է, որ տարէթնիկ ամուսնությունները «քանդում» են ազգը | | | | | |
| 3.Հաճախ զգում է այլազգի ներկայացուցիչների գերազանցությունը | | | | | |
| 4.Գտնում է, որ ազգի իրավունքները մարդու իրավունքներից բարձր են | | | | | |
| 5.Գտնում է, որ առօրյա շփման մեջ ազգությունը նշանակություն չունի | | | | | |
| 6.Նախընտրում է միայն սեփական ազգի ապրելակերպը | | | | | |
| 7.Սովորաբար չի թաքցնում իր ազգությունը | | | | | |
| 8.Գտնում է, որ իսկական ընկերությունը կարող է լինել միայն նույն ազգի ներկայացուցիչների միջև | | | | | |
| 9.Հաճախ ամաչում է իր ազգի ներկայացուցիչների համար | | | | | |
| 10.Գտնում է, որ ազգի շահերի պահպանման համար բոլոր միջոցները լավ են | | | | | |
| 11.Նախապատվություն չի տալիս որևէ ազգին, ներառյալ սեփականը | | | | | |
| 12.Հաճախ զգում է սեփական ազգի գերազանցությունը մյուսների նկատմամբ | | | | | |
| 13.Սիրում է իր ազգը, բայց և հարգում է այլ | | | | | |

[149] Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Եր., 2002, 392 էջ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ազգերի լեզուն ու մշակույթը | | | | | |
| 14.Խիստ անհրաժեշտ է համարում պահպանել ազգի մաքրությունը | | | | | |
| 15.Դժվարությամբ է հարմարվում սեփական ազգի ներկայացուցիչների հետ | | | | | |
| 16.Գտնում է, որ այլազգի ներկայացուցիչների հետ փոխազդեցությունը հաճախ հղի է տհաճ հետևանքներով | | | | | |
| 17.Անտարբերությամբ է վերաբերվում սեփական ազգային պատկանելությանը | | | | | |
| 18.Լարվածություն է զգում, երբ կողքին օտար լեզու է լսում | | | | | |
| 19.Պատրաստ է գործ ունենալ ցանկացած ազգի ներկայացուցչի հետ | | | | | |
| 20.Գտնում է, որ իր ազգն իրավունք ունի պրոբլեմները լուծել այլ ազգերի հաշվին | | | | | |
| 21.Հաճախ անլիարժեքություն է զգում սեփական ազգային պատկանելության համար | | | | | |
| 22.Գտնում է, որ իր ազգն ավելի օժտված է ու զարգացած, քան մյուսները | | | | | |
| 23.Գտնում է, որ այլազգի մարդկանց բնակության իրավունքները պետք է սահմանափակվեն իր երկրի տարածքում | | | | | |
| 24.Նյարդայնանում է այլազգիների հետ շփվելիս | | | | | |
| 25.Միշտ հնարավորություն է գտնում տարէթնիկ վեճերը հարթելու համար | | | | | |
| 26.Անհրաժեշտ է համարում մաքրել սեփական մշակույթը օտար մշակույթների ազդեցությունից | | | | | |
| 27.Չի հարգում իր ազգին | | | | | |
| 28.Գտնում է, որ իր երկրի վրա բնական և հասարակական ռեսուրսներից օգտվելու իրավունքը պետք է պատկանի միայն իր ազգին | | | | | |
| 29.Երբեք լուրջ չի վերաբերվել միջազգային պրոբլեմներին | | | | | |
| 30.Գտնում է, որ իր ազգը մյուսներից ոչ լավն է, ոչ վատը | | | | | |

Դիտարկվում են էթնիկական նույնականության հետևյալ տիպերը՝ էթնոնիհիլիզմ՝ 3, 9, 15, 21, 27, էթնիկական անտարբերություն՝ 5, 11, 17, 28, 30, նորմա կամ դրական էթնիկական նույնականություն՝ 1, 7, 13, 19, 25, էթնոէգոիզմ՝ 6, 12, 16, 18, 24, էթնոմեկուսացում՝ 2, 8, 20, 22, 26, ազգային ֆանատիզմ՝ 4, 10, 14, 23, 29:

## «Էթնիկական աֆիլիացիա» մեթոդական մշակում[150]

| | Համաձայն եմ | Համաձայն չեմ | Չգիտեմ |
|---|---|---|---|
| 1.Անհրաժեշտ է ձգտել պահպանել սեփական ազգի կենսակերպը,ավանդույթներն ու սովորույթները | | | |
| 2.Սեփական արարքներում պետք է առաջնորդվել ավելի շուտ անձնային շահերով, քան թե որևէ այլ, այդ թվում և ազգային շահերով | | | |
| 3.Ներընտանեկան փոխըմբռնումը կախված չէ ընտանիքի անդամների ազգային պատկանելությունից | | | |
| 4.Յուրաքանչյուր անձ իր մեջ կրում է իր ազգի սխալների մեղքի մի մասը | | | |
| 5.Ժամանակակից մարդու համար ազգությունը պետք է նշանակություն չունենա | | | |
| 6.Կյանքում պետք է առաջնորդվել այն նորմերով, որոնք ձևավորվել են սեփական մշակույթում | | | |
| 7.Միևնույն կրոնը դավանող ազգերի համար հեշտ է միմյանց հասկանալ | | | |
| 8.Կյանքում պետք է ապրել սեփական խելքով, առանց հիմնվելու ազգի համար ընդունելի վարքի նորմերի և կանոնների վրա | | | |
| 9.Ազգային շահերը պետք է ավելի կարևոր լինեն, քան առանձի անհատի պրոբլեմներն ու շահերը | | | |
| 10.Ազգերի միջև փոխըմբռնումը կախված չէ նրանց դավանած կրոնից | | | |
| 11.Եթե ընտանիքում հայտնվի այլազգի մարդ, ապա դա կդժվարացնի փոխըմբռնումը | | | |
| 12.Մարդուն անհրաժեշտ է իրեն զգալ որևէ ազգի մաս | | | |
| 13.Երբեք չի կարելի ասել, թե առանձին անձն իր մեջ կրում է սեփական ազգի բնորոշ գծերը | | | |
| 14.Ժամանակակից մարդու համար պարտադիր չէ իրեն որևէ ազգի մաս զգալը | | | |
| 15.Մարդը մշտապես պետք է հիշի իր ազգության մասին | | | |
| 16.Առանձին անհատը չի կարող պատասխան տալ իր ազգի արարքների համար | | | |
| 17.Ազգային սովորույթներն ու ավանդական ապրելակերպը հնացել են և անհրաժեշտ չեն ժամանակակից մարդուն | | | |
| 18.Մարդու ազգության հետևում միշտ կարելի է տեսնել նրա ազգը | | | |

Էթնիկական պատկանելության բարձր պահանջմունք (էթնոաֆիլիատիվ միտումներ) արտացոլող ինդիկատորներն են 1, 4, 6, 7, 9, 11, 12, 15, 18: Ցածր էթնոաֆիլիատիվ պահանջմունքներն արտացոլող ինդիկատորներն են 2, 3, 5, 8, 10, 13, 14, 16, 17:

[150] Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Եր., 2002, 392 էջ:

**«Էթնոմետ դիրքորոշումների ախտորոշումը բաց հարցերի միջոցով»**

1. Նշիր քո ազգությունը: ________________________________________

2. Նշիր քո կրոնական պատկանելիությունը:

__________________________________________________________________

3. Նկարագրիր քո ազգությունը:

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

4. Նկարագրիր քո կրոնը: __________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

5. Նշիր 5 կարևոր էթնիկական (ազգային) հատկանիշ:

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

6. Նշիր 5 կարևոր կրոնական հատկանիշ:

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

__________________________________________________________________

7. Ո՞րն է կրոնական ծեսերի նշանակությունը քո համար:

8. Ե՞րբ և ումի՞ց ես իմացել քո կրոնի մասին:

9. Ե՞րբ և ումի՞ց ես իմացել այլ կրոնների մասին:

10. Եթե քրիստոնյա չլինեիր, ինչպիսի՞ն կլինեիր:

11. Ո՞վ է քրիստոնյա մարդու քո իդեալը:

12. Ինչպիսի՞ն ես դու քո կրոնի շնորհիվ:

13. Պատկերացրու, որ պետք է մի օտարերկրացու ներկայացնես քո երկիրը: Ի՞նչ կպատմես նրան քո ազգի մասին:

14. Ի՞նչ կպատմես նույն օտարերկրացուն քո կրոնի մասին:

15. Մասնակցո՞ւմ ես արդյոք ազգային տոնակատարություններին:

Պատմիր մեկի մասին:

16. Մասնակցում ես արդյոք կրոնական որևէ ծեսերին: Պատմիր մեկի մասին:

